ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ 1860-1863 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ - 2023

9(47.925)
Կ-77
Կ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ (1860-1863 ԹԹ.)

6571

«Ազգային սահմանադրության»
վավերացման 160-ամյակի առթիվ

ՀՀ ԳԱԱ Բ. Ալեքսանյանի անվան ... 2017

ՆԺԱՐ
ԵՐԵՎԱՆ 2023

ՀՏԴ 94(479.25):342
ԳՄԴ 63.3(5Հ)+67.400
Հ 177

Գ ր ա խ ո ս ն ե ր՝
Արթուր Վաղարշյան՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ.
Սուրեն Սարգսյան՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.
Աշոտ Ներսիսյան՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Ալբերտ Խառատյան

Հակոբյան Արարատ
Հ 177 Արևմտահայոց Ազգային սահմանադրությունը Հայոց պետականության գաղափարի հոլովույթում (1860–1863 թթ.), «Ազգային սահմանադրության» վավերացման 160-ամյակի առթիվ, խմբ.՝ **Ալ. Խառատյան.** – Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2023. - 184 էջ:

Աշխատանքը նվիրված է 19-րդ դարի կեսերին արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի նշանավոր ստեղծագործություններից՝ Հայոց Ազգային սահմանադրության համառոտ պատմությանը: Այն ներկայացված է իբրև ազգային ինքնագիտակցության աճի, իսկ հետանկարում՝ հայոց պետականության գաղափարի ինքնադրսևորման արտահայտություն: Վերջում հավելվածի ձևով տրված են 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունների տեքստերը:

Գիրքը հասցեագրվում է պատմաբաններին, իրավագետներին, հասարակագետներին և ընդհանրապես ընթերցասեր լայն շրջանակներին:

ՀՏԴ 94(479.25):342
ԳՄԴ 63.3(5Հ)+67.400

ISBN 978-9939-845-45-6

© Հակոբյան Ա., 2023

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ազգին ամէն մէկ անհատն առ
Ազգը պարտաւորութիւններ ունի.
Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն
մէկ անհատ պարտաւորութիւններ ունի»[1]*:*

1375 թ. Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո՝ սկսած ուշ միջնադարից, 16-րդ դարի կեսերից ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը, հայ հասարակական-քաղաքական միտքը, հանրային, հոգևոր և աշխարհիկ գործիչները ուղիներ են փնտրել ազատագրել սեփական հայրենիքը օտարների տիրապետությունից և վերականգնել հին դարերից պետականությունների հարուստ ժառանգություն թողած Հայոց ազգային անկախ պետականությունը: Այդ դարավոր ու դժվարին հասարակական-քաղաքական շարժման ու պայքարի ճանապարհին իրենց բեղմնավոր և ազգանվեր գործունեությամբ անուրանալի ներդրումն են ունեցել Հակոբ Ջուղայեցին, Իսրայել Օրին, Դավիթ Բեկը, Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Հովհաննես Լազարյանը, Հովսեփ արք. Արղությանը, Ներսես Աշտարակեցին, Խաչատուր Լազարյանը և շատուշատ ուրիշներ:

[1] *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց»*, Հիմնական սկզբունք, Ա կետ, Կ. Պոլիս, «ի տպարան Ց. Միւհէնտիսեան», 1860, էջ 5, նաև՝ **Սարուխան Ա.**, Հայկական *խնդիրն և Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, «Հավելված», Թիֆլիս. «Էպոխա» էլ. տպ., 1912, էջ 22:

Հայ ազատագրական մտքի գաղափարաբանության, շարժման ու պայքարի տեսակետից թերևս ամենահագեցած շրջափուլերից մեկը, անշուշտ, համարվում է 19-րդ դարը և այդ դարաշրջանում իր ինքնատիպ դրսևորմամբ առանձնանում է արտաքուստ արևմտահայ հոգևոր-համայնքային կյանքին վերաբերող, իսկ ներքուստ գաղափարաքաղաքական հեռագնա բովանդակությամբ մի շարժում, որն արևմտահայ իրականության մեջ ստացավ «**Ազգային սահմանադրության**» իմաստ՝ իր խորքում ամփոփելով Հայոց պետականության տեսլականը:

Ընթերցողի մոտ առաջին հայացքից (ակամա) կարող է օրինական հարց ծագել, թե պատմաքաղաքական և իրավական ինչ աղերս կարող է ունենալ հայ ժողովրդի ազատագրական շարժումն ու պայքարը օսմանյան կառավարության (Բարձր Դռան, «Ելդըզ Քյոշք») կողմից 1863 թ. մարտի 17-ին վերջնականորեն վավերացրած և պետական օրենքի ուժ ստացած արևմտահայոց **Ազգային սահմանադրություն** փաստաթղթի հետ: Պատմական նյութի ուսումնասիրությունը և երևույթի անաչառ գնահատումը ցույց են տալիս, որ հետնախորքում դրանց միջև կա քաղաքական և ներքին հոգևոր ուղղակի կապ: Ասվածին պիտի հավելել, որ արևմտահայ սահմանադրական շարժմանը նաև շատ մեծ ուժ հաղորդեց հատկապես **Զեյթունի** 1862 թ., իր թափով մինչ այդ աննախադեպ, հայտնի ապստամբությունը: Ինքնավար կյանքի ձգտման առումով հատկանշելի է հին ժամանակներից Կիլիկիայի հայկական այդ ըմբոստ լեռնագավառի մշտապես կիսանկախ ու ինքնավար կյանքի ու կեցության որոշակի տարրերի առկայության փաստը:

Հարկ է փաստել, որ մինչ այդ 1853–1856 թթ. Ղրիմի հայտնի պատերազմը հայ մտավոր հասուն շրջանակներում առաջ էր բերել գաղափարական շարժում թե՛ արևելահայության, և թե՛ արևմտահայության մեջ: Արևմտահայ իրականության մեջ այդ շարժման առաջատարները դարձան վաստակաշատ պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյանի) բնորոշած՝ «սահմանադրական երիտասարդությունը»[2]՝ Ն. Պալյանը, Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը և ուրիշներ, ովքեր հոգևոր սնունդ էին առել 1848–1849 թթ. եվրոպական ազգային-ժողովրդավարական հեղափոխություններից: Արևմտահայոց «Ազգային սահմանադրության» խորագիտակ հետազոտող Առաքել Սարուխանյանի (կեղծանունը՝ Սարուխան) կարծիքով՝ «Ազգային Սահմանադրութիւնը շատ բան պարտական է 1848-ի եվրոպական ազատագրական շարժմանը»[3]: Բնականաբար խոսքը վերաբերում էր արևմտահայերի մտավոր կենտրոն հանդիսացող Կ. Պոլսին (Ստամբուլին), մասամբ նաև Զմյուռնիային (Իզմիրին), իսկ արևմտահայ գավառը, հասկանալիորեն, իր կրթական ու մտավոր պակաս կարողություններով, դրան թույլ էր արձագանքում: Լեոյի կարծիքով՝ 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում, գաղթականներով հանդերձ, կար 300 հազար հայություն[4] և հասարակական-քաղաքական կյանքն այնտեղ, ռուսահայ կենտրոնների համեմատ, ավելի **զարգացած** էր[5]:

Արևմտահայ սահմանադրական շարժման ու Ազգային սահմանադրության ասպարեզ գալը պայմանավորված էր առաջին հերթին, իբրև **արտաքին** ազդակ, 19-րդ դարակեսերին եվրոպական (Անգլիա, Ֆրանսիա) տերությունների ու Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրության հանդեպ ավելի ու ավելի ուժգնացող ռազմաքաղաքա-

[2] **Լեո**, *Երկերի ժողովածու (տասը հատորով)*, հ. 6, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 149:

[3] **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, «Հավելված», Թիֆլիս, 1912, էջ 241:

[4] 19-դարի սկզբներին Օսմանյան կայսրությունում ապրող մոտ 3 մլն հայերի մեծագույն մասը (մոտ 2,5 մլն) բնակվում էր Արևմտյան Հայաստանում, մնացածը՝ Կ. Պոլսում, Կիլիկիայում և կայսրության այլ մասերում (տե՛ս *«Հայոց պատմություն»*, հ. 3, գ. 1, Եր., «Զանգակ-97» հրատ., 2010, էջ 230–231):

[5] **Լեո**, *Երկերի ժողովածու (տասը հատորով)*, հ. 6, Եր., 1987, էջ 461:

կան և տնտեսական ներթափանցմամբ, իսկ իբրև **ներքին** ազդակ՝ այդ նույն կայսրության ռազմաքաղաքական ու տնտեսական բարդ իրավիճակը և այդ պայմաններում կայսրության ժողովուրդների հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը[6], ինչն էլ պիտի հարկադրեր Բ. Դռանը գնալու ոչ մուսուլման ազգերի (ժողովուրդների) համար տեղական բնույթի կառավարչական, կրթա-լուսավորական, ազգային-մշակութային կյանքի իրավա-կանոնադրական կարգավորումների:

Խոսելով արևմտահայ սահմանադրական շարժման ու Ազգային սահմանադրության գաղափարական նախադրյալների ու դրա նյութականացման մասին՝ իբրև մի ամբողջ դարաշրջան, հարկ է տեսնել նաև որոշակի առնչություն ու կապ 19-րդ դարի 50-60-ական թվականներին ազատության մեր մեծ երգիչ Մ. Նալբանդյանի և Կ. Պոլսի արևմտահայ հասարակական շրջանակների հետ: Հայ հասարակական-քաղաքական մտքի հասունության առումով, ականավոր պատմաբան, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը 19-րդ դարի 50–60-ական թվականները իրավամբ համարում է Մ. Նալբանդյանի ժամանակաշրջանը: Եվ պատմական դեպքերը, գուցե պատահական դիպվածով ու հանգամանքների բերումով, այնպես ընթացան, որ, հիրավի, մեր ազատության ու ժողովրդավարության գաղափարի մեծ երգիչ ու գործիչ Մ. Նալբանդյանի, ցավոք կարճ, սակայն բեղուն հասարակական-քաղաքական գործունեությունը առնչվեց նաև դարի 50–60-ական թթ. Թուրքիայում ծայր առած Արևմտահայ սահմանադրական շարժման հետ: Հենց այդ շարժման բուռն շրջանում

[6] Ասվածին պետք է հավելել նաև հայոց ներսում առկա ներքին հոգևոր-պատմական ազդակը: Բանն այն է, որ պոլսահայ առաջադեմ մտավորական շրջանակներում շարունակվում էր կենդանի մնալ Ծ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ի գաղափարները և նոր պայմաններում, իբրև շարունակություն, դրանք վերաիմաստավորելու և նյութականացնելու պահանջ էր առաջացել:

1861–62 թթ. բանաստեղծ-գործիչը երկու անգամ եղավ Կ. Պոլսում՝ մի հնդկահայ բարերարի՝ Նոր Նախիջևանի կրթական կենտրոններին համար հայտնի կտակի (նվիրատվության) գործերով դեպի Հնդկաստան (Կալկաթա) ուղևորվելու ճանապարհին:

Դեպքերի բերումով, իրոք, Նալբանդյանի այցը համընկավ 1860 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսում **Ազգային սահմանադրության** կյանքի կոչման (հրապարակման) հետ: Հայ ու հատկապես խորհրդահայ պատմագրության մեջ հայտնի է, հաճախ չակերտների մեջ առնվող «Ազգային սահմանադրության» շուրջ շատերը կարող են տարակուսանք արտահայտել, թե հայերի համար այդ ի՞նչ սահմանադրություն, այն էլ՝ Թուրքիայում: Իսկ դարձյալ Լեոյի գնահատմամբ էլ՝ 1860 թ. Սահմանադրությունը բնորոշվել է որպես «Սահմանադրական պատրիարքություն» անունով, քանզի դրանով Կ. Պոլսի միահեծան հայ պատրիարքության իրավասությունները էապես սահմանափակվեցին[7]: Հնչակյան կուսակցության պատմագիր Արսեն Կիտուրի գնահատմամբ, այնուամենայնիվ, Սահմանադրության շնորհիվ պատրիարքարանի հետադեմ ամիրաների և կղերականների ընչաքաղցությունների առաջն առնվեց և լսելի դարձավ ժողովրդի ձայնը[8]:

Ավելին, ականավոր հրապարակախոս, հայ ազատական գաղափարների առաջամարտիկ Ստ. Նազարյանցը ևս բարձր է գնահատել ու դրվատանքով է խոսել արևմտահայերի «Ազգային սահմանադրության» հեղինակների մասին[9]: Նա, գոհունակություն հայտնելով արևմտահայերի Ազգային սահմանադրության առնչությամբ, հույս էր հայտնում, որ մեր «Հայրենակիցքը...կարող են ապրել

[7] Տե՛ս **Լեո**, *Անցյալից (Հուշեր, թղթեր, դատումներ)*, Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս» հրատ., 1925, էջ 193:

[8] Տե՛ս *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887–1962,* (խմբ. **Կիտուր Ա.**), հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 17:

[9] Տե՛ս **Նազարյանց Ստ.**, *Երկեր*, Եր., 1987, էջ 359:

առանց թաղելու իւրանց ձեռքի վաստակը հողի տակ, առանց տների պատերի մէջ փակելու իւրանց կին ու զաւակը»[10]: Սակայն դժվար չէ նկատել, որ արևելահայ ազատականության գաղափարախոսը ևս որոշակի պատրանք է ունեցել «թանզիմաթյան» Թուրքիայի ժողովրդավարացման հարցում և այլն: Բայց և այդ ամենի կողքին, ժամանակաշրջանի, իրոք, բեկումնային լինելու առումով արևմտահայ գրող, բանասեր Թեոդիկը (Թեոդոս Լաբճինճյան) 1850–1860-ական թվականները գնահատում էր որպես «հայ վերածնության նախախայրիք (երախայրիք)» և այլն[11]:

1. «Թանզիմաթը» և սահմանադրական շարժման գործընթացը

Իբրև շոշափվող հարցի գաղափարական նախադրյալ՝ չի կարելի չտեսնել, որ Արևմտյան Եվրոպային ավելի մոտ գտնվող Թուրքիայում 19-րդ դարի 30–60-ական թվականների հասարակական-քաղաքական որոշ տեղաշարժեր նկատվեցին, որոնց դրսևորումներից էր «**Թանզիմաթը**» (արաբերեն՝ «կարգավորում» կամ «բարենորոգում»): Հայտնի է, որ Թուրքիայի արտաքուստ **արևմտականացմանն** ուղղված Օսմանյան բարենորոգչական գաղափարախոսությունը ձևավորվեց 19-րդ դարի 30–50-ական թթ.՝ կայսրության ռազմական, տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի պայմաններում՝ **ներքին** ու **արտաքին** ազդակներով (գործոններով) պայմանավորված[12]:

[10] «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1861, թիվ 3 (մարտ), էջ 252:

[11] **Ադանալյան Մ.**, *Թեոդիկի «Ամենուն տարեգոյց» (1907–1929 թթ.)*, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 79:

[12] Թուրքիայի վիճակը առավել բարդացավ, երբ 1839 թ. հունիսին սուլթան Մահմուդ 2-րդի զորքը Հյուսիսային Սիրիայում պարտություն կրեց Եգիպտոսի ինքնիշխան

Ժամանակագրական առումով «Թանզիմաթը» ընդգրկել է երկու փուլ՝ (1839–1856) և (1856–1876 թթ.), ու ավարտվել է Օսմանյան Թուրքիայի 1876 թ. կիսակատար սահմանադրության ընդունմամբ[13]: Ավելի ստույգ՝ այն սկսվեց 1839 թ. **նոյեմբերի 3-ի** սուլթան Աբդուլ Մեջիդի (1839–1861 թթ.)՝ «Գյուլհանեի Հաթթը շերիֆ»[14] հրովարտակի հրապարակմամբ, որի իսկական հեղինակը սուլթանի խորհրդական Մուսթաֆա Ռեշիդ փաշան էր: Հրովարտակի մշակմանն ակտիվ մասնակցություն են ունեցել եվրոպական կրթություն ստացած, Ռեշիդ փաշայի խորհրդական հայազգի Հակոբ Կրճիկյանը (1806–1865 թթ.), բժիշկ Հովսեփ Պեյրանը (1825–1866 թթ), պետական ծառայող Գրիգոր Աղաթոնը (1825–1868 թթ.) և ուրիշներ: Կայսերական ապարանքի Գյուլհանեի դահլիճում գումարված «Մեծ հանդեսի» ժամանակ պետական ու զինվորական ծառայողների, հոգևորականության, այդ թվում նաև քրիստոնյա պատրիարքների, եվրոպական դեսպանների և այլոց ներկայությամբ հրապարակվեց «Թանզիմաթի» հրովարտակը կամ նվիրական գիրը:

Այդ հրովարտակում մասնավորապես խոսվում էր կայսրության բոլոր հպատակների՝ 1. անկախ ցեղից, կրոնից ու աղանդից՝ կյանքի, պատվի, գույքի և իրավունքի ապահովության, 2.հարկերի և տուրքերի կանոնավորում, դրանց բաշխումն ու գանձումը՝ ըստ հարկատուի կարողության և 3. վերակառուցել բանակը՝ զինվորագրությունն ու զինծառայությունը, ինչպես նաև դատական և վարչական մարմիններում իսլամ և ոչ իսլամ մարդկանց օրենքով ընդունված կարգով

փոխարքա Մուհամեդ-Ալի փաշայից: Դրան հետևեց հիվանդ սուլթանի մահը և գահն անցավ նրա որդուն՝ երիտասարդ ու եռանդուն Աբդուլ Մեջիդին:

[13] Տե՛ս *«Հայոց պատմություն»*, հ. 3, գ. 1-ին, Եր., «Զանգակ-97» հրատ., 2010, էջ 284:

[14] Թարգմանաբար նշանակում է՝ «Վարդատան արքունի նվիրական հրովարտակ» (տե՛ս **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, հ. Ա, Թիֆլիս. «Էպոխա» էլ. տպ., 1912, էջ 12):

ընդգրկման, թույլատրել բանակում ծառայել բոլոր ազգերին և այլնի մասին[15]: Սուլթանական կառավարությունը այդ փաստաթղթում փորձել էր եվրոպական արժեհամակարգին բնորոշ գրավիչ բառամթերք օգտագործել, որպեսզի լավ տպավորություն ստեղծեր Արևմուտքի տերությունների շրջանում, որ նրանք չմիջամտեն իր երկրի ներքին գործերին: Մյուս կողմից՝ նման փաստաթղթի հրապարակ գալը, բնականաբար, որոշակի աշխուժություն և հույսեր առաջացրեց Կ. Պոլիսի և Զմյուռնիայի հայ առաջադեմ մտավորականության շրջանում, որն ակնկալում էր հայ հանրության բովանդակ կյանքի բարվոքում: Սակայն Թուրքիայի իրական կյանքից կտրված նման օրենք ունեցող հրովարտակը թշնամաբար պիտի ընդունվեր թուրք հանրության (իսլամի) կողմից, թե «Ինչպե՞ս հավասարութիւն կըրնա ըլլալ քրիստոնեա հպատակներուն և իսլամներուն միջեւ»[16]: Արդյունքում այդ հրովարտակը, տարիներով ձգձգվելով, այդպես էլ կյանքի չկոչվեց, քանզի դրա համար չցուցաբերվեց անհրաժեշտ հետևողականություն:

Այդ ամենով հանդերձ՝ 1840-ական թվականներին թանզիմաթյան հանրային մթնոլորտում նկատելի (որոշ) աշխուժություն ու տեղաշարժեր նկատվեցին հասարակական, կառավարչական, ուսումնադպրոցական ու հատկապես պոլսահայ համայնքում պատրիարքի գերիշխան ազդեցությունը սահմանափակելու ուղղությամբ:

[15] **Պէրպէրեան Աւետիս**, *Պատմութիւն Հայոց (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչեւ Յամն 1860)*, Կ. Պոլիս, տպ. «Պօղոսի Քիրիշճեան եւ ընկ.», 1871, էջ 499, **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Ա, Պէյրութ, տպ. «Սեւան», 1961, էջ 3727, **Սիրունի Հ. Ճ.**, *Թանզիմաթ և հայեր (Բուխարեստ)* (տե՛ս ՊԲՀ, Եր., 1966, թիվ 4, (35), էջ 55 և 59, **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 4, Եր., «Հայաստան» հրատ., 1984, էջ 496, **Ղազարյան Հ.**, *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ.*, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ, 1967, էջ 236:

[16] **Սիրունի Հ.Ճ.**, *Թանզիմաթ և հայեր (Բուխարեստ)* (տե՛ս ՊԲՀ, Եր., 1966, թիվ 4, (35), էջ 56:

Հարկ է նշել, որ տակավին 1840-ական թվականներից (հատկապես 1844 թ. և 1847 թ.) հայ համայնքի հանդեպ պատրիարքի ու ամիրաների միահեծան իշխանությունը ընտրությունների ճանապարհով սահմանափակելու համար որոշակի քայլեր ձեռնարկվեցին: Խնդիր դրվեց ժողովրդի ավելի մեծ հատվածների մասնակից դարձնել պատրիարքի ընտրություններին: Առաջացած նման վիճակի վերաբերյալ նախկին պատրիարք, ճանաչված պատմագիր Մ. արք. Օրմանյանը պարզաբանում է, որ ազգային-վարչական մարմինների ղեկը ամիրաների ձեռքին էր այն պատճառով, վասնզի նրանց քսակով էին ֆինանսավորվում պատրիարքարանը, Ազգային Հիվանդանոցը, վարժարանը, նոր ձեռնարկվելիք կառույցների շինարարությունը և այլն[17]: Հարկ է նկատի առնել, որ Կ. Պոլսում կային ավելի քան 100 հազար թշվառ հայ պանդուխտներ, որոնց ձայնը բնավ լսելի չէր: Նախ փորձ արվեց ընտրական ավելի լայն սկզբունքի հիման վրա հիմնել ամիրաներից, սեղանավոր (սարաֆ, բանկիր), արհեստապետերից (Էսնաֆներից) և հոգևորականներից բաղկացած, կայսերական հրովարտակով հաստատված ներկայացուցչական մի մարմին՝ **Ազգային ժողով կամ Ընդհանուր ժողով**, որն ավելի հաճախ ընդունված է եղել պարզապես կոչել **Ազգային ընդհանուր ժողով**[18]: Ազգային կամ Ընդհանուր ժողովը պիտի ընտրեր 20 անդամից կազմված **Գերագույն ժողով,** որը պիտի վերահսկողություն իրականացներ քաղաքական բնույթի գործերի վրա, իսկ Գերագույն ժողովն իր հերթին ընտրելու էր 14 եկեղեցականներից կազմված **Հոգևոր ժողով**: Վերջինս էլ պիտի զբաղվեր հատկապես կրոնական գործերով:

[17] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Ա, Պէյրութ, տպ. «Սեւան», 1961, էջ 3728–3729:

[18] Ա. Սարուխանը ընտրովի այդ մարմինը անվանում է **«Ազգային ժողով»** (տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 10), իսկ Հ. Շահրիկյանը՝ **Ընդհանուր ժողով** (տե՛ս **Ատոմ**, *Ազգային Սահմանադրութիւնը*, Կ. Պոլիս, «Արծիւ» ժող. գրավաճառանոցի, 1914, էջ 33:

1847 թ. կառավարությունը վավերացնում է նման բովանդակություն ունեցող Ազգային Կանոնադրությունը: Եվ դրանով պատրիարքարանի ունեցած կառավարչական հսկողության ղեկը գործնականում անցնում է այդ երկու ընտրովի մարմինների ձեռքը: 1847 թ. մայիսի 20-ին նորընտիր Ազգային ընդհանուր ժողովը հրավիրում է իր առաջին նիստը[19]: Ավելի ուշ՝ 1853 թ. հոկտեմբերի 21-ին, Գերագույն և Հոգևոր ժողովների հավանությամբ ու համաձայնությամբ կազմվում է «Ուսումնական խորհուրդ», որը ավելի շատ զբաղվելու էր ուսումնակրթական ծրագրերի մշակման, նոր դպրոցների շինարարության, հիվանդանոցի և այլ հարցերով: Այդ գործում իրենց ակտիվ դերակատարությունն ունեցան Կ. Պոլսի հայ ուսյալ գաղափարակիր երիտասարդներ՝ Ն. Ռուսինյանը, Նիկ. Պալյանը, Գր. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչե), Կար. Ութուճյանը և այլք[20]: Այսպիսին էր պոլսահայ համայնքի հանրային կացությունը (վիճակը) մինչև որ 1853 թ. սկսվեց Արևելյան կամ Ղրիմի հայտնի պատերազմը:

Այդպիսով, վերոնշյալը կարելի է համարել 1840-ական թվականների սահմանադրական շարժման գործնական այն առաջին նախապայմանները, որոնք արդեն 50-ականի երկրորդ կեսին պիտի մարմնավորում գտնեին նոր մշակվելիք ազգային, կրոնական, մշակութային, հասարակական կյանքին վերաբերող Ազգային սահմանադրության կամ կանոնադրության մեջ:

Իրավիճակը փոխվեց ու ավելի բարդացավ, երբ սկսվեց ռուս-թուրքական Արևելյան կամ Ղրիմի (1853–1856 թթ.) պատերազմը: Ռուս-թուրքական այդ հերթական պատերազմին, իրենց շահերի թելադրանքով, միջամտեցին Արևմուտքի տերություններ (Անգլիան, Ֆրանսիան և Ավստրո-Հունգարիան), որոնց ռազմական օժանդա-

[19] Տե՛ս **Սարուխան Ա.,** նշվ. աշխ., էջ 10:
[20] Տե՛ս նույն տեղում, էջ 11:

կության շնորհիվ Թուրքիան ազատվեց (փրկվեց) վերջնական պարտությունից, սակայն նրանց քաղաքական ու բարոյական ճնշմամբ ու հարկադրանքով Փարիզում հրավիրված հաշտության վեհաժողովի բացման նախօրյակին՝ 1856 թ. **փետրվարի 6 (18)**-ին նույն սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակեց (ազդարարեց) երկրի բարեփոխումների մասին «**Հաթթը հյումայուն**»[21] (արաբերեն՝ «արքունի ձեռագիր» կամ «արքունի հրովարտակ») անվանումով մի նոր (երկրորդ) հրովարտակ՝ դարձյալ իրեն հատուկ հակասություններով, հույսերով ու պատրանքներով հարուստ: Այս հրովարտակով ևս կայսրության համար բազմաթիվ բարեփոխումներ էին խոստացվում: Հատկապես ընդգծելի է, որ էական բարեփոխումներ էր խոստացվում քրիստոնյա հպատակների համար: Այդ հրովարտակից մի կարևոր հիմնադրույթ տեղ գտավ օրեր անց՝ 1856 թ. մարտի 18 (30)-ին՝ կնքված Փարիզի հաշտության պայմանագրի՝ թիվ 9 հոդվածում: Թանզիմաթյան դարաշրջանի բարենորոգումների այդ հրովարտակ-օրենքը ևս հռչակում էր կայսրության բոլոր քաղաքացիների կյանքի, պատվի և գույքի ապահովություն, բոլորի հավասարությունը օրենքի առջև, կրոնի և կրթության ազատություն, դատարանում բոլորի, անկախ ցեղից, կրոնից, դավանանքից ու սոցիալական դիրքից, իրավահավասարություն և այլն: Բայց հասկանալի է, որ օսմանյան ռազմա-ավատատիրական բռնավարչակարգի պայմաններում դարձյալ այն կոչված չէր իրականություն դառնալու, վասնզի հրովարտակում գրվածը գտնվում էր խոր հակասության մեջ բուն կայսրության իրականության հետ: Այդ նույն իրավիճակը շարունակվեց նաև սուլթան Աբդուլ Մեջիդի հաջորդ՝ նրա եղբայր Աբդուլ Ազիզի (1861–1876 թթ.) օրոք:

Բայց և այնպես, պետք է նշել, որ «Թանզիմաթը» շոշափելի հետք թողեց Թուրքիայի տնտեսական, հասարակական, քաղաքա-

[21] Տե՛ս Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 614:

կան ու գաղափարական կյանքի վրա[22]: Վաստակաշատ պատմաբան Ա. Խառատյանի գնահատմամբ՝ երկու ռեֆորմներն էլ և՛ 1839 թ., և՛ 1856 թ., ուղղված էին Թուրքիայի եվրոպականացմանը, հպատակ ժողովուրդների քաղաքացիական ու հասարակական որոշ իրավունքների ճանաչմանը[23]: Իրավաբան Գ. Գրիգորյանի գնահատմամբ՝ «Հաթթը հյումայունը»[24] հռչակում էր կայսրության հպատակների՝ քրիստոնյաների և մահմեդականների քաղաքական և քաղաքացիական իրավահավասարություն (հոդ. 8 և 9), պաշտոններ վարելու, ընտրելու և ընտրվելու, բոլոր մակարդակի ընտրովի մարմիններ (մեջլիսներ) հիմնելու, համայնքային վարչություններ ստեղծելու իրավահավասարության (հոդ. 14), դատարանում վկայություն տալու, օրենքի առաջ բոլորի իրավահավասարության մասին (հոդ. 21) և այլն[25]:

Եվ այս իմաստով, չի կարելի ժխտել, թե «Թանզիմաթը» առհասարակ դրական որևէ ազդեցություն չի թողել արևմտահայ սոցիալ-տնտեսական ու հատկապես պոլսահայ քաղաքացիական կյանքի, իրավական, կրթական ու հոգևոր և ընդհանրապես հայ հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման վրա: «Թանզիմաթը,- կարդում ենք «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակությունում,- խթանեց օսմանահպատակ ոչ մահմեդական ժո-

[22] **Խառատյան Ա.,** *Արևմտահայերի ազգային սահմանադրությունը (1860–1863 թթ.),* (տե՛ս Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), Եր., 1992, թիվ 2–3, էջ 51 և 57–58):

[23] Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 59:

[24] Բառակապակցությունը արաբերեն է, որը թարգմանաբար նշանակում է «Արքունի ձեռագիր» կամ «հրովարտակ»:

[25] **Գրիգորյան Գ.,** *Ազգային Սահմանադրություն Հայոց,* Եր., «ԵԳԵԱ» հրատ., 2004, էջ 25:

ղովուրդների ազգային զարգացումը, ինչն անխուսափելիորեն տանում էր դեպի ազգային ինքնորոշման գաղափարը»[26]:

Պետք է նշել, որ Ղրիմի պատերազմի ավարտից հետո ավելի ուժեղացան Թուրքիայում բարենորոգչական մղումները, որոնք, իբրև արտաքին ազդակ, խրախուսվում ու խթանվում էին Արևմուտքի տերությունների (հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի) կողմից: Սուլթանական կառավարությունը Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու ճանապարհին պատրաստ էր հպատակ ժողովուրդներին «կերակրել» ամենաշատը տեղական ինքնավարություն տալու պատրանքներով: Թեև 1853–1856 թթ. ռուս-թուրքական (Ղրիմի) երկարատև ու արյունալի այդ պատերազմում չորս պետությունների միացյալ ուժերին պարտված կողմը Ռուսաստանն էր, բայց իր հերթին նաև Օսմանյան կառավարության համար, ինչպես արդեն նշվեց, իբրև պարտավորեցնող պայման հանդիսացավ կայսրության քրիստոնյա՝ փոքրամասնության իրավունքների պաշտպանության ուղղությամբ քայլերի ձեռնարկումը: Չնայած Մեծ տերությունների միջև առկա՝ Թուրքիայում տնտեսական շահեր հետապնդելու, քաղաքական գերիշխանության հասնելու, Նեղուցներին տիրելու մրցակցային պայքարին, այդուհանդերձ 1856 թ. մարտի 18 (30)-ին Փարիզի հաշտության 34 հոդվածներից բաղկացած պայմանագրում, ինչպես ասվեց, «Հաթթը հյումայուն»-ից վերցվել և ձևակերպվել էր թիվ 9-րդ հոդվածը, որը պարտավորեցնում էր սուլթանին՝ արդեն հռչակած հատուկ ֆերմանի՝ «Թանզիմաթի» հիման վրա «առանց դավանական (կրոնական) և էթնիկ խտրականության ապահովել իր հպատակների (հատկապես կայսրության քրիստոնյա ազգաբնակ-

[26] Տե՛ս *«Հայոց պատմություն»,* հ. 3, գ. 1-ին, Եր., «Զանգակ-97» հրատ., 2010, էջ 293:

չության) մշտական խնամքն ու բարօրությունը»[27]: 1856 թ. մարտի 30-ի Փարիզի պայմանագրի հոդված 9-ում հիշատակվում էր այդ հրովարտակը, որում շեշտվում էր, որ այն պիտի հիմք ծառայի սուլթանի ու նրա կառավարության համար՝ բարենորոգելու քրիստոնյա հպատակների աշխարհիկ և հոգևոր կյանքը: Իրենց շահերին հետամուտ՝ «Թանզիմաթը» և դրանից բխող Փարիզի պայմանագրի այդ հոդվածը մի զորեղ կռվան (գործիք) էր եվրոպական տերությունների ձեռքին՝ ճնշում գործադրելու սուլթանական կառավարության վրա՝ բարվոքելու երկրի բոլոր հպատակների վիճակը՝ առանց ցեղի և կրոնի խտրականության: Դա կարելի է համարել արևմտահայ սահմանադրական շարժման և դրա արդյունքը հանդիսացող «Ազգային սահմանադրության» պաշտոնական, իրավաքաղաքական նախադրյալներից (հիմնաքարերից) մեկը:

2. Ազգային սահմանադրության մշակման գործընթացը

1850-ական թթ. արևմտահայության շրջաններում ազատամտականության հասարակական-քաղաքական մթնոլորտի առկայությունն էլ խթան հանդիսացավ սահմանադրական շարժման աշխուժացման ու այն գործնական հիմքերի վրա դնելու համար: Բայց պոլսահայ, նաև զմյուռնահայ համայնքների տարբեր խավերում առկա էին որոշակի ներհակություններ (ըստ նրանց սոցիալ-տնտեսական պայմանների, աշխարհիկ ու հոգևոր դասային ու կառավարչական կարգավիճակի, նյութական, կրթական և այլ պայմանների)՝ **ամիրաների**, սեղանավորների (սարաֆների), բանկիրների, վաճառականների, բարձր հոգևորականության, սոցիալապես ցածր աշխատավորական շերտերի՝ հիմնականում արհեստավորների (էսնաֆների), գործակատարների, ոսկերիչների, ինչպես նաև Եվրոպայում կրթություն ստացած և պետական ծառայության մեջ մտած երիտասարդ մտավորականության (հայ էֆենդիական) խավերի (դասերի) ու շերտերի միջև:

18-րդ դարի ֆրանսիական լուսավորիչների և 1848–49 թթ. եվրոպական հեղափոխությունների ազդեցությամբ ազատության գաղափարներով տարված, Եվրոպայում բարձր կրթություն ստացած արևմտահայ մի խումբ (բժիշկ, իրավաբան, ճարտարագետ և այլն) երիտասարդ մտավորականներ՝ Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Նիկ. Պալյանը, Սերոբ Վիչենյանը, Կ. Ութուճյանը և ուրիշներ «ձեռնամուխ են լինում,- կարդում ենք «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքում,- ազգային կյանքի, հասարակական և կրոնական գործերի վերաբերյալ կանոնադրության մշակմանը: Ելնելով 1856 թ. մարտի 30-ի Փարիզի պայմանագրի (քանիցս հիշատակված) 9-րդ հոդվածի կատարման պահանջից, Բարձր Դռան գիտությամբ՝ հանձնարարվում էր ոչ մահմեդական (հույն, հայ, հրեա) համայնքներին՝ կազմելու հանձնաժողովներ իրենց համար ազգային կանոնադրություն մշակելու: 1857 թ. փետրվարին նրանք ավարտում են իրենց աշխատանքը և մշակված կանոնադրության նախագիծը ներկայացնում են Կ. Պոլսի Ընդհանուր ժողովի հաստատմանը»[28]:

Այս կապակցությամբ 20-րդ դարի ճանաչված ազգային գործիչ Հ. Շահրիկյանը պատմական ակնարկի ձևով հիշեցնում է անում, որ Կ. Պոլսում պատգամավորական Ընդհանուր ժողով գումարելու առաջին քայլը տեղի է ունեցել տակավին 1725 թ.՝ Կարապետ Ծծկեր Ոլնեցու Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առիթով (ի դեպ, սա

[27] *«Сборник договоров России с другими государствами (1856–1917)»,* под. ред. **Е.А. Адамова**, М., «Госполитиздат», 1952, с. 25.

[28] **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.,** *Հայ ժողովրդի պատմություն (1801–1978 թթ.),* Եր., 1979, էջ 171:

Ամենայն Հայոց կաթողիկոսի Սբ. Էջմիածնից դուրս ընտրություններ անցկացնելու եզակի դեպքն է), որից հետո արդեն պատրիարքական ընտրությունների կապակցությամբ պարբերաբար գումարվել են Կ. Պոլսի Ընդհանուր ժողովներ: Ընդ որում, այդ ժողովների մասնակից կազմը ներկայացնում էին Կ. Պոլսի հայ հնագույն 6 թաղերի ավագ ու աթոռակալ քահանապետները, քարոզիչ եպիսկոպոս կամ վարդապետները, ամիրաները և արհեստավորների գլխապետները[29]:

Սահմանադրության նախագծի մշակման ու քննարկումների կապակցությամբ պատմագիր, հոգևոր գործիչ Մ. արք. Օրմանյանը գրում է, որ 1857 թ. մարտի 22-ին՝ ուրբաթ օրը, պատրիարքարան **Հակոբոս** (**Հակոբ**) պատրիարքի (1848–1858 թթ.) նախագահությամբ գումարվեց Ընդհանուր ժողովը, որին ներկա էին եկեղեցականներ, ամիրաներ, արհեստապետներ, մտավորականներ և առևտրականներ: Նրանում պիտի քննարկվեր արդեն մշակված կանոնադրության նախագիծը, որին «Սահմանադրություն» անուն էր տրված, «թէպէտ բառացի իմաստով կանոնադրութիւն կոչումէ չի տարբերիր»[30]: Ժողովականները հավանություն են տալիս այդ ծրագիր-նախագծին: Իբրև հաջորդ քայլ՝ այն ներկայացվեց կառավարության հաստատմանը, բայց տևական սպասումներից հետո մերժվեց այն առարկությամբ, թե «պետութեան մէջ պետութիւն չի կրնար ըլլալ»: Բայց Օրմանյանի կարծիքով՝ մերժման «իսկական պատճառը ազգին երեւելեաց մէջ ծագած գժտութեան հետևանքն էր», որ «այն շատ **ազատամիտ** կը նկատուէր»[31]:

Այս նույն առնչությամբ, Հ. Շահրիկյանը նույնպես նշում է հետևյալը, որ 1857 թ. սահմանադրության մշակված ու խմբագրված

[29] Տե՛ս **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 21–22:

[30] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Բ, Պէյրութ, տպ. «Սեւան», 1961, էջ 4016:

[31] **Օրմանեան արք. Մաղաքիա**, նշվ. աշխ., էջ 4016–4017:

տարբերակը ներկայացվում է Բարձր Դռան, սակայն առանց վավերացնելու այն վերադարձվում է՝ առարկելով, թե «պետութեան մէջ պետութիւն չի կրնար ըլլալ»[32]: Կարելի է պնդել, որ դրանում հավանաբար տեղ են գտել թուրք պետական շրջանակների համար քաղաքական բնույթի անցանկալի մտքեր ու ձևակերպումներ: Սակայն ըստ Մ. Օրմանյանի՝ նախագծին հետագա ընթացք չտրվելը, ինչպես ասվեց, բացատրվում էր ավելի շատ հայ շրջանակների ներքին տարաձայնություններով:

Առկա պատմավավերագիր գրականությունը ցույց է տալիս, որ շուրջ երեք տարի՝ 1857–1860 թթ. ընթացքում ընդունվելիք փաստաթղթի շուրջ ընթացել են բուռն քննարկումներ, խորհրդակցություններ ու բանակցություններ: Նշենք, որ խմբագրական աշխատանքները ձգձգվել են նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես V Աշտարակեցու վախճանվելու (1857 թ.), նրա թաղման և նոր կաթողիկոսի ընտրության հարցերով Կ. Պոլսի բարձրաստիճան հոգևորականության ու մտավորականության տևականորեն զբաղված լինելու պատճառով: Բացի այդ, 1858 թ. հունիսին ծերության պատճառով հրաժարական էր տվել Հակոբոս պատրիարքը, իսկ հոկտեմբերի 17-ին նոր պատրիարք է ընտրվել **Գևորգ** (**Գեորգ**) եպիսկոպոսը (հետագայում Ամենայն հայոց Գևորգ Դ (1866–1882) կաթողիկոսը):

Բովանդակային ու խմբագրական զգալի փոփոխություններից հետո՝ 1859 թ., կազմվում է սահմանադրության նախագծի վերամշակված մի նոր տարբերակ, որն այս անգամ հանդիպում է Գևորգ պատրիարքի, նաև պահպանողական ու հետադեմ այլ շրջանների ընդդիմությանը և մերժվում: Ծագած խնդիրը հարթելու համար կազմվում է 5 եկեղեցական և 14 աշխարհական անձանցից կազմ-

[32] **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 38:

ված մի նոր հանձնաժողով[33]: Եվ 1857 թ. ու 1859 թ. նախագծերը իրար համադրելով ու ձևակերպումներն իրար մերձեցնելով՝ հաջողվում է կազմել սահմանադրության կամ կանոնադրության վերջնական մի նախագիծ: Այս առնչությամբ Մ. Օրմանյանը նշում է, որ այս անգամ էլ Գևորգ պատրիարքը դարձյալ նախորդի պես առարկում է՝ գտնելով, որ դրանով պատրիարքարանի իրավունքները կրճատվելու (սահմանափակվելու) են, պատրիարքարանը ենթարկվելու է Ընդհանուր ժողովի կամքին[34]:

Բայց, ի վերջո, հաջողվում է Գևորգ պատրիարքի դիմադրությունը կոտրել՝ նրան գահընկեց անելու միջոցով: Մ. Օրմանյանը նշում է, որ երբ Գևորգ պատրիարքը չկարողացավ իր միտքը (տեսակետը) առաջ տանել, 1860 թ. ապրիլի 21-ին հրաժարական ներկայացրեց՝ «հրաժարեցաւ՛ ի պաշտօնէ իւրմէ յոչ կամաց»[35]: Ստեղծված իրավիճակում նախագծի հեղինակները, ստանալով նաև հանրության աջակցությունը, հաջողում են վերախմբագրված «Կանոնադրության» նախագիծը **1860 թ. մայիսի 24-ին** Ընդհանուր ժողովի միջոցով անցկացնել և պատրիարքի նոր տեղապահ, Ադրիանապոլսի հայ հոգևոր առաջնորդ Սարգիս եպս. Գույումճյանի կողմից վավերացնել տալ ու դրանով դնել գործողության մեջ[36]: Ի դեպ, հենց այդ ժամանակ էլ «Կանոնադրության» հիմնադիր անդամներից Նահապետ

[33] Հանձնաժողովի կազմում ընդգրկված են եղել Կ. Յութուճյանը, Բարունակ բեյը, Մկր. Աղաթոնը, Ն. Ռուսինյանը, Եռնվք Տեմիրճիպաշյանը, Գր. Օտյանը (տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1859 թ., դեկտեմբերի 24, թիվ 413):

[34] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Բ, Պէյրութ, տպ. «Սեւան», 1961, էջ 4018:

[35] **Պէրպէրեան Աւետիս**, Պատմութիւն Հայոց (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչեւ Յամն 1860), Կ. Պոլիս, տպ. «Պօղոսի Քիրիշճեան եւ ընկ.», 1871, էջ 621, նաև՝ **Օրմանեան արք. Մաղաքիա**, նշվ. աշխ., 1961, էջ 4019:

[36] Մայիսի 14-ին Բարձր Դռան Մեծ եպարքոսը Սարգիս արք. Գույումճյանին հաստատում է իր պաշտոնում (տե՛ս «Մեղու», Կ. Պոլիս, 20 մայիսի, 1860 թ., թիվ 98, էջ 106):

Ռուսինյանի առաջարկությամբ ընդունված փաստաթուղթը կոչվեց **«Ազգային Սահմանադրություն»**[37]:

Մ. Օրմանյանը, այլ հեղինակներից հղումներ անելով, գրում է, որ մայիսի 2-ին 87 քվեով պատրիարք ընտրված Ս. եպս. Գույումճյանի նախագահությամբ մայիսի 24-ին Մայր եկեղեցում գումարված Ընդհանուր ժողովը նախկին պատրիարք Հակոբոսի ներկայությամբ, գլխավոր եկեղեցականների և բոլոր դասակարգերի ներկայացուցիչներից կազմված բազմության մասնակցությամբ նախ ծայրեծայր ընթերցվեց սահմանադրությունը, որից հետո եկեղեցականները վկայեցին, որ այն «Հայ եկեղեցւոյ օրինաց հակառակ բան չի պարունակեր»[38]: Ամիրաները՝ Տատեանք, Պալեանք, Երամեանք և այլք, նույնպես համարձակ հավանութիւն տվին, նույնը մտավորական, առևտրական և արհեստավորականների շարքերից եղողները և ազգային Ընդհանուր ժողովը միաձայն ընդունեց ծրագիրը, ու հռչակվեց այն[39]: Այս իրադարձության կապակցությամբ, հայ եկեղեցու պատմության մյուս ճանաչված պատմագիր Ա. Պերպերյանը գրում է՝ «Եղեւ ժողով մեծ՛ ի պատրիարքարանն հոգեւորականաց եւ աշխարհականաց, եւ Ազգային Սահմանադրութիւնն ընդունելութեամբ ամենեցուն ստորագրեցաւ»[40]: Ի դեպ Ա. Պերպերյանի աշխատությունը ավարտվում է հենց մայիսի 24-ի սահմանադրության ընդունման փաստի արձանագրումով: Հիշեցնենք նաև, որ Սահմանադրության վերջնական տարբերակի մշակման գործում աշխարհական մտավորականներից ակտիվ դերակատարություն են ունեցել Ն. Ռուսինյանը, Կ. Յութուճյա-

[37] Տե՛ս **Սարուխան Ա.**, *Հայկական իսնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 16, **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.**, նշվ. աշխ., էջ 172:

[38] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Բ, Պէյրութ, տպ. «Սեւան», 1961, էջ 4019:

[39] Տե՛ս նույն տեղում:

[40] **Պէրպէրեան Աւետիս**, *Պատմութիւն Հայոց*, Կ. Պոլիս, 1871, էջ 621:

նը, Գր. Օտյանը, Մկրտիչ Աղաթոնը, Յաղուբ Յաղուբյանը և ուրիշներ: Թեև Ս. Վիչենյանը, Ն. Պալյանը այս վերջին հանձնաժողովի խմբագրակազմում չեն եղել, սակայն նախորդ նախագծերում նրանք մեծ գործ էին կատարել:

Արևմտահայ սահմանադրական շարժման այս փուլում առաջացած ոչ նպաստավոր հանգամանքներից մեկը կարելի է համարել պոլսահայ հոգևոր շրջանակներում տարածում գտած, այսպես կոչված, «Հասունյան քաղաքական շարժումը»[41]: Այդ հոգևոր գործիչը խնդիր էր դրել, հենվելով պապական իշխանության և կաթոլիկ գաղափարների վրա, ամեն կերպ ծայրահեղական դիրքերից ընդդիմանալ Կ. Պոլսի պատրիարքության և Էջմիածնի կաթողիկոսությանը, ուժով ու հարկադրանքով հայության մեջ արմատավորել լատինական ձևեր ու կերպեր, կաթոլիկ հոգևոր-դավանական արժեքներ: Մ. Օրմանյանը ակնարկում է, որ Ա. Հասունը նույնիսկ ծրագիր է ունեցել թուրքահայ վեց շրջաններում՝ Բուրսայում, Անկարայում, Տրապիզոնում, Խարբերդում Կարինում և Արդվինում հիմնել հայ կաթոլիկական թեմեր[42]: Դավանական ու մրցակցային այդ վեճերը (դիմակայությունը), ինչ խոսք, խաթարում ու վնասում էին ծագած համազգային նշանակության խնդիրները, այդ թվում սահմանադրական բարեփոխումների հարցը միասնաբար առաջ տանելու գործին:

Սահմանադրությունը տարածքային ընդգրկման առումով ներառում էր ամբողջ կայսրության հայությանը (ընդամենը 65 հոգևոր վիճակ) և իրենից ներկայացնում էր արևմտահայության ներքին կյանքին վերաբերող ծրագրային քաղաքացիահիրավական բնույթի մի

[41] Խոսքը Սիրիայում ծնված, կաթոլիկ եկեղեցական միաբան գործիչ, Հռոմում սովորած, 1840–1860-ական թթ. Օսմանյան կայսրությունում կաթոլիկ հայերի առաջնորդ, պատրիարք **Անտոն Հասունյանի** (1809–1884 թթ.) մասին է:

[42] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Ա, Պէյրութ, տպ. «Սեւան», 1961, էջ 3924:

փաստաթուղթ՝ իր օրենսդիր և գործադիր մարմիններով: Ի պաշտոնե, պատրիարքը ստանձնում էր հրավիրվելիք Ազգային ընդհանուր ժողովի նախագահի պարտականությունը, նա օսմանահպատակ պիտի լիներ և այլն: Ազգային սահմանադրությունը տակավին Բարձր Դռան կողմից չհաստատված՝ անցկացվեցին երեսփոխանական (պատգամավորական) ընտրություններ, որոնք տևեցին երեք ամիս: Կ. Պոլսի մամուլը արձագանքել է Պոլսի թաղերում և գավառներում անցկացված ընտրություններին: Մասնավորապես, «Մեղու» տասնօրյա հանդեսը ուշադիր հետևել է ընտրությունների անցկացման ընթացքին և դրական է արտահայտվել դրա արդյունքների վերաբերյալ: Հոդվածագիրը հանդեսի առաջնորդողում պատմում է, թե ինչպես է անցկացվել Ազգային ընդհանուր ժողովի ընտրությունները հունիսի 26-ի կիրակի օրը Պոլսի թաղերից Խասգյուղում և Բերայի մեջ: Թղթակիցը մամուլում զետեղել է ֆրանսիացի իր բարեկամի ստացած տպավորությունը Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում անցկացված քվեարկությունից. «Հայերը կ'ըսէ Եւրոպացւոց կարծածին պէս չ'են եղեր, անոնց հոգին արթուն է եղեր և ամենքն ալ քաղաքակրթութեան վայելման միջոցներուն խելահաս, այն անձինքը, որ մեզի ձուկ կամ պտուղ կծախեէին, որ մեզ կածիլէին կամ մեր դրանց բաղնիքը կը շինէին եւ այլն և զորոնք մենք իբրև անսպայու անկիրէ առ ոտն կը հարկանէինք՝ հոն քուէ տուփին մոտ տեսնելու էր՝ թէ ի՛նչ վեհանձնութեամբ և ակնածութեամբ կը նէտեին իրենց քուէն ու անուննին անոր քով դրված թուղթին վրա ստորագրելնուն ետև հանգարա խղճմըտանքով ու զուարթ դէմքով և վեհ ճակատով կը հեռանային»[43]:

Արդյունքում, 1860 թ. **օգոստոսի** 25-ին Կ. Պոլսում (Մայր վարժարանի սրահի մեջ) գումարվեց ոչ լիակազմ առաջին Ազգային ընդ-

[43] «Մեղու», Կ. Պոլիս, 30 հունիսի 1860 թ., թիվ 102, էջ 137:

հանուր ժողովը, որին մասնակցել են սահմանադրությամբ նախատեսված 220-ի փոխարեն, ընդամենը 180 պատգամավոր, որից 120 ընտրված երեսփոխաններ (պատգամավորներ) էին և 60-ը՝ չընտրված (հրավիրված-անդամակիցներ), այսինքն՝ նրանք, ովքեր ի պաշտոնե (իրենց զբաղեցրած պետական, կրթական, հոգևոր, լրագրական, խմբագրի և այլ կարգավիճակով), առանց ընտրության իրավունք ունեին ներկայացուցչական տեղ զբաղեցնելու Ազգային ընդհանուր ժողովում: Պատմագիր Ա. Սարուխանի ներկայացմամբ՝ այդպիսիք էին բոլոր եպիսկոպոսները, բարձրաստիճան պետական հայ պաշտոնյաները (սեղանավորները), ազգային մատենագիրները, ավագ ուսուցիչները, լրագրերի խմբագիրները և այլն[44]: Այդպիսով, 1860 թ. մայիսի 24-ի Սահմանադրությամբ՝ իբրև առաջին գործնական քայլ, ձևավորվեց ընդամենը **180** երեսփոխաններից (պատգամավորներից), որոնցից 120-ը ընտրված, իսկ 60-ը՝ ոչ, առաջին Ընդհանուր ժողովը (խորհրդարանը)[45]:

Սակայն Ազգային սահմանադրության պետական-պաշտոնական մակարդակով վավերացումը և ամբողջությամբ այն գործնական կիրառության մեջ դնելը ձգձգվեց: Դրա պատճառը մի կողմից՝ հայ հոգևոր և աշխարհիկ շրջանակների ներսում առկա ներքին տարաձայնություններն (անհամաձայնություններն) էին, որոնք հաճախ ուղեկցվում էին փողոցային բողոքներով և անգամ ծեծկռտուքներով, իսկ մյուս կողմից՝ դրա հաստատումն (վավերացումն) ու կյանքի կոչելը ժամանակ շահելու նպատակով կառավարությունը (Բ. Դուռը) գիտակցաբար հետաձգում էր: Տվյալներ կան, որ հակասահմանադրական պայքարի մեջ էին ներքաշվել նախկին պատրիարքներ Գևորգ և Հակոբոս եպիսկոպոսներն ընդդեմ Սարգիս պատրիարքի

[44] **Սարուխան Ա.,** նշվ. աշխ., էջ 21:

[45] Տե՛ս *«Հայոց պատմություն»,* հ. 3, գ. 1, Եր., «Զանգակ-97», 2010, էջ 365:

ու սահմանադրության: Այդ ընթացքում տեղի է ունեցել նաև աթոռակռիվ: Ընդ որում, ընդդիմության մի հատված մտադրություն է ունեցել Հակոբ եպիսկ. Եդեսացուն դարձնել Կ. Պոլսի, իսկ Գևորգ եպիսկոպոսին՝ Երուսաղեմի պատրիարք: Սակայն Բարձր Դուռը չի համաձայնվում պատրիարք փոփոխելու առաջարկին: Այնուամենայնիվ, լարված մթնոլորտի պատճառով 1861 թ. հոկտեմբերի 21-ին Սարգիս պատրիարքը հարկադրված հրաժարական է տվել[46]:

Ստեղծված իրավիճակում 1861 թ. աշնանը սահմանադրությունը կրկին վերաքննության ենթարկելու համար կառավարությունը կազմում է նոր հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Սերվիչենը, Ստ. Ասլանյանը, Գ. Աղաթոնը, Հ. Նորատունկյանը, իսկ նախկին անդամներից՝ Գ. Օտյանը, Ն. Ռուսինյանը և ուրիշներ: Արդյունքում՝ կրկին վերանայվեց, փոփոխվեց ու խմբագրվեց սահմանադրության տեքստը, և 1862 թ. ապրիլին վերախմբագրված նոր տեքստը ներկայացվեց կառավարության հաստատմանը (վավերացմանը): Ընդ որում, պոլսահայության մեջ շարունակվում էր մամուլով բանակռիվն ու փողոցային պայքարը սահմանադրության կողմնակիցների (Հ. Սվաճյան, Մ. Մամուրյան, Կ. Փանոսյան, նաև Պոլիս ժամանած Մ. Նալբանդյան) ու հակառակորդների (Հ. Չամուռճյան-Տերոյենց, նաև դրսից՝ Մ. և Զ. Մսերյաններ և այլք) միջև:

Թուրքական իշխանությունների կողմից կրկին ձգձգում են սահմանադրության վավերացումը, և շուրջ մեկամյա քաշքշուկներից, խմբագրական ու բովանդակային (հատկապես հայերեն ու թուրքերեն տարբերակների) որոշ շտկում-վերախմբագրումներից հետո **1863 թ. մարտի 17-ին** Բարձր Դուռն, ի վերջո, վավերացնում է այն՝ «իբրեւ օսմանյան պետական օրէնք»: Պատրիարքարան ուղարկվեց

[46] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում,* հ. Գ, մաս Բ, Պէյրութ, տպ. «Սեւան», 1961, էջ 4046–4052:

սուլթանի հաստատած «**Ազգային սահմանադրութիւն Հայոց**»-ը թուրքերեն՝ «**Նիզամնամէի միլլէթի էրմէնիան**» վերտառությամբ[47]: Մի քանի օր անց՝ **մարտի 20-ին**, Ազգային ընդհանուր ժողովը՝ պատրիարքի տեղապահ Ստեփան եպս. Մաղաքեանի նախագահությամբ, միաձայնությամբ ընդունեց փաստաթուղթը և շնորհակալական ուղերձ հղեց՝ առ Բարձր Դուռ[48]: Իրազեկենք, որ «Ազգային Սահմանադրություն Հայոց»-ը թարգմանվել ու լույս է տեսել մի քանի այլ լեզուներով՝ ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն: Կարծում ենք, որ Բարձր Դռան կողմից սահմանադրության հաստատման գործում իր դերն է ունեցել նաև 1862 թ. ամռանը բռնկված Զեյթունի աննախադեպ հերոսամարտը:

Ի դեպ, այդ նույն պատմաշրջանում Օսմանյան կայսրությունում՝ իբրև ազգային-տարածքային ինքնավարության ձեռք բերման նախադեպեր, սահմանադրական շարժման ու պայքարի ճանապարհով ինքնավարության հասնելու հաջողված փորձեր են կատարվել Լեռնային Լիբանանում, Կրետե կղզում, կայսրության հունական ու հրեական համայնքների շրջանում և այլն: Այսպես, օրինակ, հայտնի է, որ Արևմուտքի հինգ տերությունների միջամտությամբ Լեռնային Լիբանանի համար մշակվել էր «Կանոնադրություն» և **1861 թ. հունիսի 9-ին** Կ. Պոլսում կնքվել էր համապատասխան մի փաստաթուղթ, որով Լ. Լիբանանի նախկին երկու շրջանների միավորումով ստեղծվում էր մեկ միասնական ինքնավար նահանգ (մութասարիֆություն)՝ Օսմանյան կայսրության կազմում, եվրոպական պետությունների վերահսկողության ներքո[49]: Հավելենք նաև, որ այդ նպատակին հասնելու ճանապարհին՝ մինչ այդ կանոնադրության ընդունումը՝ 1860 թ. մայիս-հունիս ամիսներին, Լիբանանում տեղի էին ունեցել մահմեդական դրուզների կողմից հազարավոր քրիստոնյա մարոնիների կոտորածներ: Եվ այդ փաստաթուղթը կոչված էր կարգավորել տեղի բազմաէթնիկ ու բազմակրոն ժողովուրդների հարաբերությունները: Կանոնադրությամբ, ինքնավար մարզը կառավարելու համար, եվրոպական պետությունների ներկայացմամբ, սուլթանը նշանակում էր գեներալ-նահանգապետ (մութասարիֆ), սակայն ոչ լիբանանցի օսմանահպատակ քրիստոնյա[50]: Եվ թող զարմանալի չթվա, առաջին նահանգապետ էր նշանակվել հայազգի Արթին Կ. Դաուդյանը[51]:

3. Սահմանադրությո՞ւն, թե՞ կանոնադրություն

Անշուշտ, իրավա-քաղաքական իմաստով չափազանցություն կլինի այդ փաստաթուղթը սահմանադրություն անվանելը, քանզի սովորաբար սահմանադրություն կոչվածը ժամանակակից չափանիշներով ունենում է իրավական պետությունը, էլ չենք խոսում նրա միջազգայնորեն ճանաչված լինելու մասին: Եվ այդ իմաստով արևմտահայերի Ազգային սահմանադրությունը չպետք է շփոթել իրավական այս կամ այն պետության հիմնական օրենք հանդիսացող սամանադրության հետ: Հիմնահարցի քաջագիտակ հետազոտող Ա. Սարուխանի կարծիքով՝ «Սահմանադրութիւն» մեծադղորդ կոչման փոխարեն ավելի հարմար կլիներ այն անվանել պարզապես «Կանոնադրու-

---

[47] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց»*, Կ. Պոլիս-Սթանպոլ, ի տպարանի Յ. Միւհէնտիսեան, 1863, էջ 11, **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910 թթ.)*, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 24–25, *Հայ ժողովրդի պատմություն*, Հայկ. ՍՍՌ ԳԱ, հ. 5, Եր., 1974, էջ 340, նաև՝ *«Հայոց պատմություն»*, հ. 3, գ. 1, Եր., 2010, էջ 367:

[48] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 28:

[49] Տե՛ս **Թոփուզյան Հ.Խ.**, *Սիրիայի և Լիբանանի հայ գաղթօջախի պատմություն (1841–1946 թթ.)*, Եր., 1986, էջ 302:

[50] Տե՛ս **Եղոյան Ա.**, *Լիբանանը Մութասարիֆության շրջանում (1861–1915 թթ.)*, ատենախոսություն, Եր., 2014, էջ 3, նաև՝ hy.wikipedia.org/wiki/Լիբանան:

[51] Տե՛ս **Հովհաննիսյան Նիկ.**, *Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է*, Եր., 2010, էջ 78:

թիւն հայ համայնքի», որն, իր բովանդակությանը համապատասխան, կոչված էր կազմակերպել հայ աշխարհիկ և կրոնական հասարակական կյանքը[52]:

Հասկանալի է, որ Օսմանյան Թուրքիան, լինելով բացարձակ միապետական, ամբողջատիրական ու բռնապետական երկիր, ինքնին, խոսք չէր կարող լինել արևմտահայության համար իրական ու իսկական սահմանադրական կարգի մասին: Բնական է, որ սուլթանական կառավարությունը չէր կարող հանդուրժել ու թույլ տալ նման կարգավիճակ: Սա պիտի համարել ընդամենը հայոց հոգևոր և աշխարհիկ ազգային ներքին հարաբերությունները կանոնակարգող, Բարձր Դռան կողմից օրենքի ուժ ստացած իրավական փաստաթուղթ: Ավելին, խոսքը վերաբերում է ոչ մուսուլման (քրիստոնյա) հպատակ էթնոսի ներքին կյանքին ինքնավարություն տալու մասին: Այս առնչությամբ կարելի է նաև դատողություն անել, որ իշխանությունների համար միգուցե ավելի դյուրին էր, հպատակ ժողովրդին նման կարգավիճակ տալով, հնազանդ պահել նրան ու անցավագին կառավարել երկիրը:

Հայտնի է նաև, որ այս կամ այն պետությանը վերաբերող սահմանադրությունը կոչված է սահմանելու տվյալ երկրի պետական կառուցվածքը, ընտրական սիստեմը, պետմարմինների գործունեության սկզբունքները, դրանց տարանջատման ու հակակշռման աստիճանը, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները և այլն: Բայց այստեղ, մեր առջև ծառացած խնդրի քննության պարագայում, խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրությունում ապրող հայ համայնքի համար սահմանված ներքին սամանադրություն-կանոնադրության մասին է: Ինչպես նշվեց, թուրքերենում և պաշտոնական փաստաթղթերում 1863 թ. հաստատվածը անվանվում էր

[52] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 17:

«**Նիզամնամէի միլլէթի էրմէնիան**», հայերեն՝ «Հայ ազգի կանոնադրություն», իսկ «սահմանադրություն» բառի համարժեքը թուրքերենում «**Կանունու էսասի**»-ն է[53]:

Հարկ է նշել, որ 19-րդ դարի երկրորդ կեսում հատկապես արևմտահայության մտավորականության կենտրոն հանդիսացող մայրաքաղաք Կ. Պոլսում շատ տարածված էին հայատառ թուրքերենով հրատարակությունները՝ լույս էին ընծայվում հարյուրավոր անուն գրքեր, մի քանի տասնյակ պարբերականներ և այլն: Նման հրատարակությունները ամենից առաջ հասցեագրվում էին հայ հասարակական-քաղաքական կյանքով հետաքրքրվող հայ շրջանակներին, որոնք չգիտեին մայրենի լեզուն և հարկ էր թուրքերենով իրազեկել այդ մարդկանց: Մասնավորապես, հայատառ թուրքերենով պարբերականներից հանրահայտ է հրապարակախոս Կարապետ Փանոսյանի խմբագրած «Մանզումէի էֆքեար» (Մտածումների շարք) թերթը, Կ. Պոլիս, 1866–1901 թթ.)[54]: Տեղեկացնենք, որ հայատառ թուրքերենից զատ հրապարակի վրա գոյություն ունեն նաև 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունների բուն թուրքերեն տեքստերը[55]:

«Սահմանադրությո՞ւն», թե՞ «կանոնադրություն» համապատասխանաբար հայերեն և հայատառ թուրքերենով ներկայացնելը խնդրին գիտակ, ազգային-քաղաքական գործիչ Հարություն Շահրիկյանի կարծիքով՝ հայերեն բնագրից թուրքերեն թարգմանության մեջ «կանոնադրություն» հղումը ավելի շուտ եղել է խմբագրակազմի (ընդ որում, բոլորն էլ ազգությամբ եղել են հայեր) «**մտավախության**

[53] *«Հայոց պատմություն»*, հ. 3, գ. 1, Եր., 2010, էջ 371–372:

[54] Տե՛ս *Հայ պարբերական մամուլի պատմությունից*, գ. 1, խմբ. **Ա. Կարինյան**, Եր., 1963, էջ 240–241 և 243:

[55] Տե՛ս **Bebiroğlu Murat**, Osmanlı devletında Gayrımüslim Nižamnameliri, İstanbul, Akademi Matbaası, 2008, (269 s.).

արդիւնք, քան պետական լուրջ ընդդիմութեան»[56]: Ըստ ամենայնի՝ դա արվել է հետագա բարդություններից խուսափելու համար: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ արևմտահայերենում «սահմանադրություն» և «կանոնադրություն» բառերը հոմանիշներ են, ինչը նշանակում էր՝ օրենք, կանոն, և դրանք չեն տարբերակվում քաղաքական կամ իրավական տեսակետից[57]: Բերվածին հավելենք, որ փաստաթղթին նման «սահմանադրություն» անվանում տալը պայմանավորված է եղել նրա մշակող, եվրոպական բարձր կրթություն ստացած, արևմտահայ ազգային-ժողովրդավարական արժեհամակարգի կրող մտավորականների՝ Ն. Պալյանի[58], Ն. Ռուսինյանի, Գ. Օտյանի և մյուսների անձնական նախաձեռնությամբ: Ավելին, մինչ այդ էլ արևմտահայերի ազգային ու եկեղեցական գործերին վերաբերող կանոնադրությունները շատ հաճախ կոչվել են «սահմանադրություն»[59]: Հավելենք, որ Հայ եկեղեցու կառավարմանը վերաբերող «կանոնադրությունը» միաժամանակ կոչվել է «սահմանադրություն»: Այսպես, օրինակ, արևմտահայ պատմաբան ու բանասեր **Արշակ Ալպոյաճյանը** 1945 թ. հունիսին Էջմիածնի ազգային-եկեղեցիական Ընդհանուր ժողովում ընդունվելիք Կանոնադրությունը անվանում է Հայ Եկեղեցու «Սահմանադրություն», ինչը որ արտացոլված է հենց նրա աշխատության խորագրում[60]: Այստեղ, իհարկե, կարևորը ոչ միայն և ոչ այնքան զուտ անվանման ձևն է, որքան տվյալ անունը

[56] **Ատոմ (Հարութիւն Շահրիկեան)**, *Ազգային Սահմանադրութիւնը*, Կ. Պոլիս, «Արծիւ», ժող. գրավաճառանոցի, 1914, էջ 10:

[57] Տե՛ս **Ավետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, *Նոր բառագիրք հայկազեան լեզուի*, հ. Ա, Եր., «ԵՊՀ» հրատ., 1979, էջ 1051

[58] Ցավոք, Սահմանադրության հիմնադիր գաղափարախոսներից Նիկողոս Պալյանը վախճանվել էր 1858 թ. 32 տարեկան հասակում, մինչ դրա պաշտոնապես ընդունումը:

[59] Տե՛ս *«Հայոց պատմություն»*, հ. 3, գ. 1, Եր., 2010, էջ 372:

[60] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, *Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը*, Գահիրէ, «Նոր աստղ» տպ., 1945, էջ Ա:

կրող «Ազգային սահմանադրություն» փաստաթղթի բովանդակությունը, հատկապես դրա կիրարկման գործիքակազմն ու երաշխիքները, որոնք, սակայն, պակասում էին նրանում, եթե չասենք, ըստ էության՝ բացակայում:

Անշուշտ, փաստաթուղթն իր բովանդակությամբ կանոնադրություն էր. այն կոչված էր կարգավորելու (համակարգելու) Օսմանյան Թուրքիայում հայ համայնքի ու եկեղեցու ներքին՝ ազգային (էթնիկ), հասարակական, կրթա-մշակութային, հոգևոր-կրոնական և այլ գործերը: Իհարկե, պետք է նկատի առնել, որ այն ժամանակների միահեծան ու բռնապետական Թուրքիան տակավին չուներ սեփական համապետական սահմանադրություն, ուստի, բնականաբար, խոսք չի կարող լինել նրա գերիշխանության տակ հեծող արևմտահայության իսկական սահմանադրության մասին: Բայց և այնպես, այն արևմտահայության ազգային ու հոգևոր շրջանակների համար որոշակի ինքնուրույնության, ներքին հանրային կյանքը համակարգելու հնարավորություններ էր ընձեռում:

Ազգային-քաղաքական իմաստով, պետք է տեսնել, որ սահմանադրություն ձևակերպումը վկայում է արևմտահայ լուսավորյալ ազատական-ժողովրդավարական մտավորականության ու ժողովրդի ձգտումը ազգային-մշակութային ինքնության (**ինքնավարության**) կամ գուցե ավելի բարձր նշաձողի՝ **հող-հայրենիքի ազատագրության**: Ուշադրության է արժանի պրոֆ. Հ. Ղազարյանի արտահայտած տեսակետը, որ եվրոպական ազատամտական հովերով տարված հայ լուսավորյալ սահմանադրականներն իրենց կազմած նախագծի մեջ տեսնում էին «**ապագա հայկական բուրժուական հանրապետության սաղմը** (ընդծումը հեղինակին է- Ա. Հ.)»[61]: Արևմտահայերի

[61] **Ղազարյան Հ.**, *Արևմտահայերի տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ.*, Եր., «Հայկ. ՍՍՀ ԳԱ» հրատ., 1967, էջ 453:

Ազգային սահմանադրությունը, ինչ խոսք, նպաստեց արևմտահայ հատվածում ոչ միայն կրթալուսավորական, գրահրատարակչական և առհասարակ ազգային-մշակութային կյանքի աշխուժացմանը, այլև որոշակիորեն սահմանափակելով պատրիարքարանի և կրոնականների (կղերական) իշխող ու ճնշիչ դերակատարությունը (լծակը)՝ դրա փոխարեն սկսեցին ավելի զարգանալ աշխարհիկ հասարակական հարաբերությունները, աշխարհիկ քաղաքացիական սկզբունքներն ու դրանցում աստիճանաբար մեծանալ ժողովրդական զանգվածների դերակատարությունը: «Իր ամբողջ կանոնադրական բնույթով հանդերձ,- կարդում ենք «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակությունում,- սահմանադրությունը սնուցում էր **ազգային ինքնորոշման տրամադրություններ** (ընդ. մերն է – Ա.Հ.)[62]: Նույն կերպ, չի կարելի չհամաձայնել նաև պրոֆեսոր Վ. Պարսամյանի փաստահենք այն եզրահանգմանը, որ **«Ազգային սահմանադրությունը մի լուսավոր էջ էր, արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի հասունության արտահայտություն, նրա առաջադիմական ուժերի պայքարի արդյունք** (ընդգումը հեղինակինն է – Ա.Հ.)» և այլն[63]:

4. 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունների, նաև դրանց հայատառ թուրքերեն տարբերակի հետ համեմատության հարցի շուրջ

Ամենից առաջ աչքի են զարնում սահմանադրություն կամ կանոնադրություն համարվող երկու՝ 1860 թ. և 1863 թ. տարբերակների կառուցվածքի ու հոդվածների քանակական տարբերությունները,

[62] *«Հայոց պատմություն»*, հ. 3, գ. 1, Եր., 2010, էջ 372:

[63] **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.,** *Հայ ժողովրդի պատմություն (1801–1978 թթ.)*, Եր., «Լույս» հրատ., 1979, էջ 175:

որոնք, ինչ խոսք, շատ էական են: Սահմանադրության երկու տարբերակների կառուցվածքային ու հոդվածական համեմատությանը ցույց է տալիս, որ 1860 թ. պատրիարքարանի հաստատած տարբերակը կազմված է **150** հոդվածից, իսկ 1863 թվականինը, վերախմբագրելով, կրճատվելով ու խտացվելով, ամփոփվել է ընդամենը **99** հոդվածում, ինչը գրեթե նույնությամբ պահպանվել է նաև հայատառ թուրքերեն տարբերակում: Հարց է ծագում. հոդվածների նման կտրուկ՝ ավելի քան 1/3-ով կրճատումը չի՞ անդրադարձել արդյոք 1863 թ. Բարձր Դռան վավերացրած վերջնական տարբերակի կառուցվածքի, բովանդակության, իրավական կամ քաղաքական կողմերի վրա:

Ազգային սահմանադրության 1860 թ. մայիսի 24-ի Ազգային ընդհանուր ժողովի կողմից ընդունված և պատրիարքի կողմից Քրիստոսի դրոշմապատկերը կրող պատրիարքական կնիքով վավերացված ու գրեթե երեք տարվա ձգձգումներից հետո՝ 1863 թ. մարտի 17-ին, Բարձր Դռան կողմից վերջնականապես վավերացված տեքստերի կառուցվածքային ու բովանդակային համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև կան շատ մեծ ընդհանրություն, բայց և որոշակի, կարելի է ասել, ոչ էական տարբերություններ:

Երկու տարբերակների համեմատությունը սկսենք Ազգային սահմանադրության՝ ներածական բնույթ կրող «Հիմնական սկզբունք»-ից: Երկու դեպքում էլ պահպանված են **վեցը** հիմնադրույթային կետերը, միայն այն տարբերությամբ, որ կատարվել են հարցերի հաջորդականության ու շարադրանքի որոշ տեղաշարժեր ու վերախմբագրումներ: Այսպես, 1860-ի Ա ենթակետում տեղ գտած՝ «Ազգային Վարչութեանը Օսմանեան Տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէնութիւնը» պահանջը 1863 թ. տարբերակում լրացվել է «Սահմանադրու-

թեան միջոցաւ» կապակցությամբ և որոշ խմբագրմամբ տեղափոխվել է Դ ենթակետ: Այստեղ, թերևս, նկատվող տարբերություններից մեկն այն է, որ եթե կարելի է տարբերություն համարել, որ 1860 թ. տարբերակում նշված «Տաճկաստանի Հայոց»-ի փոխարեն՝ 1863 թ.-ում «Թուրքիոյ Հայոց» է[64]:

1860 թ. «Հիմնական սկզբունք»-ի «Ե» ենթակետում խոսվում է Ազգի բարոյական, մտավոր, նյութական պարտականությունների, Հայաստանեաց Եկեղեցու դավանանքն ու ավանդույթներն անխախտ պահելու և այլ հարցերի մասին: Այս նույն ձևակերպումը տեղափոխվել է 1863-ի Գ ենթակետ, միայն այն տարբերությամբ, որ «**անխախտ**» բառը փոխարինվել է ավելի նուրբ ու բարեհունչ «**անարատ**» բառով[65]:

1863 թ. Ազգային սահմանադրության «Հիմնական սկզբունք» հիմնադրույթների «Ե» ենթակետում տեղ է գտել հետևյալ էական ձևակերպումը, որ «Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ըլլայ[66]», մի բան, որ բացակայում է 1860 թ. տարբերակում, ընդ որում «Երեսփոխանական» բառն ընդգծված է:

Կառուցվածքի առումով, 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունների բուն գլուխների համեմատությունը ցույց է տալիս, որ երկու դեպքում էլ դրանց քանակը նույն է՝ ընդամենը Ե (5) գլուխ, սակայն էապես փոփոխված են գլուխների վերնագրերը, հոդվածների հաջորդականությունը, իսկ առանձին դեպքերում նաև բովանդակությու-

[64] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, Կ. Պոլիս, 1860, էջ 5, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, Կ. Պոլիս-Սթանպոլ, 1860, էջ 12, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գիրք 3, Եր., ԵՊՀ հրատ., 2009, Հավելված 2, էջ 1012:

[65] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»* Կ. Պոլիս, 1860, էջ 6, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 11, նաև՝ **Սիմոնյան Հր.**, նշվ. աշխ., Հավելված 2, էջ 1011:

[66] *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 12, նաև՝ **Սիմոնյան Հր.**, նշվ. աշխ., Հավելված 2, էջ 1012:

նը: Քննության առնվող երկու սահմանադրությունների կառուցվածքի տեսակետից գլուխների վերնագրերի և ենթագլուխների հոդվածների համեմատությունը ցույց է տալիս, որ, ըստ բովանդակության ու հարցադրումների, կատարված է կառուցվածքային և խմբագրական բնույթի տեղաշարժեր ու փոփոխություններ, հոդվածների խտացումներ և այլն, որոնց հետևանքով ավելի է բարելավվել առաջադրված հարցերի ու հոդվածների հաջորդայնությունն ու միմյանց հետ ներքին իմաստային ու տրամաբանական կապը՝ առանց էապես խաթարելու հոդվածների բովանդակությունը, մի խոսքով՝ բուն տեքստի հոդվածային շարադրանքը:

Երկու դեպքում էլ Սահմանադրության ամենագլխավոր ու ամենաընդարձակ գլուխը «Ա»-ն է, որն 1860-ի տարբերակում վերնագրված է «Ազգային վարչություն» գլխագրով և ունի 83 հոդված, իսկ 1863 թ. սուլթանական կառավարության կողմից հաստատվածը վերնագրված է՝ «Ազգային Կենտրոնական վարչութիւն» և ունի մեկով ավելի հոդված՝ 84[67]:

Հաջորդը՝ 1860 թ. Բ գլուխը «Ազգային տուրք» գլխագրով ու 5 հոդվածով, 1863-ի տարբերակում տեղափոխված է Գ գլուխ՝ նույն գլխագրով ու մեկով պակաս 4 հոդվածով[68]:

Ազգային սահմանադրության 1960 թ. 2-րդ ընդարձակ Գ գլուխը, որը վերաբերում է «Ընտրություններ»-ին, ունի 38 հոդված (89-ից մինչև 127-ը)[69]: Սահմանադրության երկու տարբերակների համեմատությունը ցույց է տալիս, որ 1863 թ. վերջնական տարբերակում չկա

[67] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, Կ. Պոլիս, 1860, էջ 7–26, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, Կ. Պոլիս-Սթանպոլ, 1863, էջ 13–49, նաև՝ **Սիմոնյան Հր.**, նշվ. աշխ., Հավելված 2, էջ 1012–1036:

[68] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 26–27, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 51, նաև՝ **Սիմոնյան Հր.**, նշվ. աշխ., Հավելված 2, էջ 1037:

[69] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 27–38:

«Ընտրություններ» վերտառությամբ առանձին գլուխ: Այստեղ սահմանադրության խմբագիր հեղինակները ընտրությունների հետ կապված բոլոր հարցերը իրավացիորեն խմբավորել ու տարալուծել են նախորդ գլուխներում, հիմնականում «Ա» գլխում՝ կապված բոլոր մակարդակի ընտրությունների կազմակերպման ու անցկացման կանոնադրական պայմանների ու պահանջների հետ՝ սկսած պատրիարքի ու Ազգային ընդհանուր ժողովի ընտրություններից, ավարտած գավառային ու թաղային խորհուրդների ընտրություններով: Դրա համար էլ 1863 թ. սահմանադրության գլխավորը հանդիսացող Ա գլխի հոդվածներն իրենց թվաքանակով չեն զիջում 1860 թ. սահմանադրության Ա գլխի հոդվածներին:

Այնուամենայնիվ, սահմանադրության երկու՝ 1860 թ. և 1863 թ. տարբերակների ընդհանուր հոդվածների քանակական նման մեծ խզումը բացատրվում է հիմնականում կառուցվածքային ու խմբագրական բնույթի փոփոխություններով՝ հոդվածների կրճատում-խտացում-վերախմբագրումներով: Այսպես, 1860 թ. տարբերակում «Ազգային տնտեսական խորհուրդ» ենթագլուխն ունեցել է 13 հոդված՝ հերթական 38-ից մինչև 50-րդ հոդվածը ներառյալ, մինչդեռ 1863 թ.-ում այն «Տնտեսական խորհուրդ» անվամբ («Ազգային»-ը չկա՝ Ա.Հ.) սեղմվել ու ձևակերպում է ստացել ընդամենը մեկ՝ թիվ 46 ծավալուն հոդվածում[70]: Կամ, օրինակ, 1863 թ. տարբերակում այլևս մանրամասն չի խոսվում ազգային կալվածքների գնման ու վաճառքի, կտակների հսկման ու դրանց վավերացման, շինությունների, հիվանդանոցների ու ծերանոցների պահպանման ու վերահսկման, նյութական ու տնտեսական հարցերի մասին: Մեկ այլ պարագայում, 1860 թ. Ա գլխի Ժ (10-րդ)՝ «Ազգային դիվանատուն» 9 հոդվածանոց ենթագլուխը 1863 թ. տարբերակում տեղափոխվել է նույն Ա գլխի Բ (2-րդ) ենթակետ, «Կ. Պոլսի պատրիարք»-ից հետո, «Պատրիարքական դիւանատուն» վերնագրով (դարձյալ «ազգային»-ը չկա՝ Ա.Հ.)՝ առանց բովանդակությունը էապես խաթարելու, սահմանափակվելով ընդամենը 4 հոդվածով և այլն[71]:

[70] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 17–19, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 30-31, նաև՝ **Սիմոնյան Հր.**, նշվ. աշխ., Հավելված 2, էջ 1023–1024:

Հաշվի առնելով, որ նախկինում Ս. Երուսաղեմի Հայոց պատրիարքի ընտրությունների առնչությամբ հաճախակի խնդիրներ էին ծագում, հատկապես «ներսէն, թէ դուրսէն» թեկնածուի առաջադրման ու ընտրության հարցում[72], ուստի 1863 թ. սահմանադրության մեջ մտցվել է մի առանձին՝ Գ ենթագլուխ, որի 21-րդ հոդվածում սահմանվում էր՝ «Ս. Երուսաղէմի Պատրիարքը Կոստանդնուպօլսոյ Ազգային Ժողովներուն կողմէն կ՛ընտրուի»[73]: Մինչդեռ 1860 թ. տարբերակում այդ մասին որևէ հիշեցում չկա: Դրանով հարթվեցին 1860-1861 թթ. Երուսաղեմի պատրիարքական ընտրությունների ընթացքում պահպանողականների ու սահմանադրականների միջև ծագած լուրջ տարաձայնությունները, մինչև իսկ կռիվ-ծեծկռտուքը:

Նույն կերպ, իբրև տարբերություն նկատել տանք նաև, որ 1860 թ. տարբերակի 8-րդ հոդվածում խոսույթ կա Ազգային վարչության, Կ. Պոլսի պատրիարքի և Արարատյան Մայր Աթոռի հետ ունեցած և այսուհետ շարունակվելիք «Ազգ ու Մայր Աթոռ» միասնությամբ ավանդական կապի ու հարաբերությունների մասին[74], մի բան, որ այս անգամ արդեն բացակայում է սահմանադրության 1863 թ. վերջ-

[71] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 22–24, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 20–21, նաև՝ **Սիմոնյան Հր.**, նշվ. աշխ., Հավելված 2, էջ 1017:

[72] Տե՛ս **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Բ, Պէյրութ, 1961, էջ 4034–4036:

[73] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, Կ. Պոլիս- Սթամպօլ, 1863, էջ 22:

[74] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, Կ. Պոլիս, 1860, էջ 9–10:

նական տարբերակում: Այս կապակցությամբ կարելի է դատողություն անել, որ խմբագրության անդամները միգուցե քաղաքական նկատառումով դուրս են թողել այդ հոդվածը, որպեսզի հատուկ չընդգծվի Կ. Պոլսի պատրիարքության և Ս. Էջմիածնի մայր Աթոռի հետ կապը, ինչը պիտի դիտարկել ռուս-թուրքական ոչ ցանկալի քաղաքական հարաբերությունների ու տարանջատ ազդեցության գոտիների համատեքստում:

Ի պաշտոնե Ազգային ժողովների նախագահ հանդիսացող պատրիարքի իրավունքների ու պարտականություններին վերաբերող 1860 թ.՝ 14-ից-19-րդ հոդվածների, իսկ 1863 թ.՝ 8-ից–12-րդ հոդվածների բովանդակային համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև էական տարբերություններ չկան[75]:

Ինչ վերաբերում է մյուս շատ էական տարբերությանը՝ Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորական տեղերի քանակական կազմին ու սոցիալ-դասային հարաբերակցությանը, ապա թվային պատկերը հետևյալն է՝ 1860 թ. Ազգային սահմանադրության հոդված 9-ը սահմանում էր, որ «Ազգային Ընդհանուր ժողովը կը բաղկանայ **220** ազգային երեսփոխաններէ, որոնցմէ 160-ը Պոլսի թաղերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ (ի դեպ, միայն Գում Գափուի մայր եկեղեցուն բաժին էր հասնում 24 պատգամավոր – Ա.Հ.), եւ 60-ը առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ»[76]:

Այստեղ կարելի է դատողություն անել այն մասին, որ պատգամավորներից 160-ը Պոլսի թաղերի եկեղեցիների կողմից են ընտրվելու, բայց որոշակի չի ասված, թե սոցիալ-դասային կազմի տեսակետից երեսփոխաններից քանիսն են աշխարհիկ և քանիսը եկեղեցական (հոգևորականներ) լինելու: Այդ նույն՝ 9-րդ հոդվածում նշվում է,

[75] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 12–14 *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 18–19:

[76] *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 10:

որ Ազգային կենտրոնական վարչութեան Կրոնական ու Քաղաքական ժողովների և չորս տեսչական խորհուրդների անդամներից ու թաղական խորհուրդների ատենապետներից ընտրվելու էր 100 երեսփոխան[77]:

Բայց բերվածը հիմք չի տալիս հետևեցնելու, թե այդ նշված 100-ը միայն աշխարհական երեսփոխաններ են լինելու, քանզի դրա մեջ ներառված, օրինակ, Կրոնական ժողովի անդամներն իրենց կազմով եկեղեցականներ (հոգևորականներ) էին: Նույն կերպ նույնպես, հստակ սահմանված չէ, թե սոցիալ-դասային պատկանելության տեսակետից Պոլսի թաղերի կողմից ընտրված 160 պատգամավորներից 100-ը պիտի լինեի՞ն զուտ աշխարհիկ բնագավառի (ոլորտի) անձինք, իսկ 60-ը՝ միայն եկեղեցական, թե՞ ոչ, մանավանդ որ այդ 160 պատգամավորներն ընտրվելու էին Պոլսի թաղերի եկեղեցիներում: Սա նշանակում է, որ ընտրվելիք պատգամավորների սոցիալ-դասային կազմի հարցում հստակություն չի եղել: Եվ այդ առումով հնարավոր չէ միանշանակ պնդել, թե Կ. Պոլսի թաղերում ընտրվելիք 160 երեսփոխաններից 100-ը աշխարհիկ անձինք էին լինելու, իսկ 60-ը՝ կրոնավորներ, ինչը հաճախ տեղ է գտել մեր պատմագիտական գրականության մեջ: Այդ անորոշության մասին նույնպես ակնարկված է այդ նույն՝ հոդված 9-ի տողատակում, որ «Այս յոդվածը վերաքննելի է»[78]: Մի խոսքով, սահմանադրության 1860 թ. տարբերակում որոշակի հստակություն չկա, թե ընտրվելիք 160 երեսփոխաններից քանիսը պիտի պատկանեին եկեղեցական դասին և քանիսը՝ աշխարհիկ:

Նույնը կարելի է ասել թուրքահայ առաջնորդանիստ գավառների կողմից ընտրվելիք 60 երեսփոխանների սոցիալական (աշխար-

[77] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 10:

[78] *Նույն տեղում*, էջ 11:

հիկ թե հոգևորական) կազմի մասին: Չի բացառվում, որ գավառներում ընտրված պատգամավորների շարքում լինեին նաև հոգևորականներ, մանավանդ որ նրանք ընտրվում էին գավառային առաջնորդական վիճակներում (թեմերում), իսկ կրթական ցենզի տեսակետից նրանք խնդիր չունեին: Այստեղից կարելի է հետևեցնել, որ 1860 թ. ընտրական համակարգում պատգամավորների (աշխարհիկ և հոգևորական), թվակազմի վերաբերյալ չի եղել հստակություն:

Մյուս կողմից՝ կարող է հարց ծագել, թե ինչու է պատգամավորական տեղերի նման մեծ տարբերություն է եղել. Կ. Պոլսի համար՝ 160, իսկ գավառների համար ընդամենը 60 պատգամավորական տեղ (լիմիտ), և սա այն դեպքում, երբ գավառահայ ազգաբնակչությունը շուրջ տասնապատիկ գերազանցել է Կ. Պոլսի թաղերի հայությանը: 1860 թ. սահմանադրությամբ քաղաք-գավառ համամասնության նման մեծ խզումը կարելի է բացատրել ա/ Կ. Պոլիս մայրաքաղաքի գավառների նկատմամբ ունեցած առանձնահատուկ կարգավիճակով, բ/ գավառների բնակչության կրթական համեմատաբար ցածր մակարդակով և, իհարկե, դրան միգուցե պիտի հավելել սահմանադրության հեղինակների սուբյեկտիվ կարծիքը: Ի դեպ, մայրաքաղաք-գավառ պատգամավորների թվաքանակի այդ խզումը գրեթե նույն համամասնությամբ պահպանվեց սահմանադրության 1863 թ. վերջնական տարբերակում:

Պատգամավորների թվաքանակի և սոցիալ-դասային կազմի պատկերը միանգամայն այլ է 1863 թ. վավերացված սահմանադրության տարբերակում, որում մի շարք անորոշություններ վերացվել են: Նախ՝ էապես (80 տեղով) կրճատելով պատգամավորների ընդհանուր թվաքանակը, ապա 57-րդ հոդվածի և՛ հայերեն, և՛ հայատառ թուրքերեն տարբերակներում հստակ ու վերջնականորեն սահմանված է, որ «Ազգային Ընդհանուր ժողովը **140** երեսփոխաններէ կը

բաղկանայ, որոնցից Ա. 20-ը եկեղեցականք երեսփոխանք են, զոր Կոստանդնուպոլսոյ մէջ գտնուող եկեղեցանք կ՛ընտրեն, Բ. 40-ը գաւառներէն եւ Գ. 80-ը Կոստանդնուպոլսոյ թաղերէն ընտրուած երեսփոխանք են»[79]: Բերվածից ակներև է դառնում, որ 1860 և 1863 թթ. Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորների հարաբերակցության մեջ հոգևորական երեսփոխանների թիվը նախկինի համեմատ եռակի կրճատվել է՝ 60-ից դառնալով 20, իսկ աշխարհիկ պատգամավորների թիվն ավելացել է 20-ով՝ 100-ից դառնալով 120: Այս ամենն ինքնին վկայում է Ազգային ժողովում վերջիններիս գերիշխող դիրք ունենալու և խորհրդարանի ավելի ու ավելի աշխարհիկ բնույթ ստանալու մասին: Խորհրդանշական կարելի է համարել այն, որ այն ժամանակների Ազգային ընդհանոր ժողովի և մեր ժամանակների ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվաքանակը, անկախ իրենց առջև ծառացած խնդիրների ու առաքելության տարբերությունների, քիչ է տարբերվում:

Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորների թվակազմի ու ընտրությունների հետ կապված 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունների մյուս տարբերությունն այն է, որ վերջինիս դեպքում ոչ միայն Ազգային ընդհանուր ժողովի կազմը 60 պատգամավորով պակաս է նախորդից, այլև այն, որ նախորդում, 220 պատգամավորի ընտրությունից զատ, խորհրդարանի նիստերին ի պաշտոնե մասնակցելու էին պետական, եկեղեցական, ազգային, ուսումնակրթական, հրատարակչական, լրագրական, մշակութային, զինվորական վերին դասերի ներկայացուցիչներ: Դրանով Ընդհանուր ժողովի մասնակից անդամների թիվը կարող է հասնել մինչև **400**-ի, թեև

---

[79] **Սարուխան Ա.,** *Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860–1910),* հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 25–26, «Յավելված», էջ 76: **Պալասաեան Ստ.,** *Պատմութիւն Հայոց (սկզբից մինչեւ մեր օրերը),* Թիֆլիս, 1895, էջ 746, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.),* էջ 39:

նրանք պաշտոնապես ընտրված պատգամավորներ չեն համարվում, այլ՝ **անդամակիցներ**: Բայց և սահմանվում էր, որ Ընդհանուր ժողովի նիստ հնարավոր է հրավիրել միայն ընտրյալ երեսփոխանների նվազագույնի՝ 111-ի առկայության պարագայում[80]: Ի պատասխան դրա, փաստենք, որ 1863 թ. սահմանադրությամբ ոչ մի խոսք չկա Ազգային ընդհանուր ժողովի ընտրությունների և խորհրդարանի նիստերին նման քանակությամբ անդամակից ներկայացուցիչների (մարդկանց) մասնակցության վերաբերյալ: 1863-ի տարբերակում այդ պահանջը ևս հանված է: Մի դիտարկում ևս. քանի որ 1863 թ. սահմանադրությամբ պատգամավորների թիվը կրճատվում էր 60-ով, իսկ դրանում եկեղեցականների չափաբաժինը՝ մի քանի անգամ, այստեղից էլ՝ հասկանալի է, որ մեր կղերապահպանողական շրջանակներում սահմանադրությանը տրվել են բացասական որակումներ: Դրան հակառակ՝ ազգային քաղաքական իմաստավորման տեսակետից հարկ է արձանագրել, որ Ազգային ընդհանուր ժողովում և ազգային մյուս կառույցներում աշխարհական տարրերի նման գերակշիռ դիրքի գրավումը ինքնին խոսում է հայ քաղաքական մտքի հասունացման ու աշխարհականացման մասին:

Ինչ վերաբերում է 1863 թ. Ազգային սահմանադրության հայերեն և թուրքերեն տեքստերին, ապա դրանց համեմատությունից դարձյալ նկատվել են որոշ տարբերություններ: Նախ արձանագրենք, որ ընդունված և վավերացված «Ազգային սահմանադրության» հայերեն և թուրքերեն բնագրերը համարվում են Հայոց պատրիարքարանի պաշտոնական հրատարակություններ: Դրանց ամենաէական տարբերությունն այն էր, ինչպես արդեն ասվել է, սահմանադրության հայերեն և թուրքերեն թարգմանության վերնագրերը իրար չեն համապատասխանում, մի դեպքում՝ «Ազգային Սահմանադրութ-

[80] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 11:

յուն Հայոց», իսկ մյուսում՝ «Նիզամնամէի միլլէթի էրմէնիան» կամ թարգմանաբար «Հայ ազգի Կանոնադրություն»: Սակայն երկու տարբերակներն էլ համարվել են հավասարապես պաշտոնական ուժ ունեցող օրենք: Ավելին, Ազգային սահմանադրությունը «Հայոց Պատրիարքարանի Կանոնադրութիւն» անունով ընդգրկված է եղել Օսմանյան պետական օրենքների ժողովածուի 2-րդ հատորում[81]:

Ազգային սահմանադրության հայերեն և թուրքերեն տարբերակների լեզվական տարբերություններից մյուսն այն է, որ եթե հայերեն տարբերակում պատգամավորը անվանվում է «երեսփոխան» կամ «պատգամավոր», մինչդեռ թուրքերենում՝ փոխանակ գործածվեր համապատասխան՝ «մէբուս» բառը, այնինչ տեղ է գտել՝ «միլլէթ վեքիլի», ինչը թարգմանաբար նշանակում է՝ «ազգի փոխանորդ», իսկ առանձին դեպքերում հանդիպում են նաև՝ «մէջլիսի ումումի ազասը» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է «Ընդհանուր ժողովի անդամ»[82]:

Իր հերթին, Հ. Շահրիկյանը, համեմատելով 1863 թ. սահմանադրության հայերեն և հայատառ թուրքերեն տեքստերը, նկատել է տալիս ևս մի քանի ոչ էական տարբերություններ: Այսպես՝ սահմանադրության 1-ին գլխի Ա ենթակետի «Պատրիարքի ընտրութիւն եւ հրաժարում» մասի թուրքերեն տարբերակում բացակայում է «հրաժարում» բառը: Նույն գլխի Դ ենթակետում՝ հայերեն «Ազգային Կրոնական ժողով» ձևակերպումից հայատառ թուրքերենում բացակայում է «ազգային» բառը, նույնը Ը ենթակետում՝ «Ազգային Ընդհանուր ժողով»-ը գլխագրում դարձյալ չկա «ազգային» բառը և այլն[83]: Բերվածից կարելի է հետևեցնել, որ տեքստի հայ թարգմանիչները

[81] Տե՛ս **Ատոմ**, *Ազգային Սահմանադրութիւնը, Կ. Պոլիս, «Արծիւ» ժող. գրաւաճառանոցի*, 1914, էջ 7:

[82] **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 254:

[83] Տե՛ս **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 48–49:

այն թուրքերենի վերածելու ժամանակ հավանաբար գիտակցաբար խուսափել են «**ազգային**» արտահայտության գործածումից, այլապես հայատառ թուրքերեն թարգմանության ժամանակ վրիպում կարող էր լինել ամենաշատը մեկ-երկու դեպքում: Բերվածից կարելի է հետևեցնել, որ սահմանադրության հայատառ թուրքերենի թարգմանիչները խուսափել են տեքստում գործածել թուրքական իշխանությունների համար անցանկալի քաղաքական իմաստ պարունակող բառեր, հասկացություններ ու արտահայտություններ:

Այսպիսով, Ազգային սահմանադրության երկու՝ 1860 թ. և 1863 թ. տարբերակների պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև սկզբունքային ու իմաստային լուրջ տարբերություններ չկան, եթե զուտ քանակական առումով հաշվի չառնենք պատգամավորների թվակազմի 60-ով պակաս լինելը, սակայն բովանդակային և իրավական առումով վերջինս ստացել էր ավելի հստակ ձևակերպում: Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ 1863 թ. վերջնական սահմանադրությամբ պատրիարքի և հոգևոր իշխանությունը առհասարակ թուրքահայ համայնքում, նաև Ազգային ժողովում նվազել էր՝ հօգուտ աշխարհիկի:

5. Ազգային ընդհանուր ժողովի կառուցվածքը, ընտրություններն ու գործունեությունը

Բարձր Դռան կողմից վավերացված Ազգային սահմանադրության համաձայն՝ բարձրագույն օրենսդիր մարմինը **Ազգային** (երես փոխանական) **ընդհանուր ժողովն** էր, որը հանդիսանում էր միջնորդ Բարձր Դռան (սուլթանական կառավարության) և հայ ազգի միջև:

Ազգային սահմանադրությամբ, դեռ 1840-ական թվականներից հայտնի (գործող) Գերագույն ժողովը անվանափոխվեց **Ազգային կենտրոնական վարչության**, որն հանդիսանում էր գործադիր մարմին: Դրանց կից ձևավորվեցին նաև **Կրոնական** և **Քաղաքական** ժողովներ[84]: Ազգային սահմանադրության «Հիմնական սկզբունքներ»-ի Դ ենթակետով արձանագրվում էր, որ Թուրքահայոց ներքին գործերի տնօրինությունը՝ օսմանյան տերության հատուկ արտոնությամբ և Սահմանադրությամբ, իրականացնելու էր **«Ազգային Կեդրոնական վարչությունը»**[85]**:** Այն պիտի ունենար համապատասխան գործառնական (գործադիր) իրավասություններ[86], այլ խոսքով՝ օրենքով գործադիր իշխանություն իրականացնողը Կենտրոնական վարչությունն էր: Ընդ որում, Կենտրոնական վարչության՝ իբրև կառավարչական մարմնի անդամները պետք է ընտրություններով անցած երեսփոխաններ (պատգամավորներ) լինեին[87]: Ազգային սահմանադրությամբ ամրագրված էր, որ Կենտրոնական վարչությունը՝ իբրև գործադիր իշխանության մարմին, առաջնորդվելու էր իրավունքի և պարտականության միասնության սկզբունքով՝ ապահովելու արդարությունն ու օրինականությունը[88]: Սահմանադրությամբ Կրոնական և Քաղաքական ժողովները ևս ունեին իրենց վարչությունները: Դրանք իրավասու էին առաջադրելու թափուր մնացած պատրիարքական աթոռի տեղապահի թեկնածությունը և ապա նաև անցկացնել տալու նրա ընտրությունը և այլն:

Գործառույթներ իրականացնելու առումով, Ազգային սահմանադրության 1-ին գլխի 1-ին իսկ հոդվածը սահմանում էր Ազգային

---

[84] Տե՛ս **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 31–34:

[85] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., «Ցավելված», էջ 24:

[86] Տե՛ս **Կոստանդյան Է.**, *Մկրտիչ Խրիմյան*, Եր., «Զանգակ-97» հրատ., 2000, էջ 155:

[87] Տե՛ս **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 40:

[88] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., «Ցավելված», էջ 26:

ընդհանուր ժողովի նախագահի կարգավիճակը, որն ամենաբարձր պաշտոնն էր, և Ընդհանուր ժողովում ընտրված Կ. Պոլսի հայոց պատրիարքն ի պաշտոնե միաժամանակ դառնում էր նաև Ազգային ժողովի նախագահ[89]: Սուլթանական կառավարության կողմից հաստատված 1863 թ. վերջնական տարբերակում **պատրիարքի իշխանությունը**, եկեղեցու և հոգևորականության դերը, համեմատած նախորդի՝ 1860 թ-ի հետ, էապես սահմանափակվում էր: Քանի որ Ազգային ընդհանուր ժողովում աշխարհական պատգամավորները մեծապես գերակշռելու էին, ուստի պատրիարքի ընտրության, օրակարգային ու ընթացիկ հարցերի քննարկման ու որոշում ընդունելու պարագայում, բնականաբար, մեծանում էր նրանց դերակատարությունը, այդ նույն բանը հուշում են նաև մշակված հոդվածները:

Պատրիարքը թեև միաժամանակ Ազգային ժողովի նախագահն էր, սակայն նրա գործադիր իշխանության իրավասությունները սահմանափակված էին, և նրա պաշտոնը, կարելի է ասել, կրում էր ավելի շատ **արարողակարգային** բնույթ: Այդ սահմանափակումներն արտացոլված են սահմանադրության մի շարք հոդվածներում՝ 8–11-րդ[90]: Այսպես, Ազգային ընդհանուր ժողովի նախագահին, նույնն է թե՝ պատրիարքին ուղղված գործերը նա պիտի հանձներ պատկան՝ Կրոնական և Քաղաքական ժողովներին: Կամ թե 8-րդ հոդվածով՝ պատրիարքի որևէ թագրիր (խնդրագիր) կամ այլ պաշտոնական գրություն վավերական և գործադրելի չէր, եթե այն չէր ստանում պատկան ժողովի գրավոր համաձայնությունը՝ «կնքեալ եւ ստորագրեալ»[91]: Պատրիարքը պարտավոր էր ընթացք տալ իրավասու ժո-

[89] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 13, նաև՝ **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., «Ցավելված», էջ 28:

[90] Տե՛ս **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 51:

[91] *«Ազգային Սահմանադրութիւն հայոց» (1863 թ.)*, էջ 18, նաև՝ **Սիմոնյան Հր.**, նշվ. աշխ., Հավելված 2, էջ 1016:

ղովների բոլոր որոշումներին: Եվ վերջապես, պատրիարքը չէր կարող լուծարել կամ չեղյալ համարել որևէ ժողով կամ խորհուրդ, կամ չեղյալ համարել դրանց որոշումները[92]: Փաստենք, որ պատրիարքին վերաբերող այդ հոդվածական պահանջները խմբագրական աննշան փոփոխություններով պահպանված են և՛ 1860 թ., և 1863 թ. տարբերակներում:

Այդպիսով, վերը բերվածից կարելի է հետևություն անել, որ այստեղ առկա է եղել, սովորաբար սահմանադրական երկրներին բնորոշ՝ **Ազգային ընդհանուր ժողովի** նախագահ-պատրիարքի՝ իբրև օրենսդիր մարմնի ղեկավարի և **Ազգային կենտրոնական վարչության**՝ իբրև գործադիր մարմնի իրավասությունների **տարանջատում** (բաժանում): Միաժամանակ, հավելենք, որ սահմանադրության 11-րդ հոդվածով՝ Կենտրոնական վարչությունը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից, ուստի և հաշվետու էր այդ նույն ժողովի առջև[93]:

Արձանագրենք, որ 1863 թ. սահմանադրությամբ անցկացված երեսփոխանական ընտրություններից հետո Ազգային ընդհանուր ժողովի հանդիսավոր բացումն ու առաջին նիստը տեղի է ունեցել 1863 թ. սեպտեմբերի 20-ին: Այստեղ նիստի ատենապետ է ընտրվել Ներսես եպս. Վարժապետյանը, ձևավորվել է Ազգային ժողովի դիվանը (քարտուղարությունը)՝ իր դիվանադպիրներով, նորընտիր Ազգային կենտրոնական վարչությամբ և այլն:

Ազգային կենտրոնական վարչությունը իրենից ներկայացնում էր գործադիր խառը մարմին՝ կազմված երկու՝ ազգային **Քաղաքական** և **Կրոնական** ժողովներից՝ իբրև համապատասխան գործերի տեսչական մարմիններ[94]: Ընդ որում, Քաղաքական ժողովը՝ բաղկացած

[92] Տե՛ս **Ատոմ**, նույն տեղում, էջ 51:

[93] Տե՛ս **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 52:

[94] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 238, նույնի՝ «Ցավելված», էջ 34, նաև՝ **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 34:

20 աշխարհականներից, վարում էր ազգային քաղաքական (աշխարհիկ) բնույթի գործերը (հոդվ. 36), իսկ Կրոնականը՝ կազմված 14 եկեղեցականներե, հոգում էր ազգային հոգևոր-կրոնական գործերը: Ազգային ժողովն էր ընտրում Քաղաքական և Կրոնական ժողովների անդամներին: Կատարենք ևս մի արձանագրում. Սահմանադրության 58-րդ հոդվածով՝ «Կրօնական եւ քաղաքական Ժողովոց անդամները Ընդհանուր Ժողովին ներկայ կը գտնուին, բայց եթէ Երեսփոխան ընտրուած չեն՝ Ընդհանուր Ժողովին մէջ քուէ չ՛ունին»[95]:

Սահմանադրությամբ Կենտրոնական վարչությունը՝ իբրև գործադիր իշխանություն, ընթացիկ գործերը վարում էր այդ ժողովների միջոցով (հոդվ. 24): Այդ երկու ժողովները միանալով կազմում էին **Խառն ժողով**: Բացի այդ՝ ինչպես ժամանակակից սովորական խորհրդարանները, հիմնվում էին դատաստանական (իրավական)), տնտեսական, ֆինանսական (ելևմտից), ազգային տուրքերի, ուսումնական (կրթական), վանական (վանօրէից) և թաղական խորհուրդներ, ազգային գավառական վարչություններ, ազգային հիվանդանոցի (առողջապահության) հոգաբարձության, կտակաց, պանդխտության և այլն[96], որոնք վարում էին համապատասխան տեսչական ժողովները: Գավառներում գործում էին գավառային վարչություններ: Տեղական բնույթի հարցերը լուծելու և դրանց կատարմանը վերահսկելու համար Կ. Պոլսում ստեղծվելու էին թաղային խորհուրդներ: Գավառների գործերը տնօրինելու էին ազգային գավառական վարչությունները՝ տվյալ եկեղեցական թեմի առաջնորդի նախագահությամբ:

Ինչ վերաբերում է Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորների ընտրություններին, ապա դրանք անցկացվում էին Կ. Պոլսի

[95] *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, Կ. Պոլիս-Սթանպոլ, 1863, էջ 39:

[96] Տե՛ս **Սարուխան Ա.,** նշվ. աշխ., էջ 22-23, նաև՝ **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.,** նշվ աշխ., էջ 174–175:

թաղերում և գավառներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Ընտրելու իրավունք ունեին 25 տարին, իսկ ընտրվելու՝ 30 տարին լրացած, նախկինում չդատված անձինք: Պատգամավորներն ընտրվում էին 10 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր 2 տարին մեկ Ազգային ընդհ. ժողովի կազմի 1/5-ով թարմացվելու, նորոգվելու (ռոտացիայի) պայմանով[97]: Հոդված 70-ով սահմանվում էր, որ կարևորություն չէր տրվում, թե ընտրվելիք պատգամավորները Կ. Պոլսի տվյալ թաղի բնակիչ է, թե արևմտահայ որևէ գավառի, այլ բավական է, որ նրանք «իրենց ներկայացուցած թաղին կամ գաւառին ազգային գործոցը հմուտ ըլլան, եւ ազգասիրութեամբ, ուղղութեամբ եւ արդարախոհութեամբ ընտրողաց յարգն ու համարումը ստացած անձինք ըլլան»[98]: Այստեղից էլ՝ Կ. Պոլսի որևէ թաղից կամ գավառից ընտրված երեսփոխանները Ընդհանուր ժողովում ներկայացնում էին բովանդակ ազգը, ուստի և համարվում էին **ազգային երեսփոխաններ**:

Ֆինանսական առումով Ազգային ժողովն ուներ իր սեփական Ելմտացույցը (բյուջեն) կամ «Ազգային Կեդրոնական Սնտուկը»: Իբրև օրինակ՝ նշենք, որ 1879/1880 թթ. ֆինանսական տարվա հաստատված հասույթն ու ծախքը կազմել են 540 հազար ղուրուշ (1 արծաթ մեջիթը հավասար 20 ղուրուշ հաշվով)[99]: Ելմտացույցի հարցերով զբաղվում էր Քաղաքական ժողովը: Հասույթի գլխավոր աղբյուրներն էին՝ Ազգային տուրքը (աշխատանք և որոշակի շահույթ ունեցող հայ անհատները[100]), առաջնորդական վիճակների, Կ. Պոլսի և եկեղեցի-

[97] Տե՛ս https://armhistory.do.am.

[98] **Սիմոնյան Հր.**, նշվ. աշխ., Հավելված 2, էջ 1033:

[99] Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», բացում 1879 ամին, նիստ Բ, մայիս 18-ին, 1879, Կ. Պոլիս, «Ս. Միքայէլեան» տպագրատուն, 1879, էջ 42–43-ին կից հաշվետու ներդիրը:

[100] Հոդված 65-ում սահմանված էր, որ աշխարհական երեսփոխանների ընտրության կապակցությամբ՝ ընտրողը տարեկան գոնե 75 ղուրուշ ընդհանուր տուրք պիտի վճարի (տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 42):

ների տուրքերը, Աղթամարի ճանապարհորդների (զբոսաշրջության) առուծախքի գրասենյակի, նշանադրության, պսակադրության, դատական վճռի հասույթները, դրոշմատուրք և այլն: 93-րդ հոդվածով գավառների կողմից պատրիարքարանին տրվելիք տուրքի բաշխման և հավաքման եղանակը պիտի որոշեր Ազգային ընդհանուր ժողովը[101]: Սա էլ է ցույց տալիս ֆինանսական առումով պատրիարքարանի դերի ու կշռի նվազման մասին: Փաստաթղթում չկան տվյալներ Օսմանյան կառավարության կողմից Հայոց ազգային կառույցներին ֆինանսական օժանդակություն հատկացնելու վերաբերյալ:

Ազգային սահմանադրությամբ կամ Կանոնադրությամբ սահմանված էին Ազգային ժողովի ընտրական կարգը, ժողովի նախագահության, նիստերի վարման, հարցերի քննարկման ու քվեարկությունների ընթացակարգը և այլն: Ազգային ընդհանուր ժողովը իրավասու էր ստեղծել նախաքննիչ հանձնախումբ (հանձնաժողով)՝ լսելու և քննելու զանազան հարցեր, դրանց վերաբերյալ կազմել ու ներկայացնել զեկուցագրեր, իսկ վերջնական վճիռը կայացնում էր Ազգային Ընդհանուր ժողովը՝ գաղտնի փակ քվեարկությամբ[102]: Ազգային երեսփոխանական Ընդհանուր ժողովը գումարվում էր երկու տարին մեկ (նախկին տարբերակով՝ ամեն տարի)՝ տվյալ տարվա ապրիլի վերջերին և պիտի տևեր երկու ամիս, իսկ եթե հանգամանքների հրամայականով արտահերթ նիստի հրավիրման անհրաժեշտություն ծագեր, ապա դրա համար կպահանջվեր Բարձր Դռան համաձայնությունը (հաճութիւնը)[103]:

1863 թ. Ազգային սահմանադրության հոդված 59-ի համաձայն՝ կանոնավոր նիստ հրավիրելու համար պահանջվում էր պատգամավորների ընդհանուր թվի (140) առնվազը 70+1, այսինքն՝ նվազագույնը 71 երեսփոխանի ներկայություն: Ինչ վերաբերում էր Ազգային սահմանադրության փոփոխության ենթարկելու խնդրին, ապա վերջին՝ 99-րդ հոդվածը սահմանում էր, որ նրա սկզբունքները անփոփոխելի են, իսկ սուր անհրաժեշտություն ծագելու պարագայում այն կարող է փոփոխության ենթարկվել հաստատումից միայն 5 տարի անց և այլն[104]:

Ազգային սահմանադրության քաջագիտակ հետազոտողներից Առաքել Սարուխանի գնահատմամբ՝ 1860 թ. և 1863 թ. սահմանադրություններում ընդհանուր առմամբ պահպանված էր «**նոյն ոգին**, (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.), միայն այն տարբերութեամբ, որ նորը՝ 1863թ-ին ավելի ամփոփ էր եւ աւելի գործնական կարգադրութիւններ էր բուանդակում»[105]: Արձանագրենք, որ տվյալներ կան նաև, որ հայոց Ազգային սահմանադրության մշակման աշխատանքներին նաև պոլսահայ մասոնների[106] մասնակցության վերաբերյալ: Մասնավորապես, հայ մասոնականության պատմության քաջագիտակ հետազոտող Ռուբեն Բերբերյանը 1937 թ. ՀՅԴ Բոստոնի «Հայրենիք» ամսագրի 5-9-րդ համարներում հրատարակված «Հայ մասօնները եւ «Սէր» օթեակը Պօլսոյ մէջ» հոդվածաշարում զարգացնում է այն միտքը, որ պոլսահայ մասոնական շարժումը ծնվեց որպես հակազդեցություն ավելի արմատական 1860 թ. «Ազգային սահմանադրության» ճանաչման շուրջ սուլթանական կառավարության ցուցաբերած խոչընդոտներին[107]: Ի դեպ, Ռ. Բերբերյանը Կ. Պոլսի մասոնա-

[101] Տե՛ս *«Ազգայի Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 51:
[102] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., «Յավելված», էջ 36:
[103] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 251 և նույնի՝ «Յավելված», էջ 78:

[104] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 44-45 և «Յավելված», էջ 76 և 104:
[105] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 25:
[106] Մասոնը (mason) լատիներեն բառացի նշանակում է քարտաշ, որմնադիր (տե՛ս **Մովսիսյան Ֆ.**, *Մասոնները և Ամերիկյան հեղափոխությունը*, հ. 1, Եր., «Լուսակն», 2015, էջ 8:
[107] Տե՛ս Էլ. կայք՝ panarmenian.net/arm/details/209379/.(21.01.23), նաև՝ **Բերբերյան Ռ.**, *Հայ մասօնները և «Սէր» օթեակը Պօլսոյ մէջ*, (տե՛ս «Հայրենիք», Պոսթըն, 1937, N 5 (173), մարտ, էջ 74):

կան «ՍԷր» օթյակի հայ անդամների շարքին էր դասում Մ. Մամուրյանին, Հ. Սվաճյանին, Մկրտ. Պեշիկթաշլյանին, Կար. Յութուճյանին, Ար. Հեքիմյանին, Ստ. Փափազյանին, Ս. Թագվորյանին և ուրիշների[108]:

6. Պարմագիրական գնահատականներ

Իր չափավորությամբ ու թերություններով հանդերձ՝ Ազգային սահմանադրությունը իրավաքաղաքական և հոգևոր-կրթական ու այլ առումներով, անշուշտ, պետք է համարել էական առաջընթաց քայլ արևմտահայության կյանքում: Այն իբրև իրավաքաղաքական փաստաթուղթ, իր նպաստն է բերել հայ ազգային **ինքնագիտակցության** վերելքի, **պետականության** գաղափարի արթնացման ու զարգացման գործում: Ակներև է, որ սահմանադրության եվրոպական կրթություն ստացած հեղինակները՝ Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Ն. Պալյանը, Սերվիչենը, Կ. Ութուճյանը և ուրիշներ քաջ ծանոթ են եղել Շ. Շահամիրյանի կերտած «Որոգայթ փառաց» սահմանադրական աշխատությանը: Արևմտահայ բանասեր և ազգային գործիչ, բժիշկ Վ. Թորգոմյանը հայտնում է, որ Սերվիչենի եղբայրը Կալկաթայից Կ. Պոլիս էր բերել «Որոգայթ փառաց» գրքի մի օրինակ[109]: Արևմտահայ ազգային սահմանադրության առաջամարտիկներից էր նաև ազատական-ժողովրդավար հրապարակախոս Մ.

[108] Տե՛ս **Բերբերյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 75:

[109] Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), **Վ. Թորգոմյանի** ֆոնդ, գ. 44, էջ 3:

Մամուրյանը: Բայց նա ավելի ուշ հիասթափվեց ու հեռացավ սահմանադրական պայքարի թատերաբեմից[110]:

Հայոց պետականության գաղափարի ժառանգորդության դիտանկյունից կարելի է որոշ զուգահեռներ անցկացնել «**Որոգայթ փառաց**»-ի և «**Ազգային սահմանադրության**» միջև այն իմաստով, որ եթե «Որոգայթ փառաց»-ում, հեռավոր Հնդկաստանում, թեկուզև կտրված իրական հայրենի հողից, խոսվում էր Հայոց սուվերեն (ինքնիշխան) **ժողովրդավարական (հանրապետական-պառլամենտական) պետության** ստեղծման մասին, ապա «Ազգային սահմանադրություն»-ում՝ օսմանյան պետության կազմում ազգային **ինքնավարության** հասնելու մասին, գուցե իբրև առաջին քայլ:

Արևմտաեվրոպական հեղափոխությունների ազդեցությամբ ստեղծված արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, որը շատերը համարում են հայ եկեղեցու և ազգի համար մշակված մի կանոնադրություն, որի առանձին մտքեր ու դրույթներ ընդօրինակված էին ֆրանսիական սահմանադրությունից, բայց հայ շրջանակների կողմից մշակված Ազգային Սահմանադրության նախնական տարբերակը, մինչ կվերանայվեր սուլթանական իշխանությունների կողմից, այնքան բովանդակալի ու արմատական է եղել, որ կղերա-պահպանողական հոսանքի ամենավառ դեմքերից Հովի. Չամուռճյանի (Տեր-Հոյենց) կարծիքով, սահմանադրության նախնական տարբերակով, դրա հեղինակները հավակնություն են ունեցել՝ «**պետություն ստեղծել** պետության մեջ»[111]: Այսինքն՝ արևմտահայության ճակատագրով մտահոգ մտավորականությունը փորձել է խաղաղ, սահմանադրա-

[110] **Ղազարյան Հ.**, *Մ. Մամուրյանի հասարակական-քաղաքական հայացքները 1860–1870-ական թվականներին* (տե՛ս «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ հաս. գիտ., Եր., 1957, թիվ 3, էջ 96–97):

[111] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, Եր., 1955, գ. 1, էջ 387, **Ատոմ**, *Ազգային Սահմանադրութիւնը*, Կ. Պոլիս, 1914, էջ 7, **Ալպոյաճեան Ա.**, *Ազգային Սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը*, Կ. Պոլիս, 1910, էջ 120 և 406:

կան ճանապարհով հասնել անկախության, ինչը, կարծում ենք, օսմանյան բռնապետության պայմաններում այնքան էլ իրատեսական չէր:

Բայց և այնպես, որքան էլ նշավակենք այդ փաստաթղթի շատ կողմերով ձևական, անորոշ և ոչ գործուն լինելը, այդուհանդերձ դրանում թուրքահայության համար հոգևոր-մշակութային առումով սահմանվում էր **էքստերիտորիալ** ազգային ինքնորոշման իրավունք: Այն նրա **ներքին կյանքը**, ազգային, կրոնական, կրթա-մշակութային և այլ գործերը կանոնակարգող մի կանոնադրություն էր, իր ժամանակի ու պայմանների համար նոր երևույթ և առաջընթաց քայլ: Հ. Շահրիկյանի բնութագրմամբ՝ «Սահմանադրութիւնը կոչուած օրէնքը կրօնական կամ եկեղեցական առանձնաշնորհ մը չէ՛ր, այլ զուտ ներքին ինքնավարութեան բնական իրաւունք»[112]: Նա հայության համար ներքին ինքնավարական օրենքը համարում էր «դարերու ընթացքին հայ ժողովրդի նուաճած բնական իրավունքներու նուիրագործում»[113]: Իսկ Ա. Ալպոյաճյանի դիտարկմամբ՝ այդ փաստաթուղթը ավելի մեծ հնարավորություն էր տալիս Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, պահպանողական շրջանակներին կառավարելու հայ համայնքները[114]: Արդարև, կարելի է ասել, որ արևմտահայերի Ազգային սահմանադրությունը շոշափելի հետք թողեց հայ հասարակական-քաղաքական մտքի, ազգային ինքնագիտակցության աճի ու ժողովրդավարական գաղափարների արմատավորման գործում:

Մյուս կողմից, եթե զուգահեռներ ենք անցկացնում 1863 թ. արևմտահայերի Ազգային սահմանադրության (թող որ երբեմն որակվել է պատրիարքական կանոնադրություն), իր չափավորությամբ ու ոչ լիարժեքությամբ հանդերձ, այնուամենայնիվ, համեմա-

[112] **Ատոմ,** *Ազգային Սահմանադրութիւնը,* Կ. Պոլիս, 1914, էջ Բ:
[113] **Ատոմ,** նշվ. աշխ., էջ 11:
[114] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 120:

տած, այս անգամ արդեն, ավելի վաղ ռուսահայ իրականության մեջ արդեն գործող 1836 թ. մարտի 11-ի Ռուսաց Նիկոլայ 1-ին կայսեր ստորագրած, հայ եկեղեցու **Կանոնադրության** («**Պոլոժենիե**») հետ, որով Մայր Աթոռը փաստորեն շնորհազրկվում էր մինչ այդ իր ունեցած շատ իրավասություններից, այդ թվում՝ քաղաքական բնույթի հարցերով զբաղվելուց, ակներև է դառնում արևմտահայ հոգևոր շրջանակների իրավունքների գերակայությունը արևելահայերի իրավունքների նկատմամբ գործառութային և այլ հարցերում: Օրինակ, անժխտելի է, թե Հայկական հարցի վաղ արծարծումների ժամանակ ինչպիսի ակտիվություն էր հանդես բերում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, Մեծին Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը և այլն, չէ՞ որ Մ. Խրիմյանն էր գլխավորում պատրիարքարանի պատվիրակությունը Բեռլինի վեհաժողովում, իհարկե, դրանում չանտեսելով նաև Բարձր Դռան խորամանկելու քայլը՝ դավադիր ընթացքն ու արդյունքները:

Ա. Ալպոյաճյանը համադրելով ու համեմատելով 1836 թ. «Պոլոժենիեն» և արևմտահայերի 1860 և 1863 թթ. սահմանադրությունները, նշում էր, որ թեև երկու եկեղեցական օրենքները խմբագրվել էին համապատասխան կառավարությունների կողմից, սակայն «Ազգային Սահմանադրութեան բազմաթիվ տրամադրութիւնները շատ վաղեմի ծագում մը ունին եւ օրէնքով նուիրագործում մը միայն ստացած են Ազգային Սահմանադրութեամբ»[115]: Ինչ վերաբերում է Թուրքիայում Կ. Պոլսի հայոց պատրիարքի ունեցած կարգավիճակի հարցին, ապա հայ համայնքին ավելի կենտրոնացված վերահսկելու ու կառավարելու համար սուլթանական կառավարությունը, Կիլիկիայի և Աղթամարի կաթողիկոսական և Երուսաղեմի պատրիարքական աթոռ-

[115] **Ալպոյաճեան Ա.,** *Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը,* Գահիրէ, 1945, էջ 3:

ների համեմատ, նրան տրվել էր ավելի բարձրադիր (գերադաս) կարգավիճակ[116]: Միաժամանակ սուլթանական կառավարությունը ձգտել է արևմտահայությանը հեռու պահել արտաքին՝ հիմնականում հայոց հոգևոր առաջնորդի՝ Ամենայն հայոց կաթողիկոսի ազդեցությունից, քանզի դրանում տեսնում էր ժողովրդի քաղաքական կողմնորոշումների խնդիր:

Արևմտահայ Ազգային սահմանադրության անվան հարցում տարակարծություն կա հայ պատմագիտական մտքում: Մասնավորապես, խորհրդահայ պատմաբանները, նկատի առնելով նրա բովանդակային ու գործառնական մի շարք թերությունները, հակված են այն որակել ընդամենը «կանոնադրություն»[117]: Դրան հակառակ՝ արևմտահայ հեղինակները հայ ազգի համար սահմանադրական, նույնիսկ քաղաքական իմաստ էին տեսնում[118]:

Ա. Սարուխանի դիտարկմամբ՝ Ազգային սահմանադրության գործադրմամբ թուրքահայերը կես դարից ավելի վարել են իրենց բոլոր ներքին ազգային, կրոնական, կրթական գործերը: Հետազոտող համարձակություն է ունեցել օսմանյան կառավարության կողմից հաստատված պետական այդ օրենքը համարել «հայկական ազգային ինքնավարութեան օրենք» և փորձել է Ազգային սահմանադրությունը գաղափարի ու նպատակի առումով շաղկապել 1870-ական թվականների կեսերից մեծամասամբ հայ գործիչների ջանքերով ար-

[116] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 4:

[117] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.Գ.,** *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 1, Եր., 1955, էջ 363 և 384, **Պարսամյան Վ.,** *Հայ ազատագրական շարժումների պատմությունից*, Եր., 1958, էջ 37, **Ղազարյան Հ.,** *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ. և այլք*:

[118] Տե՛ս **Օտեան Գ.,** *Սահմանադրական իսկքեր ու ճառեր*, Կ. Պոլիս, 1910, էջ ԼԲ, **Սարուխան**, *Հայկական խնդիրը եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ Բ, **Ատոմ,** *Ազգային Սահմանադրութիւնը (Գիծեր մեր մշակույթի պատմութենէն)*, Կ. Պոլիս, 1914, էջ 11, **Չորմիսյան Լ.,** *Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան*, հ. Ա, Պէյրութ, 1972, էջ 215:

ծարծած ու ասպարեզ իջած Հայկական խնդրի հետ: Դրանով նա աշխատել է **ազգային, բայց ոչ տարածքային** պահանջի գաղափարը քաղաքականապես հասունացնելով՝ դրան տալ «**հողային**» կամ **տարածքային (territorial) ինքնավարության** բնույթ[119]: Սարուխանն այդ երկու խնդիրները դիտարկում էր միասնության մեջ, որ «մէկը ծնունդ է տուած միւսին»[120]: Ուստի պատահական չէ, որ նրա արժեքավոր մենագրությունում քննության առնված այդ երկու խնդիրները՝ Հայկական հարցը և Ազգային սահմանադրությունը՝ իբրև ուսումնասիրության նյութ, դարձել են մեկ ընդհանուր վերնագիր: Ինչևէ, անժխտելի է Ազգային սահմանադրության ունեցած դերը հայ ազգային ինքնագիտակցության վերածնման ու պետականության գաղափարի կաղապարման գործում: Այդ առնչությամբ օտարերկրյա որոշ հեղինակներ արձանագրում էին հայերի քաղաքական գիտակցության ուժեղացումը, հատկապես այն, որ սահմանադրությունն արևմտահայ համայնքը կրոնականից սկսեց վերածել քաղաքականի[121]:

7. Վերջաբանի փոխարեն

Այդպիսով, արևմտահայոց Ազգային սահմանադրությունը պետք է դիտել որպես հայ հասարակական-քաղաքական մտքի ուշագրավ թռիչք, ազգային-մշակութային ներքին **ինքնավարության** մի դրսևորում, որը հեռանկարում պիտի ունենար քաղաքական ինքնավարության, իսկ վերջին հաշվով՝ ինքնիշխանության ու անկախության նպատակ: Բայց, դժբախտաբար, հետագա զարգացումներն այլ ըն-

[119] Տե՛ս **Սարուխան Ա.,** *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ Բ:

[120] **Սարուխան**, նույն տեղում:

[121] Տե՛ս *«Германские источники о геноциде армян»*, т. 1, Ер., изд. «Айастан», 19916 с. 171.

թացք ու վախճան ունեցան: Միք. Վարանդյանի դիտարկմամբ՝ Ազգային սահմանադրության ընձեռած կրթա-մշակութային կյանքի հնարավորությունները, ինչ խոսք, խթանեցին «հայ ազգային ինքնագիտակցութունը, որ նախերգանք էր ազատագրական շարժումի»[122]: Անժխտելի է, որ Ազգային սահմանադրությունը հետագա տասնամյակների ընթացքում արթնացրեց միասնական ազգի ու **պետության գաղափարը** և նոր մակարդակի հասցրեց հայ իրավաքաղաքական միտքը:

Արևմտահայ Ազգային սահմանադրության հանդեպ ժողովուրդն այնպիսի հույսեր ու ակնկալիքներ է փայփայել, որ այն արտացոլում է գտել գեղարվեստական գրականության մեջ: Ահա մի քառյակ սահմանադրությանը նվիրված Հարություն Սվաճյանի «Արիք Հայկազուն» հիմնից:

«Արի՛ք Հայկազունք, առաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ՛ալ տանք:
Որ ազգ երբ զԱնի փրկարար կոչեց,
Նո՛ր հոգի, նո՛ր կեանք Անոր պարգևեց»[123]:

Իսկ Լեոն, հավելելով դրան, նշում է, որ «Կ. Պոլսի ժողովուրդը ամեն տարի **մայիսին** (նկատի էր առնվում մայիսի 24-ը) տոնում էր այդ ինքնավարության տարեդարձը, երգվում էր «Արիք հայկազունք»-ը»[124]:

Մյուս կողմից, գնահատական տալու առումով, չպետք է ընկնել ծայրահեղության մեջ, քանզի 19-րդ դարի երկրորդ կեսին արևմտահայ բուն զանգվածը շարունակում էր կրել օսմանյան բռնապետության սոցիալ-տնտեսական, ազգային-քաղաքական ու կրոնական հարստահարումների ու նվաստացումների ծանր բեռը:

Արևմտահայոց սահմանադրական շարժման կապակցությամբ ուշադրության է արժանի այն հանգամանքը. թեև Հայոց Ազգային ժողովի երեսփոխանները սոցիալական կազմի տեսակետից բազմաշերտ էին, սակայն նրանում հիմնականում ընդգրկված էին Կ. Պոլսի հայ պահպանողական, էֆենդիական և հոգևորական շերտերը: Բուն արևմտահայ նահանգների հայությունը գործնականում շարունակում էր մնալ իրավազուրկ և բոլոր առումներով անպաշտպան: Ի լրումն դրա՝ հնարավոր չէ մոռացության մատնել Մեծ վանեցի, Կ. Պոլսի պատրիարք **Մկրտիչ եպս. Խրիմյանի** պատկերած «Հայգոյժ»-ի ու «Վանգոյժ»-ի հրապարակումները, Վանի մեծ հրդեհը, արևմտահայության աղետալի վիճակը պատկերող գավառական հարստահարությունների վերաբերյալ փաստավավերագիր տեղեկագրերն ու ժողովածուները, Ազգային ժողովի պաշտոնական արձանագրությունները՝ «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», «Դիւան Հայոց պատմութեան» բազմահատոր տեղեկագրերը, որոնք, ըստ Սահմանադրության ու հայրենասեր պատրիարքի թափած ջանքերի, ներկայացվում էին օսմանյան կառավարությանը: Կարելի է նկատել, որ Մ. Խրիմյանի պատրիարքության (1869–1873 թթ.) օրով Ազգային ժողովը ավելի գործուն կերպով է զբաղվել ազգային քաղաքականության խնդիրներով:

Այդ ամենից զատ՝ ժամանակ առ ժամանակ Ազգային ժողովի ամբիոնից լսվում էին գավառահայ ժողովրդի աղեկտուր արձագանքները թուրք-քրդական հարստահարությունների ու կամայականությունների մասին: Այդ կապակցությամբ հայտնի են հայկական գավառներով շրջագայած բելգիացի իրավաբան Գ. Ռոլեն-Ժեքմենի խոսքերը՝ թեև կար եվրոպական սահմանադրությունների ոճով

---

[122] **Վարանդեան Մ.,** *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն,* հ. 1, Փարիզ, 1932, էջ 18:

[123] **Մխիթարյան Մ.,** *Մի անտիպ փաստաթուղթ ցարական գրաքննության արխիվից* (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1966, N 2 (33), էջ 144:

[124] **Լեո**, *Երկերի ժողովածու, տասը հատորով,* հ. 6, Եր., 1987, էջ 513:

հայերի Ազգային սահմանադրությունը, սակայն չկար երաշխիք, որի վրա հայը կարողանար հենվել, որպեսզի քուրդը չխլեր նրա ոչխարները, բեյը չբռնաբարեր նրա աղջկան ու չկողոպտեր նրա ունեցվածքը կամ հարկահանը մի քանի անգամ չպահանջեր միևնույն հարկը և այլն[125]: Այլ խոսքով՝ չկար որևէ երաշխիք, թե թուրքական կառավարությունը պարտավորություն կստանձներ ապահովելու իր հպատակների անվտանգությունն ու կյանքը՝ կանխելու կամ օրենքով պատժելու ամեն տեսակ անօրինականություն, բռնություն ու կամայականություն: Հայտնի էր, որ դատարանում տաճկահայ գեղջուկի վկայությունը իրավական ուժ չուներ, հպատակ հայը՝ իբրև գյավուր (անհավատ) և ռայա (իրավազուրկ հպատակ), զենք կրելու իրավունք չուներ, հայերի համար չկային կյանքի, գույքի, պատվի, իրավունքների ապահովության երաշխիքներ և այլն: Եվ այդ տեսակետից տեղին է պրոֆ. Ա. Խառատյանի դիտողությունը, որ դա «անտարակույս, Ազգային սահմանադրության ամենամեծ թերությունն էր»[126]:

Արդեն թանզիմաթյան դարաշրջանի վերջնափուլում՝ 1870-ական թվականների կեսերին, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի ու տարածաշրջանում լարված միջազգային հարաբերությունների պայմաններում ասպարեզ եկան, այսպես կոչված «Նոր օսմանները»: Նրանց գաղափարախոս Միդհատ Ահմեդ փաշան կազմում է օսմանյան Թուրքիայի պատմության մեջ համապետական 1-ին Սահմանադրությունը, որին իր գործուն մասնակցությունն է բերել նախկինից ճանաչված սահմանադրագետ Գր. Օտյանը[127]: 1876 թ. գարնանը՝ մայիսին, «Նոր օսմանների» կազմակերպած պալատական հեղաշրջման միջոցով սուլթան Աբդուլ Ազիզը գահընկեց է արվում ու ինքնասպան լինում: Սկզբում օսմանյան գահը ստանձնում է Մեհմեդ Մուրադ 5-րդը, սակայն մի քանի ամիս անց, սուլթանական աթոռը գրավում է նրա եղբայր Աբդուլ Համիդ 2-րդը, որն էլ իր ավելի քան երեք տասնամյակների (1876–1909 թթ.) ջարդարարական քաղաքականության համար այդ ժամանակաշրջանը պիտի ստանար «**Զուլումի**» (դաժանությունների) դարաշրջան, իսկ ինքն էլ՝ «**Կարմիր**» սուլթան մականունը:

Իբրև «թանզիմաթյան» շարժման շարունակություն՝ **1876 թ. դեկտեմբերի 23-ին** հռչակված սահմանադրությամբ Թուրքիան համարվեց սահմանադրական միապետություն: «Նոր օսմանների» ղեկավար Միդհատ փաշան ստանձնեց մեծ վեզիրի (վարչապետի) պաշտոնը, և երկրում կարծես ռեֆորմների փորձեր արվեցին: Պետք է ասել, որ արդեն փորձառության որոշ ճանապարհ անցած հայոց Ազգային սահմանադրությունը՝ իբրև ազդակ, ինչ-որ չափով իր նպաստն էր բերում կայսրության հպատակ այլացեղ ու այլադավան ժողովուրդների շրջանում ազգային ու ժողովրդավարական գաղափարների տարածման ու հասունացման իմաստով: Ի դեպ, ընդունված սահմանադրությամբ Օսմանյան խորհրդարանում հայերը զբաղեցրել են մեկ տասնյակից ավելի պատգամավորական տեղեր:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում արևմտահայերը, այդ թվում Ազգային ժողովի երեսփոխանները, ոգևորված ռուսական զենքի հաջողություններով, երեսփոխանների մի մեծ խումբ Ղալաթիոյ Կենտրոնական վարժարանի շենքում գումարեցին ոչ պաշտոնական մի խորհրդակցություն և որոշեցին հայկական դա-

[125] **Густав Ролен-Жекмэн М.,** *Армения, армяне и трактаты* (տե՛ս *Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году,* М., изд. тип. «Рассвет», 1896, с. 19).

[126] **Խառատյան Ա.**, Դարձյալ արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին (ՊԲՀ, Եր., 2008, թիվ 2, էջ 84):

[127] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում,* գիրք 3, Եր., 2009, էջ 504:

տը ներկայացնել «յաղթական Ռուսաստանի բարեհայեցողութեանը»[128]: Այդ նպատակով, դեռ Սան-Ստեֆանոյի (նախնական) պայմանագրից առաջ, նրանք իրենց հերթին մշակել էին մի չափավոր՝ Հայաստանին ինքնավարություն տալու մասին ծրագրային բնույթի պահանջների մի նախագիծ, որը իբրև պիտի հասցվեր Սբ. Էջմիածին կաթողիկոսին, բայց այն հետագա ընթացք չստացավ[129]:

Թռուցիկ ակնարկ ձգելով Ազգային ժողովի արձագանքին Հայկական հարցում՝ չի կարելի ասել, թե Ազգային ժողովը, պատրիարք ու նույն ժողովի նախագահ Ներսես արք. Վարժապետյանը, իսկ նրա հրաժարականից հետո պատրիարքի փոխանորդ, Ազգային ժողովը նախագահող Մաթեոս եպիսկ. Իզմիրլյանը բավարար ուշադրություն չեն դարձրել համայն հայությանը հուզող խնդրին: Սակայն դժբախտաբար այլ բան է, թե վերջին հաշվով այդ թափված ջանքերը ինչ արդյունք տվեցին:

Ազգային ժողովը դեռ 1876 թ. դեկտեմբերի 10-ի իր նիստում՝ «մեր ազգին իրավանց պաշտպանութեան յանձնառութեամբ» միաձայնությամբ արտոնել էր Ներսես պատրիարքին, որպեսզի նա իր ջանքն անխափան «յառաջ մղէ ամեն ուր որ հարկ լինի»[130]: Արդեն ռուս-թուրքական պատերազմի շրջանում ու դրա ավարտից հետո Ազգային ժողովում օրակարգային «Հայոց խնդրով» քանիցս կազմակերպվել են քննարկում-լսումներ, հարցի լուսաբանման նպատակով կազմվել են տեղեկագրեր, հղվել են դիմումներ պատկան մարմիններին՝ թե՛ Բարձր Դռանը և թե՛ եվրոպական տերություններին Հայկական խնդրի արդարացի լուծման ակնկալիքով: Հայկական խնդրի առնչությամբ Ազգային ժողովը ստեղծել էր նախաքննիչ հանձնաժո-

[128] **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 259:

[129] Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 349–350:

[130] *«Ստենագրութիւնք Ազգային ժողովոյ»*, բացում 1878 ամին, նիստ Ա., 2 հունիս 1878, Կ. Պոլիս, «Ս. Միքայէլեան» տպագրատուն, 1878, էջ 10:

ղով, երեսփոխանների կողմից արվել են անհատական և խմբային հարցապնդումներ, անցկացվել են լսումներ տաճկահայ նահանգների գաղթականության խնդրով և այլն: Ազգային ժողովն իր 1878 թ. Բ. նիստում լսել է պատրիարքի պատասխանը արդեն Բեռլինի դաշնագրի արդյունքների մասին: Հատկանշական է, որ այդ կապակցությամբ 20 երեսփոխանների խմբային հարցին պատրիարք Ն. Վարժապետյանը պատասխանել է անորոշ ու խուսափողական ժողովրդական իմաստնություն դարձած հետևյալ խոսքով՝ «...երբ չես կրնար ընել ինչ որ կ՛ուզես, պէտք է ընես ինչ որ կրնաս»[131]:

Ինչ վերաբերում է Միդհատյան սահմանադրությանը, ապա շատ չանցած, երբ Բեռլինի վեհաժողովում մեծ տերությունների քաղաքական աճպարարությունների հետևանքով Հայկական հարցը գործնականում մնաց «օդից» կախված, 1878 թ. պաշտոնապես չեղյալ համարվեց Թուրքիայի այդ առաջին սահմանադրությունը, որը, ինչպես հայտնի է, հետագայում պիտի վերակենդանանար երիտթուրքերի 1908 թ. հուլիսյան պետական հեղաշրջմամբ և հայ ժողովրդի համար թողած իր շատ ավելի ծանր հետևանքներով: Այնուամենայնիվ, Հայոց Ազգային ժողովը ներքաղաքական բարդացող պայմաններում ընդհատումներով շարունակել է իր աշխատանքները: Արձանագրենք, որ հայ ազգային քաղաքական կուսակցությունների ասպարեզ գալով՝ Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովում երեսփոխանական տեղեր սկսեցին զբաղեցնել տարբեր կուսակցությունների խմբեր ու խմբակցություններ, որոնց միջկուսակցական բանակռվի դաշտ էր դառնում նաև Ազգային ժողովը:

1908 թ., ըստ էության, նույն բովանդակությամբ միդհատյան (օսմանյան) սահմանադրության վերակենդանացումից հետո, Կ. Պոլ-

[131] *«Ստենագրութիւնք Ազգային ժողովոյ»*, բացում 1878 ամին, նիստ Ե., 21 հուլիս (և. տ. օգոստոսի 2) 1878, Կ. Պոլիս, 1878, էջ 63:

սի Հայոց պատրիարք Եղիշե արք. Դուրյանը փորձ արեց Ազգային սահմանադրության ոգով բարենորոգել հայոց եկեղեցին: Այդ նպատակով հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչների մասնակցությամբ 1910 թ. հրավիրվեց Պոլսի Կեդրոնական եկեղեցական ժողով՝ Օսմանյան սահմանադրության «ոգով» նախապատրաստելու ապագա ազգային-եկեղեցական բարենորոգումների նոր նախագիծ: Դժբախտաբար Ե. Դուրյանի պատրիարքական գահակալումը շատ կարճ եղավ: 1910 թ. նոյեմբերի 26-ին գումարված Ազգային երեսփոխանական ժողովը 38 ձայնով, 8 դեմով ընդունեց հիվանդ Եղիշե պատրիարքի հրաժարականը, իսկ 1911 թ. փետրվարին նա վախճանվեց և սկսված ձեռնարկը, միջազգային հարաբերությունների հետագա բարդացման հետևանքով, մնաց անկատար[132]: Այդուհանդերձ, արևմտահայերի Ազգային սահմանադրությունը և դրա իրավաօրենսդրական գլխավոր մարմին հանդիսացող Ազգային ժողովը գործեց մինչև 1915 թ., երբ Ազգային ժողովի պատգամավորների և ազգային կառույցների անդամների մեծագույն մասը Մեծ եղեռնի զոհ դարձավ:

Այսպիսով, արևմտահայ հասարակական կյանքում, այն էլ սուլթանիզմի հայահալած բռնաճնշիչ մթնոլորտում, նշանակալի առաջընթաց քայլ պիտի դիտել սահմանադրական շարժումը և դրա արդյունքում ընդունված Ազգային Սահմանադրություն-Կանոնադրությունը: Այդ երևույթն ինքնին քաղաքական ու հոգևոր առումներով իր նպաստը պիտի բերեր հայ իրավաքաղաքական մտքի զարգացման, պետականության գաղափարի հետագա հասունացման ու բյուրեղացման գործում: Նկատել տանք, որ Ազգային սահմանադրության մի շարք գաղափարներ, սկզբունքներ ու դրույթներ իրենց

[132] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.,** *Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը,* Գահիրէ, 1945, էջ 64–65, նաև՝ **Սիմոնյան Հր.,** *Ազատագրական պայքարի ուղիներում,* գիրք 4, Եր., 2010, էջ 884–885:

ձևակերպումն են ստացել մերօրյա հայկական սփյուռքի համայնքների հոգևոր ու աշխարհիկ կառույցների կանոնադրություններում: Ավելին՝ դրա շատ մտքեր, թեզեր ու ձևակերպումներ իրավահաջորդության ու պատմական ժառանգորդության հիմքով տեղ են գտել մեր օրերի (ժամանակների) ՀՀ սահմանադրության մեջ:

Իբրև վերջաբան՝ կատարենք ևս մեկ արձանագրում. պետաիրավական առումով 1863 թ., արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, չնայած իր խմբագրված, գրականության մեջ երբեմն հանդիպող՝ «թլպատված»[133] բնորոշմանը, այդուհանդերձ, հանդիսանում է սուլթանական կառավարության կողմից իրավաբանորեն հաստատված (վավերացված) ու շուրջ վեց տասնամյակ պաշտոնապես գործողության մեջ եղած, օրենքի ուժ ունեցող իրավաբանական փաստաթուղթ: Արևմտահայերենով ասած՝ «անիկա հավաստում էր» արևմտահայ աշխարհիկ և հոգևոր հատվածների՝ Բարձր Դռան կողմից ճանաչման և նրանց կյանքի տարբեր ոլորտների բարենորոգմանն ուղղված քայլերի ձեռնարկման փաստը, ինչը ներկայիս դիտանկյունից ու չափումներով վկայում է արևմտահայության ազգային իրավունքների ճանաչման անհրաժեշտության մասին: Ներկայումս այդ իրավունքների կրողն ու հոգևոր պահանջատերը առաջին հերթին Մեծին Տանն Կիլիկիոյ կաթողիկոսությունն է և Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը:

Այդ նույն համատեքստում, նկատի ունենալով 20-րդ դարասկզբին երիտթուրքական կառավարության (իշխանավորների) կողմից արևմտահայության հանդեպ իրականացրած համազգային մեծ ոճիրը՝ Մեծ եղեռնը, արևմտահայության հայրենազրկումը, նրա ունեցվածքի, սեփականության, բանկային ավանդների, մշակութային ար-

[133] **Նալբանդյան Մ.,** Երկերի լիակատար ժողովածու, վեց հատորով, հ. 4, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 292, նաև՝ *«Հայոց պատմություն»,* հ. 3, գ. 1, Եր., 2010, էջ 370:

ժեքների կողոպուտը, յուրացումը կամ ոչնչացումը՝ հայության այդ հատվածի հետնորդ-ժառանգները իրենց հոգևոր և աշխարհիկ կառույցներով՝ կազմակերպություններով, հիմնարկություններով, միություններով և այլն, ունեն բոլոր հիմքերը միջազգային իրավունքի նորմերով հարց բածրացնելու և պահանջատեր լինելու իրենց քաղաքական, նյութական, հոգևոր ու բարոյական իրավունքների վերականգնմանը և կորուստների փոխհատուցմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, 19-րդ դարի 30–50-ական թթ. օսմանյան Թուրքիայի պատմության մեջ հայտնի է «**Թանզիմաթ**»-ի՝ բարեփոխումների ժամանակաշրջան անվամբ: Պատմական այդ շրջափուլում եվրոպական առաջադիմական հեղափոխություններից ազդված, այնտեղ բարձր կրթություն ստացած ու ազատագրական գաղափարներով ոգևորված մի խումբ լուսավորյալ մտավորականներ, հիմքում ունենալով արևմտահայության ծանր ու աղետալի կացությունը, ինչպես նաև օգտվելով դարակեսերին Թուրքիայի համար ստեղծված արտաքին բնույթի ռազմա-քաղաքական բարդ իրավիճակից, սկիզբ են դնում սահմանադրական շարժմանը: Դրա հետևանքով տարիների ընթացքում մշակվում և **1860 թ. մայիսի 24-ին** Ազգային ընդհանուր ժողովի կողմից ընդունվում, իսկ ավելի ուշ տևական քննարկումներից, խմբագրում-կրճատումներից հետո սուլթանական կառավարության (Բարձր Դռան) վավերացմանն է ներկայացվում՝ արևմտահայության ազգային-հոգևոր կյանքի բարեփոխմանն ուղղված Ազգային սահմանադրություն կոչվող մի փաստաթուղթ, որը **1863 թ. մարտի 17-ին** ի վերջո հաստատվում է կառավարության կողմից և ստանում է պետական օրենքի ուժ:

Արևմտահայ առաջադեմ հասարակական-քաղաքական շրջանակները ակնկալում էին ազգային-հոգևոր ինքնավարության պահանջից, ազգային-քաղաքական գաղափարների հետագա հասունացման ճանապարհով, անցում կատարել դեպի տարածքային (հողային) ինքնավարության պահանջին՝ հեռանկարում ունենալով

Արևմտյան Հայաստանի անկախության տեսլականի, ինչը, անշուշտ, **արևմտահայ ազգային ինքնագիտակցության աճի** և **պետականության վերականգնման գաղափարի** մեծ թռիչք պիտի համարել: Չնայած գործող Ազգային սահմանադրության և դրա հիման վրա աշխատող բարձրագույն օրենսդիր մարմինը հանդիսացող Ազգային ընդհանուր ժողովի որոշ ընդհատումներով ավելի քան կեսդարյա գոյության ու գործունեության ընթացքում նկատելի դրական փոփոխություններ կատարվեցին արևմտահայության հասարակական, հոգևոր, կրթա-մշակութային կյանքի շատ ոլորտներում, բայց, դժբախտաբար, սուլթանական բռնավարչակարգի պայմաններում հնարավոր չեղավ «Թանզիմաթի» և Ազգային սահմանադրության շատ դրույթներ կյանքի կոչել, վասնզի դրանցում պաշտոնապես հրատարակված ժողովրդավարական բնույթ կրող շատ օրենքներ ու իրավական ակտեր խորը հակասության մեջ էին բուն թուքական իրականության հետ: Իսկ արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին գործնականում ամեն ինչ տակնուվրա եղավ ու արևմտահայության համար ողբերգական ավարտ ունեցավ:

Նկատի ունենալով 20-րդ դարասկզբին երիտթուրքական կառավարության՝ արևմտահայության հանդեպ իրականացրած մեծ ոճիրը՝ Մեծ եղեռնը, արևմտահայության հայրենազրկումը, նրա ունեցվածքի, սեփականության, մշակութային արժեքների կողոպուտը, յուրացումը կամ ոչնչացումը՝ հայության այդ հատվածի հետնորդ-ժառանգներն իրենց հոգևոր և աշխարհիկ կառույցներով՝ կազմակերպություններով, հիմնարկություններով, միություններով և այլն, ունեն բոլոր հիմքերը՝ միջազգային իրավունքի նորմերով հարց բարձրացնելու և պահանջատեր լինելու իրենց քաղաքական, նյութական, հոգևոր ու բարոյական իրավունքների վերականգնմանը և կորուստների փոխհատուցմանը:

Մեզանից 160 տարի առաջ՝ 1863 թվականի մարտի 17-ին Թուրքիայի օրվան իշխանությունների կողմից պաշտոնապես վավերացված արևմտահայերի Ազգային սահմանադրությունը հայ ժողովրդի ամենաստվար հատվածի՝ արևմտահայության իրավունքների անժամանցելիության և մեր հայրենիքի մեծագույն մասի՝ Արևմտյան Հայաստանի բռնազավթման փաստի մեծագույն պետաիրավական վկայությունն է:

Արարատ Մ. Հակոբյան – պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայոց նոր և նորագույն շրջանների հասարակական-քաղաքական մտքի, հայ քաղաքական կուսակցությունների, Հայաստանի առաջին Հանրապետության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, հայ պատմագրության, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի և այլ բազում հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական և կոլեկտիվ ձեռնարկի ու ուսումնամեթոդական աշխատանքի, ավելի քան 100 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com

ARARAT M. HAKOBYAN

Doctor of Sciences in History, Proffessor

THE CONSTITUTION OF WESTERN ARMENIANS IN THE CONTEXT OF THE IDEA OF ARMENIAN STATEHOOD (1860-1863)

(On the Occasion 160th Anniversary of the Ratification of the National Constitution)

Summary

The 30–50s of the 19th century in the history of Ottoman Turkey, they are known as "Tanzimat", the period of reforms. In that historical period, a group of enlightened Western Armenian intellectuals, influenced by European progressive revolutions and highly educated there, and inspired by liberating ideas, based on the difficult and disastrous situation of Western Armenians, as well as taking advantage of the difficult external military-political situation created for Turkey in the middle, started the constitutional movement, as a result of which 1860 was developed over the years. On May 24, the National General Assembly adopted, and later again after lengthy discussions, editing and reductions, a document called "National Constitution" aimed at improving the national-spiritual life of Western Armenians was submitted to the Sultanate government (Bardzr Daran) for ratification, which finally, in 1863 on March 17, it is approved by the government and becomes a state law.

Western Armenian progressive socio-political circles expected from the demand for national-spiritual autonomy, through the further maturation of national-political ideas, to make a further transition to territorial (land) autonomy, and in the future, having a vision of the independence of Western Armenia, which, of course, is a great factor in the growth of Western Armenian national self-awareness. should be considered flight. Although the current National Constitution and some interruptions of the National General Assembly, which is the highest legislative body working on its basis, during the existence and activity of more than half a century, noticeable positive changes were made in many spheres of social, spiritual, educational and cultural life of Western Armenians, but unfortunately, under the conditions of the Sultanate dictatorship, it was not possible to "Tanzimat" " and to implement many provisions of the "National Constitution", because many laws and legal acts of a democratic nature officially published in them were in deep conflict with the reality of the empire itself. And already during the First World War, practically everything turned upside down and for Western Armenians, at the hands of the Great Armenian Genocide, it had a tragic end.

The appendices contain the constitutions of 1860 and 1863.

АРАРАТ М. АКОПЯН

Доктор ист. наук, проф.

НАЦИОНАЛЬНАЯ КОНСТИТУЦИЯ ЗАПОДНЫХ АРМЯН В КОНТЕКСТЕ ИДЕИ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСИ (1860-1863 ГГ.)

(К 160-летию ратификации «Национальной конституции»)

Резюме

30–50-е годы 19 века в истории Османской Турции они известны как «Танзимат», период реформ. В тот исторический период группа просвещенных западноармянских интеллектуалов, находившихся под влиянием европейских прогрессивных революций и высокообразованных там, и вдохновленных освободительными идеями, исходя из тяжелого и бедственного положения западных армян, а также воспользовавшись трудным внешним военным-политическая ситуация, созданная для Турции в середине, положила начало конституционному движению, в результате которого в **1860-х гг. 24 мая** Общое Национальное Собрание приняло, а затем вновь после продолжительных обсуждений, редактирования и сокращений документ под названием «Национальная Конституция», направленный на улучшение национально-духовной жизни западных армян, был представлен на рассмотрению Султанскую правительству (Блистательную Порту) ратификация, которая, наконец, в **1863 г. 17 марта** он утверждается правительством и становится государственным законом. Западноармянские прогрессивные общественно-политические круги ожидали от требования национально-духовной автономии, путем дальнейшего созревания национально-политических идей совершить дальнейший переход к территориальной (земельной) автономии, а в будущем, имея видение независимости Западной Армении, что, безусловно, является большим фактором роста западноармянского национального самосознания. Несмотря на действующую Национальную Конституцию и некоторые перерывы в деятельности Национальной собрании, являющейся высшим законодательным органом, работающим на ее основе, за более чем полувековую историю существования и деятельности произошли заметные позитивные изменения во многих сферах социальной, духовной, образовательной и культурной жизни западных армян, но, к сожалению, в условиях султанской диктатуры не удалось реализовать многие положения «Танзимата» и «Национальной конституции», потому что многие законы и правовые акты демократического характера официально опубликованные в них, находились в глубоком противоречии с действительностью самой Империи. А уже во время Первой мировой войны практически все перевернулось с ног на голову и для западных армян от рук Великого Геноцида армян он имел трагический конец.

В приложений публикуется тексты Конституции 1860 и 1863 гг.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Սույն աշխատանքը ավելի ամբողջական ներկայացնելու նպատակով՝ հաջորդիվ երկու հավելվածով ներկայացված են 1860 թ. մայիսի 24-ի՝ Հայոց Ազգային ժողովի և 1863 թ. մարտի 17-ի՝ Բարձր Դռան կողմից վերջնականորեն վավերացված Ազգային սահմանադրության տպագիր տեքստերը: Ընդ որում, 1863 թ. սահմանադրության հայերեն բնօրինակ տարբերակի հետ զուգահեռաբար տրված է դրա համարժեք հայատառ թուրքերեն տեքստը: Տեղեկացնենք, որ աշխատության մեջ սահմանադրության երկու տարբերակներից բերված տողատակի հղումները նշված են գրքի ոչ թե ընդհանուր, այլ հավելվածների բնօրինակների համապատասխան էջերով:

Գիտահետազոտական լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար հիմնախնդրով հետաքրքրվող ընթերցողը, իբրև իրավական փաստաթուղթ, կարող է ծանոթանալ դրանց, հասկանալ ժամանակաշրջանի շունչը, համեմատել ու համադրել դրանց բովանդակությունը, հոդվածային կառուցվածքը, Օսմանյան կայսրության պայմաններում արևմտահայերի հասարակական, համայնքային, հոգևոր ու կրթամշակութային ներքին կյանքը կանոնակարգող պետաիրավական այդ փաստաթղթին, որն ընդհատումներով գործել է ավելի քան կես դար՝ գործնականում մինչև հայոց Մեծ եղեռնը:

ՀԱՎԵԼՎԱԾ – 1


ԱԶԳԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՑՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ· ՄԱՏԹԷՈՍԻ
ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Տ· ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ց Ա Ն Կ

ՀԻՄՆԱԿԱՆ ԸՍԿԶԲՈՒՆՔ · · ·

ԱՋԳԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

1860

Պատրիարքական կնքով չը վաւերացեալ օրինակաց Ճշդըրտութիւնը երաշխաւորեալ չէ։

ԵԶԳԱՑԻՆ

ՍԵՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Ա.

Ազգն ամեն մէկ անհատը ազ Ազգը պարտաւորութիւններ ունի. Ազգնալ իր կողմէն ազ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգէն և Ազգն անհատներէն։

Այս պարտքերն ու իրաւունքները հաստատող իշխանութիւնը ազգային Կարգութիւն կը կոչվի, որովհետև Օսմանեան Տէրութիւնէն յատուկ աշխատութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց անօրէնութիւնը։

Բ.

Ազգային Կարգութիւնը հիմնեալ է իրաւանց ու պարտեաց սկզբունքին վրայ, որ արդարութեան սկզբունք է. իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունք է։ Ամենայն անձ բնութիւն ազգային որ չէ համաձայն այն սկզբանց, չէ արդար է և ոչ օրինաւոր։

Գ.

Ազգն ու ազգային Կարգութիւնը փոխադարձ պարտաւորութիւններով կապված են իրարու հետ։

Դ.

Ազգայնոց պարտականութիւն է Ազգին պիտոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կարողութեան չափովը. Ազգին ընդրած ծառայութեանցը յանձնառու ըլլալ, և ազգային Կարգութեան ըրած անօրէնութեանցը ազգասիրաբար հնազանդիլ։

Ե.

Ազգային Կարգութեան պարտականութիւն է Ազգին բարոյական, մտաւորական և նիւթական պիտոյիցը հոգ տանիլ, Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյ գաւանութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ դիտելեաց ուսումն Ազգին ամեն աստիճանի թէ մանչ և թէ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնները պայծառ պահել. Ազգին հաստատներն օրինաւոր կերպով աւելցնել և ծախքերը իմաստութեամբ տնտեսել. Ազգին ծառայութեանը մէջտեղ ջենապէտ նուիրեալ անձանց կայութիւնը լուծնել և ապագան անդորրել, կարօտելոց խնամ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարութեամբ հաղորդել, և վերջապէս Ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը աշխատութիւն չը խնայել։

Զ.

Նկատ այս ամեն պարտիքներուն կատարելու և իրաւունքներուն ապահովելու դիտմամբ է որ Ազգը հեռաւեալ կերպով կը սահմանադրե ազգային գործոց վարչութիւնը։

ԳԼՈՒԽ Ը.

ԱԶԳԱՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄՔ-ԻՒՆ

1. Բարձրագոյն Դրան չնորհած արտօնութեանը համեմատ՝

Ազգային վարչութիւնը երեսփոխանական է։

Ազգը ընդհանուր ժողովով մը կընտրկայանայ և անոր միջնորդութեամբը կը վարէ ազգային իշխանութիւնը։

Ընդհանուր ժողովը՝ Ազգին ընդհանրական գործոց անօրինութիւնն իրեն պահելով, սովորական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներու կը յանձնէ, կրօնական գործոց մասը՝ Կրօնական ժողովի մը, քաղաքական գործոց մասը՝ Քաղաքական ժողովի մը. իսկ խառն գործոց անօրինութիւնը՝ այս երկու ժողովոց առժամանակեայ մէկ տեղ գալովը ձեւացած խառն ժողովին կը յանձնէ։

2. Ազգային վարչութիւնը՝ աշխատութեանց բաժանումը բարեկարգութեան առաջին պայման բռնելով, ազգային գործոց մէջ տեսչութիւնն ու մատակարարութիւնը իրարմէ կը զատէ երկու կարգ խորհուրդներու միջոցով։

Տեսչութեան համար՝ ազգային գործոց գլխաւոր մասերուն յատկացեալ չորս ազգային խորհուրդ կը հաստատէ, որ են՝ Ուսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Նշմարական խորհուրդ, Դատաստանական խորհուրդ, և վերադիտութիւնն իրեն պահելով՝ այս խորհուրդներուն իւրաքանչիւրին ձեռնհասութեանը կը յանձնէ ազգային գործոց այս իւրաքանչիւր մասին տեսչութիւնը։

8

Մատակարարութեան համար՝ Պոլսի մէջ թաղական խորհուրդներ կը հաստատէ թաղին եկեղեցւոյն անուամբը, և ամեն մէկ թաղին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր թաղական խորհրդին կը յանձնէ, Ազգային խորհրդոց տեսչութեանը տակ։

3. Ազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պոլսի Պատրիարքն է, և կեդրոն՝ Պոլսի Պատրիարքարանը։

Ազգային ժողովներն ու խորհուրդները իրենց գործն ընելով Ազգին Պատրիարքը՝ Պոլսի մէջ ազգային վարչութեան կեդրոնական մասը կը կազմեն, որոյ իշխանութիւնը բոլոր Տաճկաստանի Հայոց վրայ կը տարածվի։

4. Ազգային կեդրոնական վարչութիւնը Տաճկաստանի առաջնորդանիստ գաւառներուն մէջ կընտրկայանայ Գաւառական ժողովներով, որոնք Պոլսէ գործս Ազգային վարչութեան գաւառական մասը կը կազմեն որոյ պաշտօնական գլուխ՝ վիճակին Առաջնորդն է, և կեդրոն՝ տեղին Առաջնորդարանը։

5. Գաւառական վարչութիւնը նոյն վիճակարձ պատճառօք կապված է գաւառակնակ ազգայնոց հետ, ինչպէս կեդրոնական վարչութիւնը ընդհանուր ազգայնոց հետ, և քանի յատուցոյց սրտի բռնէ ըլլ կեդրոնական վարչութիւնը։

6. Գաւառական վարչութիւնը առաջնորդանիստ քաղաքներու մէջ Կրօնական և Քաղաքական ժողովներ կը հաստատէ և անոնց կը յանձնէ գաւառին կրօնական և քաղաքական գործոց տեսչութիւնը։

Այս ժողովները քաղաքին թաղերուն մէջ թաղական խորհուրդներ կը հաստատեն իրենց վերատեսչութեանն ու համարատութեանը տակ և անոնց ձեռքովը կը մատակարարեն տեղական գործերը, նոյն յարաբե-

բաժիններով որով կը վարվին Կեդրոնական ժողովները Պօլսի Թաղական խորհրդոց հետ։

Նմանապէս իրենց վերաբերութեան ու համաձայնութեան տակ Թեմական խորհուրդներ կը հաստատեն, և անոնք ալ իրենց գործոց և հաշուետուութեանց մասին իրենց Թեմական խորհրդին կը յանձնեն։

Գործադրութիւն

7. Իւրաքանչիւր ժողով և խորհուրդ իր մասին մէջ ձեռնհաս է՝ համաձայնութեան պայմանով։

Գաւառական վարչութեան մէջ՝ Թաղական ու Թեմական խորհուրդները համաձայնած են Գաւառական ժողովներուն. Գաւառական ժողովները համաձայնած են գաւառական Ընդհանուր ժողովներուն. Գաւառական վարչութիւնը կեդրոնական Վարչութեան համաձայնած է, և Ընդհանրապէս Պատրիարքին։

Կեդրոնական վարչութեան մէջ՝ Պօլսի Թաղական խորհուրդները համաձայնած են ազգային Տեսուչ խորհուրդներուն կամ իւրաքանչիւր մասին. Տեսուչ խորհուրդները համաձայնած են ազգային Բաղաքական ժողովին՝ բայց ի Գաւառաստանական խորհուրդէն որ համաձայնած է խառն ժողովին։

Կրօնական ու Բաղաքական ժողովները և Պատրիարքը Ընդհանուր ժողովին համաձայնած են։

Ընդհանուր ժողովը բացարձակ պատասխանատու է Ազգին առջեւ։

Յարաբերութիւն

8. Ազգային վարչութեան՝ Ազգին հետ, Բարձրագոյն Դրան հետ ունեցած յարաբերութիւնները սա սկզբանց վրայ հիմնեալ պիտի ըլլան.

Ազգին և ազգայնոց հետ՝ միշտ հայրարար վարվիլ։

Բարձրաձեան մայր Ընթոռին հետ՝ ուանդատարան մնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեացմէ անոնք կապուած են իրարու հետ Ազգն ու Ընթոռը։

Ն. Դրան հետ՝ թէ Ազգին և թէ ազգայնոց կրօնական ու քաղաքական իրաւունքները պահպանելու համար Տէրութեան պաշտպանութիւնը խնդրել, և Ազգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ Տէրութիւնը։

Այն յարաբերութեանց միջնորդ Պատրիարքն է։

Ե. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ա. Ազգային Ընդհանուր ժողով

9. Ազգային Ընդհանուր ժողովը կը բաղկանայ 220 ազգային երեսփոխաններէ որոնցմէ 160—ը Պօլսի Թաղերուն եկեղեցւոյ կողմէն ընտրեալ, և 60—ը առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ։

Ընդհանուր ժողովին մէջ ազգային երեսփոխանաց անդամակից են.

Նախ՝ ազգային կեդրոնական Վարչութեան նախարարքն՝ Կրօնական ու Բաղաքական ժողովներուն և չորս Տեսուչ խորհուրդներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն ատենապետները։

Այս կարգի անդամոց Թիւը իբր 100 է. բայց այս Թիւը երեսփոխանաց Թիւին վրայ ճշդիւ չը կրնար աւելնալ, վասն զի ատոնց մէջ արդէն երեսփոխան ընտրուածներ ալ կրնան գտնուիլ։

Երկրորդ՝ Ազգին կամ Տէրութեան ծառայութեանը մէջ գտնուող պաշտօնով մը պատուաւոր անձինք որոնց արժանաւորութիւնը Ազգին կամ Տէրութեան կողմէն

վկայեալ կը համարվի, ինչպէս են Ազգային պատգամաւորները, Պօլսի եկեղեցական քարոզիչ վարդապետները եւ աւագերէցները։ Առաւելական դասէն՝ ազգային մասնադիւանը, վիճակեալ բժիշկները, գլխաւոր դատաւորները, լրագրապետները։ Քաղաքական դասէն՝ վերին պաշտօնատարոյց ատենակիցները, արքունի ժողովոյ անդամները, Ի. Դրան դիւանները մէջ անօրէններ եւ թարգմանապետները, ազգային կամ արքունի հաստատութեանց մէջ անօրէններ, աւանդապետներ։ Օրինաւորական դասէն՝ վերին դատարանի ատենակիցները։

Այս կարգի անդամոց թիւն ալ չի կրնար ճշդուիլ վերոյիշեալ պատճառով. բայց իւր ընդգծունք՝ այս երկու կարգի անդամոց բովանդակ թիւը երբէք չի պիտի հաւասարի երեսփոխանաց թիւին (1)։

10. Ընդհանուր ժողովը կ'ըլլայ 400 անդամ չի պիտի ունենայ, եւ քանի որ երեսփոխանաց մեծագոյն մասը այսինքն 111–ը գոնէ ներկայ չըլլայ, նիստ չի պիտի կարենայ ընել։

11. Ընդհանուր ժողովին պաշտօնն է՝ Ազգին կողմէն երեսփոխանութեամբ ազգային բարձր պաշտօնատարները ընտրել, Ազգային ժողովները կարգել, անոնց վարչութիւնը համարատու ըլլալ, եւ ազգային ծանր կամ ընդհանրական գործերը վճռաբար տնօրինել։

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային Սահմանադրութեան ընդգծունքները անխախտ պահել եւ անոնց տրամադրութեանցը համեմատ վարուիլ։

12. Ընդհանուր ժողով կը գումարվի.

Նախ՝ կանոնաւորապէս ամէն տարի մարտ ամսին

---

1 Այս յօդուածը վերաքննելէ երբ թէ ազգային եւ թէ ցկրութեան պաշտօնատարոց թիւը այն աստիճան աւելնայ որ անկարելի ըլլայ նոյն հաստատ թիւը պահել։

վերջերը ազգային Վարչութեան տարեկան ընդհանուր համարատուութիւնը մտիկ ընելու, ազգային ժողովականաց կէսին ընտրութիւնն ընելու եւ ազգային տարեկան տուրքին անօրէնութիւնը հաստատելու համար։ Այն տարեկան նիստին մէջ վարչութեան անդամները՝ տուրքի խնդիրէն զատ՝ միւս խնդիրներուն մէջ խօսք միայն ունին եւ ձայն չունին։

2. Կամուղիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար։

3. Երուսաղէմայ եւ Պօլսի Պատրիարքաց ընտրութեանը համար։

4. Կրօնական ու Քաղաքական ժողովոյ մէջ կամ Պատրիարքին ու ժողովոյ մէջ պատահած անհամաձայնութեանց համար։ Այն պարագային մէջ ալ Վարչութեան անդամները խօսք միայն ունին եւ ձայն չունին։

5. Ազգային Սահմանադրութեան վերաքննութեանը համար։

Ու վերջապէս արտաքոյ կարգի պատահած այն պիտի ծանր խնդիրներու համար զորոնք Ազգային ժողովները Ընդհանուր ժողովով որոշել հարկաւոր դատեն։

13. Ընդհանուր ժողով կը հրաւիրուի, նախ՝ Պատրիարքէն՝ Ազգին կողմէն, երկրորդ՝ Ընդհանուր ժողովին ատենապետը՝ այն ժողովին գլխաւոր կողմէն, երրորդ՝ Կրօնական կամ Քաղաքական ժողովին ատենապետները՝ այն ժողովոց կողմէն։

Ը. Պատրիարք

14. Պատրիարքը Ազգային ժողովոյ նախագահն է եւ անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ։

15. Պատրիարքը իւրն եկած ամէն գործ՝ որ

ժողովին ձեռնհասութիւնը ստակ է նէ՝ նայն ժողովին քննութեան ու որոշմանը պիտի յանձնէ, և ազգային որոշմանց մէջ իր պաշտօնական դրութիւնը անվաւեր պիտի համարվին եթէ ձեռնհաս ժողովին կողմէն ալ կնքեալ կամ ստորագրեալ չըլլան. իսկ երբ ըստիպօղական գործ մը պատահի որպ անօրինութիւնը չը ներէ սպառել վինչև ժողովոց գումարման օրը և արտաքոյ կարգի ժողով գումարել կարելի չըլլայ, Պատրիարքը կընայ ինքնին անօրինել՝ պատասխանատուութիւնը իր վրայ առնելով, բայց եղելութիւնը կանոնաւոր կերպով միշտ արձանագրել տալով ձեռնհաս ժողովին պէտք է որ իմացնէ առաջիկայ նիստին մէջ զանի վաւերացնել տալու համար։

16. Պատրիարքը իր բացակայութեան տեղ Ազգային ժողովներու մէջ արված որոշում մը չըստորագրած՝ իրաւունք ունի դիտողութիւն ընելու և ինդիրը կրկին քննութեան առնել տալու. իսկ երկրորդ որոշումն եառքը պարտաւորեալ է ստորագրելու՝ եթէ այն որոշումը Սահմանադրութեան որամադրութեանցը անհամաձայն չը գտնէ։

17. Պատրիարքը իրաւունք ունի Սահմանադրութեան որամադրութեանցը համեմատ չը վարվող ազգային գործակալ մը, այսինքն՝ եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, վանքի, դպրոցաց կամ հիւանդոցի մատակարար մը, իր պաշտօնէն հանելու կամ արգիլելու առաջարկութիւն ընել որում՝ որ ատկ է։

18. Պատրիարքը իրաւունք չ'ունի Ազգային ժողովները կամ խորհուրդները ինքնին լուծելու. բայց երբոր տեսնէ թէ այն ժողովները Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը մէջ են, առջի անգամին՝ անոնց ատենապետին հետ կը բանակցի քացատրութիւն ուզելու համար. երկրորդին՝ գրով իմաց կուտայ նոյն ժողովին իր ապօրինաւոր ընթացքը և ի կարգ կը հը-

րաւիրէ զանի. իսկ երրորդին՝ Ընդհանուր ժողով կը կոչէ եթէ ամբաստանելին Ազգային ժողովներէն մէկն է, կամ Վաղաքական ժողովին կը դիմէ եթէ խորհուրդներէն մէկն է, և պատճառները իմացնելով ամբաստանեալ ժողովին լուծումը կը պահանջէ։

19. Պատրիարքը ազգային տեսուչին իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ, և Պատրիարքարանին նեղքին մատակարարութեան պահանջած ծախքը իր վրայ ըլլայ։

Գ. Ազգային կրօնական ժողով

20. Կրօնական ժողովը 14 բանիրուն եկեղեցական կանոներէ կը բազկանայ։

21. Կրօնական ժողովին պաշտօնն է՝ ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացնել, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ գաւանութիւնն ու աւանդութիւնքը անխախտ և անարատ պահել, եկեղեցւոյ և եկեղեցականաց բարեկարգութիւնը հսկել, քահանայից կացութիւնը լաւացնելու և ապագան անպորեելու հոգ տանիլ, արժանաւոր ու բանիբուն եկեղեցականներ հասցնել, և Ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննել ու լուծել։

22. Երբ պատահի կրօնական այնպիսի ծանր ինդիր մը զոր Կրօնական ժողովը չը կարենայ լուծել, Ընդհանուր ժողովին բազմական գումօղ եկեղեցականաց հետ համագումար ժողով պիտի կազմէ. եթէ այն համագումար ժողովն ալ իր ձեռնհասութենէն վեր գտահ ըզխնդիրը, Ընտրաեան Սայր Աթոռին պէտք է դիմէ։

23. Թէ մայրաքաղաքին և թէ գաւառներու մէջ վարդապետի և քահանայի ձեռնադրութեան հրամանը Կրօնական ժողովէն կը տրվի։

24. Քանի որ եկեղեցւոյ մը ժողովուրդը աւելի քահանայի մը նարեւաւորութիւնը չզգայ և թաղական խորհրդին միջնորդութեամբը չը խնդրէ, նոյն թաղին եկեղեցւոյն համար քահանայի ձեռնադրութեան հրաման չը պիտի տրվի։

25. Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները Արծնական ժողովը կ'որոշէ, և Պատրիարքը կ'անուանէ։

26. Արծնական ժողովին սրբազան պարտաւորութիւն է հսկել որ հոգեւոր պաշտօնները ձրի կատարվին և հոգեւոր պաշտօնեայք եկեղեցիէն ապրին։

Գ. Ազգային քաղաքական ժողով

27. Քաղաքական ժողովը 20 քաղաքագէտ աշխարհականներէ կը բաղկանայ։

28. Քաղաքական ժողովին պաշտօնն է՝ ազգային քաղաքական գործոց ընդհանուր վերատեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային խորհուրդներուն կողմէն իրեն մատուցված ազգօգուտ առաջարկութիւնները ուշի ուշով քննել և կարեւորութիւնը յայտնվելէն ետքը հաստատել զանոնք և անոնց գործադրութեանը արգելքները՝ եթէ կան՝ բառնալու հոգ տանիլ, և Ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը ըստ ամենայնի փոյթ ունենալ։

29. Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը՝ որ խորհրդին վերաբերեալ է նէ, նոյն խորհրդին քննութեանը պէտք է յանձնէ, և անոր կարծիքը չ'առած չը տնօրինէ։

30. Քաղաքական ժողովը կրնայ՝ բանաւոր պատճառավ մը՝ չը հաստատել կամ ետ ձգել խորհրդի մը ըրած որոշումը, բայց՝ անոր ձեռնհասութիւնը յարգելով՝ չը պիտի կարենայ նոյն որոշման հակառակ որոշում և գործադրութիւն ընել։

31. Քաղաքական ժողովը իրաւունք չ'ունի զ'ազգային խորհուրդներէն մէկը լուծելու, քանի որ Սահմանադրութեան տրամադրութեանցը հակառակ ընթացքի մէջ չը տեսնէ զանի, իսկ եթէ պատահի այսպիսի պարագայ մը, առջի անգամին՝ անոր ատենապետէն բացատրութիւն կ'ուզէ, երկրորդին՝ գրով իմաց կու տայ խորհրդին և կարգի կը հրաւիրէ զանի, իսկ երրորդին կը լուծէ, բայց Ընդհանուր ժողովին տրվելու տարեկան տեղեկագրին մէջ այս լուծման պատճառները պէտք է որ բացատրէ։

32. Երբ պատահի քաղաքական այնպիսի ծանր խնդիր մը զոր քաղաքական ժողովը իր ձեռնհասութենէն վեր դատէ, Ընդհանուր ժողովին պէտք է որ դիմէ։

Դ. Ազգային ընտրական խորհուրդ

33. Ընտրական խորհուրդը 10 ընտրականի աշխարհականներէ կը բաղկանայ։

34. Ընտրական խորհրդին պաշտօնն է՝ ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնադիր մը և դպրոցական կանոն ներ հաստատել, և անոնց հաւնմամ՝ ազգային վարժարանաց մէջ միօրինակ ընթաց մը որոշել թէ ուսման և թէ ուսուցման, սկզբնական գիտելեաց ուսումը ծաւալել, աղջկանց դաստիարակութեանը յատուկ կերպով հոգ տանիլ, այն նպատակով հաստատել ընկերութեանց խրախոյս տալ և ձեռնտու ըլլալ, ազգային դաստիարակաց կացութիւնը լաւցնելու և ապագան անդորրելու խնամ տանիլ, Ազգին մէջ բանիթուն դաստատուններ հաստնելու և դպրոցաց ընտիր դասագիրքներ պատրաստելու փոյթ ունենալ։

35. Ընտրական խորհուրդը պէտք է իր կողմէն

ամենայն ջան ի գործ դնել որ՝ թէ Պօլսի և թէ գաւառ-
ներու մէջ ամեն թաղ սկզբնական դասախարակու-թեան
դպրոցներ ունենան, նոյնպէս Պօլիս և առաջնորդա-
նիստ քաղաքները մէյմէկ ազգային ուսումնարան ու-
նենան դասական ուսմանց համար։ Այս ուսումնա-
րանէն վկայականով կ'ելլեն աշկերտները, և մնաց-
ուր ուսմունք ընծայներուն՝ դասատուութեան վկայա-
գիր ալ կը տրվի։

36. Ուսումնական խորհուրդը կ'որոշէ ազգային
վարժարանաց մէջ ընդունվելու դասագիրքերն ու
դասատուները. իսկ քրիստոնէական վարդապետու-
թեան դասագիրքն ու դասատուն Կրօնական ժողովէն
պէտք է որ խնդրե։

37. Ուսումնական խորհուրդը կը նախագահէ
ազգային վարժարանաց տարեկան քննութեանը. իսկ
քրիստոնէական վարդապետութեան մասին քննու-
թիւնը Կրօնական ժողովին ձեռօքը կ'ըլլայ։

Ը. Ազգային Տնտեսական Խորհուրդ

38. Տնտեսական խորհուրդը 10 անդամէ աշ-
խարհականներէ կը բաղկանայ։

39. Տնտեսական խորհրդին պաշտօնն է՝ ազգային
հաստատութեանց և կալուածոց մատակարարութեան
ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ այն հաստատութեանց
պայծառութեանն ու բարեկարգութեանը հոգ տանիլ։

40. Տնտեսական խորհուրդը վանօրէից և հիւան-
դանոցի համար մանաւանդ հոգաբարձութիւններ կը
հաստատէ և անոնց միջնորդութեամբը կը մատակա-
րարէ զայս հաստատութիւնները։

41. Վանօրէից հոգաբարձութիւնը եօթ հոգիէ
կը բաղկանայ, որոնց երեքը եկեղեցական և չորսը աշ-
խարհական։

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ զայս հոգաբար-
ձուները և Քաղաքական ժողովին հաստատութեամբը
պատրիարքը կ'անուանէ։

42. Վանօրէից հոգաբարձութեան նպատակը պի-
տի ըլլայ ոչն հաստատութեանց եկամուտներն ու
հասոյթները Ազգին օգտին ծառայեցնել. նախ՝ վանօ-
րէից մէջ ուսումնարան հաստատելով՝ Կրօնական ժո-
ղովին և Ուսումնական խորհրդին տուած հիմնագրին
համաձայն, և որի մէջ որ պէտք կայ՝ հիւանդանոց,
տպարան, Թանգարան։

43. Վանօրէից հոգաբարձութիւնը իւրաքանչիւր
վանքի համար երկերկու գործակալ պէտք է ունե-
նայ տեղացի, որոնք վանահօր նախագահութեամբը
կը մատակարարեն զայն՝ Գաւառական ժողովէն ան-
կախ կերպով։

44. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը եօթ հո-
գիէ կը բաղկանայ որոնց երկուքը բժիշկ։

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ այս հոգաբար-
ձուները և Քաղաքական ժողովին հաստատութեամբը
պատրիարքը կ'անուանէ։

45. Հիւանդանոցի հոգաբարձութեան նպատակը
պիտի ըլլայ ոչն հաստատութիւնը իր նպատակին ծա-
ռայեցնել, հոն անօրինելով նախ՝ կանոնաւոր հիւան-
դանոց մը աղքատ հիւանդաց համար. երկրորդ՝
պատսպարան մը ծեր ու անկար աղքատաց հա-
մար. երրորդ՝ Օգաստարան մը անառակաց համար.
չորրորդ՝ Կրթարան մը որբ ու անտէրունչ տղայոց
համար։

Այս օրէնսդրութիւնները իւրաքանչիւրը թէ չէնքի և
թէ կարգի կողմէն բժշկական կանոնաց և ողջապահիկ
օրինաց համաձայն պէտք է կարգադրեալ ըլլայ։

46. Կաթակաց անօրէնութիւնը Տնտեսական խոր-
հրդին կը վերաբերի. Այս խորհուրդը պէտք է հսկէ

որ ամէն կաթ օրինաւոր կերպով վաւերացեալ ըլլայ, կաթոզին դիտաւորութիւնը անխախտ պահվի և գործադրութիւնը ապահով ըլլայ։

Սոյն որամադրութեանց հաւեմատ՝ կաթոլի վերաբերեալ յատուկ կանոններ ու մանաւոր Հոգաբարձութիւն պէտք է հաստատէ Տնտեսական խորհուրդը։

Երբ կաթոլին գործադրութիւնը կաթոզին դիտաւորութիւնը համեմատ չ'ըլլայ, ընտանիքը իրաւունք ունի բողոքելու։

47. Թ՝ Պօլսի և Թ՝ գաւառներու մէջ գտնված ազգային անշարժ ըստացուածոց կալուածագիրներուն (Ալեպ, Հէօճէր, Տիէրպէ) օրինակները Տնտեսական խորհրդին ձեռքով ժողովելով ազգային Արխիւին մէջ պիտի պահվին ամենայն ապահովութեամբ։

48. Տնտեսական խորհուրդը պէտք է հսկէ որ ամեն ազգային ըստացուած օրինաւոր կալուածագիր ունենայ։

49. Ազգային պր և է կալուածի գնումն ու վաճառումը չը կրնար գործադրվիլ առանց Տնտեսական խորհրդին գիտութեանը, Քաղաքական ժողովին հաճութեանն ու Պատրիարքին հնքադրութեանը։

Սոյն որամադրութեանց ուժովը դէ-ՐԷՔԼԸ-ՐԻ-ն ըսված բանը վերցած է։

50. Պօլսի մէջ և շրջակաները ազգային պր և է շինութիւն կամ նորոգութիւն չը կրնար ըսկսիլ առանց Տնտեսական և Էջմիածնի խորհրդոց դիտութեանն ու Քաղաքական ժողովին հաճութեանը։

Նմանապէս ազգային պր և է հաստատութեան համար ասակ չը կրնար ժողվիլ առանց վերոյիշեալ պայմանին։

Ե. Ազգային Էջմիածնի խորհուրդ

51. Էջմիածնի խորհուրդը 10 հաշուագէտ աշխարհականերէ կը բաղկանայ։

52. Էջմիածնի խորհրդին պաշտօնն է՝ ազգային հաստատութեան և ծախուց ընդհանուր տեսչութիւնը և ազգային անտուկին համարակալութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային հաստատութեանց մատակարարութեան հաշիւները կանոնաւոր պահել առնել, ծախուց օրինաւորութիւնն ըստուգել, ազգային եկամուտներն աւելցնելու ջանք ընել՝ այն ամենայն որ օր մը ազգային անտուկին մուտն ու ելքը իրարու հաւասար գալով ընդհանուր տուրքը մեծապէս կրնայ թեթեւնալ։

53. Ազգային անտուկին մուտքն են գլխաւորապէս՝ տարեկան ընդհանուր տուրք, կալուածական հասոյթ, դիւանական հասոյթ, կտակ, նուէր և այլն. ելքն են գլխաւորապէս՝ Պատրիարքարանի և Էջմիածնոյ ծախք, Հիւանդանոցի ծախք, կարօտեալ Թաղերու եկեղեցհաց ու վարժարանացը նպաստ և այլ պատահական ծախքեր։

54. Ազգային անտուկին հաշիւը տօմարակալութեան կանոնով պիտի բռնվի։

55. Էջմիածնի խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ յետագայ տարւոյն մէջ ըլլալու հասոյթն ու ծախքը կշռելով՝ հաշուեցուցակը Քաղաքական ժողովին պիտի ներկայացնէ։

Է. Ազգային Դատաստանական խորհուրդ

56. Դատաստանական խորհուրդը 10 իրաւաբեր անձերէ կը բաղկանայ, որոնց հինգը եկեղեցական և հինգը աշխարհական։

57. Դատաստանական խորհրդին պաշտօնն է ազգային դատաստանական գործոց ընդհանուր տեսչութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ հակաձակորդները արդարութեամբ իրաւախոհ ընելու ջանալ և իր վճռա-

ձերուն հիմ քունել կրօնական մասին՝ նախնեացմէ ա-
ւանդեալ կանոնները, և քաղաքական մասին՝ Տէրու-
թեան գաւառանաց արդի կանոնները։

58. Երբ պատահի այնպիսի ինդիր մը զոր Դատաս-
տանական խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դա-
տէ, ազգային ժողովներէն որու որ անկ է անոր կը ղրկէ։

59. Դատաստանական խորհուրդին մէջ դաւեալ
անձ մը միշտ իրաւունք ունի կրօնական կամ Քաղա-
քական ժողովին բողոքելու կամ Խառն ժողով պա-
հանջելու ըստ գործին։

Բ. Թաղական խորհուրդներ

60. Թաղական խորհուրդները կը բաղկանան ըստ
տեղւոյն 5 էն մինչեւ 9 անդամներէ։

61. Թաղական խորհրդին պաշտօնն է՝ Թա-
ղին տեղական գործոց մատակարարութիւնը, եկեղե-
ցւոյն եկեղեցպանութիւնը, դպրատան հոգաբարձու-
թիւնը, աղքատաց խնամակալութիւնը, ազգայնոց
մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղա-
րարութիւնը։

Իր պարտաւորութիւնն է՝ Թաղին եկեղեցւոյն պայ-
ծառութեանը խնամ տանիլ, Թաղին մէջ թէ աղջկանց
և թէ տղոց համար ըսկզբնական դաստիարակու-
թեան բարեկարգ դպրատուններ ունենալու ջանք
ընել, և Թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնտու ըլլալ։

62. Թաղերուն մէջ թէ եկեղեցւոյ և թէ դպրա-
տան մը և է կալուած Թաղական խորհուրդին ան-
միջական անօրէնութեանը տակ է, այսպիսի կալուածոց
գնումն ու վաճառումը ըստ 49. Յօդ. կը գործադրվի։

63. Իւրաքանչիւր անտուկ պիտի ունենայ
Թաղական խորհրդին հսկողութեանը տակ։

Այս անտուկին մուտքն են՝ Թաղական տուրքը, եկե-
ղեցւոյ և դպրատան կալուածոց եկամուտները,

եկեղեցւոյն հասոյթները, աղքատաց համար եղած
նուէրներն ու կտակները ևայլն. Ելքն են՝ Թաղին
եկեղեցւոյն և դպրատանց ծախքերն ու աղքատաց օգ-
նութիւնները։

64. Իւրաքանչիւր Թաղական խորհուրդ իր Թաղին մէջ
եղած ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց սրբա-
գրութիւնը պէտք է որ ունենայ կանոնաւորապէս։

65. Թաղական խորհուրդները իրենց պաշտօննե-
րուն մէջ Տեսուչ խորհուրդներուն հետ ուղղակի
յարաբերութիւն ունին. եկեղեցպանութեան գոր-
ծերու համար՝ Տնտեսական խորհրդին հետ, դպրա-
տանց ուսումնական մասին համար՝ Ուսումնական խոր-
հրդին հետ, դրամական գործերու համար՝ Չրմտա-
կան խորհրդին հետ, գաւառական գործերու համար՝
Դատաստանական խորհրդին հետ։

Թաղական խորհուրդը երբ չը կրնայ հակառա-
կորդները իրաւախոհ ընել, գործը Դատաստանական
խորհրդին պէտք է ղրկէ իր քննութեան տեղե-
կագրովը։

Գ. Ազգային Դիւանատուն

66. Պատրիարքարանին մէջ դիւանատուն մը պիտի
հաստատվի որոյ գործը պիտի ըլլայ ազգային պաշտօ-
նական գրութեանց անօրէնութիւնը։

67. Դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժ-
նվի.

ա. Թղթակցութիւն, որ Պատրիարքարանէն ղրր-
կվելու գիրերուն և ի Պատրիարքարան հասած թուղ-
թերուն կարգաւորութեանը կ'ըղթայի։

բ. Արձանագրութիւն, որ ազգային ժողովոց
և խորհրդոց վերաբերեալ թուղթերուն կար-
գաւորութեանը կ'ըղթայի։

գ. Ազգահարկ, որ ազգայնոց քաղաքային վճա-

ֆագրութեանը՝ այսինքն ծննդեան, ամուսնութեան և վախճանման վերաբերեալ արձանագրութեանց կարգադրութեանը կ'ըզբաղի։ Այն գրասենեակէն կը տրըվին ազգայնոց թէ՛ ճամբորդութեան համար և թէ տեղւոյական գործօղութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաեւ ծննդեան, ամուսնութեան և վախճանման վկայականները։

68. Թղթակցութեան գրասենեակը՝ ներքին և արտաքին թղթակցութեանց և թուղթերէն գրութեանց համար պէտք եղածին չափ դիւանագիրներ պիտի ունենայ։ Այս գրասենեակը Պատրիարքին հրամանին ներքեւ է և ինք կ'անուանէ ատոր անդամները Ազգաբնակ Ժողովին հաւանութեամբը։

Արձանագրութեան գրասենեակը վեց դիւանագիր պիտի ունենայ. երկուքը Կրօնական ու Ազգային ժողովներուն գործօղը յատկացեալ, և չորսը՝ շրջս Տեսուչ խորհուրդներուն գործօղը կարգեալ։

Այս գրասենեակին անդամները ամեն մէկը իր վերաբերեալ ժողովին կամ խորհուրդին հրամանին ներքեւ է, զորոնք նոյն ժողովները կամ խորհուրդները կ'ընտրեն և Պատրիարքը կ'անուանէ Ազգաբնակ ժողովին հաւանութեամբը։

Ազգահամարի գրասենեակը պիտի ունենայ նօտար մը, զոր Ազգաբնակ ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կ'անուանէ։

Այս գրասենեակներուն անդամներուն թիւը ըստ հարկին կ'աւելնայ կամ կը պակսի։

69. Դիւանապետը պիտի ունենայ դիւանապետ մը որ Դիւանատան բոլոր գործօղը անօրէն և պատասխանատու է, զոր Ազգաբնակ ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կ'անուանէ։

Դիւանապետը կ'ընէ Ընդհանուր ժողովին գիւանագրութիւնը։

70. Դիւանապետը պարտաւորեալ է տարին անգամ մը Պօլսի ամեն մէկ Թաղէն և հինգ տարին անգամ մը ամեն մէկ գաւառէն իրենց ազգահամարին, այսինքն՝ ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց տոմարներուն օրինակները պահանջել և ազգային Դիւանատան ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել տալ։

71. Դիւանապետը ազգային լեզուն քաջ գիտցօղ և տաճկերէնի ու ֆռանսերէնի բաւական հմտութիւն ունեցօղ անձ մը պէտք է որ ըլլայ։ Դիւանագիրները ազգային լեզուն քաջ գիտցօղ և իրենց մասին մէջ հմուտ անձինք պէտք է որ ըլլան։

72. Դիւանագիրները մասնաւորապէս պատասխանատու են իրենց վերաբերական ժողովին կամ խորհուրդին առջեւ և ընդհանրապէս Դիւանապետին առջեւ։

73. Ազգահամարի գրասենեակէն տրված ծր և է թուղթ և վկայական՝ պատրիարքական կնքով և դիւանապետին ըստորագրութեամբը վաւերացեալ պէտք է ըլլան։

74. Ազգային դիւանատունը ամեն օր՝ ուրբ ժամ բաց և դիւանագիրները ներկայ պիտի գտվին բաց յատնելի օրերէն։ Երբէ տօնելի օր մը ժողով կամ խորհուրդ ըլլալ պատահի, նոյն ժողովին կամ խորհրդին դիւանապետը նոյն, օրը ներկայ պէտք է գտվի։

---

2. ԳՈՒՒՈՒԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ա. Գաւառական Ընդհանուր ժողով

75. Գաւառներու մէջ Ընդհանուր ժողով կը կազմվի Թաղական և Թեմական երեսփոխաններէն, ս

բոց անդամակից են նախ՝ գաւառին կրօնական և Վարչական ժողովներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն առենապետները, երկրորդ՝ Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանցը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուհաս անձինք. (տես Յօդ 9)։

76. Գաւառական Ընդհանուր ժողովներուն պաշտօնն է՝ իւրաքանչիւրը իր գաւառին կողմէն երեսփոխանութեամբ գաւառին առաջնորդը ընտրել, Կրօնական ու Վարչական ժողովները կարգել, անոնց վարչութեանը հսկողութիւն ընել, և գաւառական ծախը կամ ընդհանրական գործերը տնօրինել։

Բ. Առաջնորդ

77. Առաջնորդը Գաւառական ժողովներուն նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ։

Իր պարտաւորութիւնն է՝ գաւառին մէջ ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել։

78. Առաջնորդը չը պիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով իր պաշտօնին գլխէն հեռանալ. այլ գաւառին գլխաւոր քաղքին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի ու ըր կը գումարվին և գաւառական ժողովները։

79. Առաջնորդը գաւառական անտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ և Առաջնորդարանին ներքին մատակարարութեան ծախքը իր վրայ ըլլայ։

Գ. Գաւառական ժողովք և խորհուրդ

80. Գաւառաց Կրօնական ու Վարչական ժողովները՝ ըստ տեղւոյն 7 էն մինչեւ 12 անդամներէ կը բաղկանան։

81. Գաւառաց Թաղական և Թեմական խորհուրդները ըստ տեղւոյն 5 էն մինչև 9 անդամներէ կը բաղկանան։

82. Ամէն գաւառ իր Վարչական ժողովին հրոս կօղութեանը նեղքեւ մէկմէկ գաւառական անտուկ պիտի ունենայ գաւառին ազգային եկամտից և ծախուց անտեսութեանն ու համարակալութեանը համար. նմանապէս ամեն Թաղ և Թեմ իր անտուկը պիտի ունենայ։

Այս անտուկներուն համարակալութիւնը կանոնաւոր կերպով պիտի կատարվի։

83. Գաւառներու մէջ ամէն Առաջնորդարան իր գաւառական դիւանատունը պիտի ունենայ. նմանապէս ամէն Թաղ և Թեմ։

Գաւառական դիւանները պարտաւոր են գաւառին Թաղական և Թեմական ազգահամարները ժողովել և անոնցմով գաւառական ընդհանուր ազգահամար կազմել։

ԳԼՈՒԽ Ը.

ԱԶԳԱՑԻՆ ՏՈՒՐՔ

84. Ամէն ազգային անհատ՝ որ չափահաս է և վաստակի տէր, պարտաւոր է ազգային պիտոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ. բայց անոնցմէ որոնց կարօղութիւն չունենալը իրենց Թաղին կամ իրենց արհեստակցաց կողմէն վկայեալ է։

85. Ազգային տուրքը տարեկան է և բաշխման հիմ պիտի բռնվի իւրաքանչիւրին կարօղութիւնը։

86. Երկու կերպ է ազգային տուրքը. մէկը ընդ-

հանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է և կը հաւքըվի Կեդրոնական վարչութեան կողմէն ազգային տուկին համար, և միւսը մասնաւոր՝ որ մասնաւոր ծախուց յատկացեալ է և կը հաւքըվի Թաղական խորհրդոյ կողմէն Թաղական տուկին համար։

87. Պօլսի մէջ ընդհանուր տուքին բաշխման ու հաւաքման եղանակը Քաղաքական ժողովին մէջ կ'ուրոշվի և Ընդհանուր ժողովով կը հաստատվի։ Իսկ Թաղական տուքը ամէն Թաղ իր խորհուրդին մէջ կ'որոշէ ու կը հաստատէ։

Այնպէս կը անօրինվին և գաւառներուն մէջ գաւառական ընդհանուր տուքն ու Թաղական մասնաւոր տուքը։

88. Գաւառները մասնակից պիտի ըլլան ազգային ընդհանուր տուքին։

Գաւառներուն կողմէն ազգային կեդրոնական սընտուկին տրըվելու վինչև յարդ տուվորութիւն եղած տարեկան տուքին փոխարէն՝ գաւառական անտուկը իր հաւաքած գաւառական ընդհանուր տուքին հարիւրին այսքան պիտի տայ ազգային կեդրոնական սընտուկին։

Հարիւրին ինչքան տրըվիլը Պօլսի Քաղաքական ժողովը պիտի որոշէ։

ԳԼՈՒԽ Գ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ա. Ընտրական օրէնք

1. Ընթրողներէն պայման

89. Ընտրելու իրաւունքը լման 25 տարուց հասակէն կ'ընկսի։

90. Ընտրելու իրաւունքէն զրկեալ կամ արգիլեալ են դատաստանապէս.

1՝ Այն՝ որ բռնական յանցանօք դատապարտեալ և հրապարակաւ նշանակեալ անձինք, որունք մեռեալ են քաղաքականապէս ըստ օրինաց Տէրութեան։

2՝ Ազգային գործոց մասնակարասիութեանը մէջ նենգութեամբ բռնըսված և ազգային ատեանի մը կողմէն դատապարտութիւն կրած անձինք, որունց համար դատող ատեանը ազգային գործոց մէջ չը գործածվելը վճռած ըլլայ։

3՝ Տէրութեան կողմէն զգաստացուցիչ պատիժ կրած կամ ազգային զգաստարանէն ելած անձինք, որունց ազգային ատեան մը արգիլած ըլլայ ընտրելու իրաւունքը։ Այս արգելքը կը վերնայ երբոր այսպիսեաց կատարելապէս զգաստացեալ ըլլալը արգիլող ատեանին կողմէն վկայվի։

4՝ Խելագարութեան պատճառով անբաւական դատեալ անձինք, որունց կատարելապէս առողջացեալ ըլլալը վաւերական կերպով վկայեալ չ'ըլլայ։

5՝ Չարկ եղած ազգային տուքը կարօղութիւն ունենալով մերժօղ անձինք, որունք ազգովին եպերելի են իբր ազգային պարտեաց զանցառու։ Այս արգելքը կը վերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնը ճանչցել ըսկսին։

2. Ընթրելոնքեան պայման

91. Ազգային գործոց անօրէնութեանը մէջ որոշըզական ձայն ունենալու իրաւունքը լման 30 տարուց հասակէն կ'ըսկսի։

Ամենայն անհատ ազգային որ եռւտուն տարին լրացուցած է և չէ դատաստանապէս զրկեալ կամ արգիլեալ ազգային իրաւանց վայելումէն, ընտրելի է ազգային որ և է պաշտօնի համար։

92. Ընտրութեան հիմ պիտի բռնըվի բնակչաց թիւը։

Պօլսի ամեն մէկ Թաղին և ամեն մէկ գաւառին ընկած երեսփոխանութեուն բաշխման ցուցակը յատուկ պատկերով պիտի նշանակվի։

Երեսփոխանաց բաշխման ցուցակը՝ ամեն հինգ տարին անգամ մը կը նորոգվի, ազգային Վիւանատան ընդհանուր ազգահամարին համաձայն։

Այս վերանորոգումը Պարչութեան գլխաւոր անգամոց, այսինքն Կրօնական ու Բազաքական ժողովոց առենապետներուն և Տեսուչ ու Պատակարար խորհրդոց առենապետներուն մէկ տեղ գալովը ձեւացած Համախորհուրդ ժողովին մէջ կ'ըլլայ։

93. Թէ Պօլսի Թաղերէն և Թէ գաւառներէն ուղված երեսփոխանները հարկ չէ որ ընտրող Թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան, բաւական է որ Պօլսի մէջ բնակին, և ազգասիրութեան ու պատուաւորութեան մասին ընտրողաց համարումը ըստացած անձինք ըլլան։

Այս երեսփոխանները չէ Թէ զներենք ընտրող Թաղին կամ գաւառին երեսփոխանները կը սեպվին Ընդհանուր ժողովին մէջ, այլ Ազգին երեսփոխաններն են համազօր իշխանութեամբ։

Ընտրական ժողովներ

94. Ընդհանուր ժողովին լուծվելու օրէն երկու ամիս առաջ գաւառներուն՝ և մէկ ամիս առաջ Պօլսի Թաղերուն կը ծանուցնէ Պատրիարքը ամեն մէկ Թաղէն կամ գաւառէն ուղված երեսփոխանաց Թիւը և կը հրաւիրէ ընտրողական ժողով գումարել, յիշելով ընտ-

րելութեան պայմաններն ու ընտրութեան կանոնները։

Այն կոնդակին օրինակը Թաղական խորհրդարանին մէջ բացադրեալ կը մնայ մինչեւ ընտրութեանց աւարտումը։

95. Ամեն Թաղի մէջ ընտրողական ժողովները կը կազմվին Թաղին բնակիչներէն՝ երեսփոխանաց հետ անդամակից ըլլալու արժանաւորութեանն արդէն վկայեալ (տե՛ս Յօդ. 9.) և ընտրողութեան պայմաններն ունեցող անձանցմէ։

Ընտրողական ժողովը 21 հոգիէ կը բաղկանայ. եթէ Թաղի մը մէջ վերոյիշեալ անձինքը այս Թիւը չը լլնեն, պակասը նոյն Թաղին մէջ կ'ն չատ տուրք տուօղ ընտրողացմէ պէտք է լլնել։

Ընտրողական ժողովին նախագահ՝ եկեղեցւոյն քահանայքը կամ անոր բացակայութեանը՝ աւագերէցն է. իր գիւանը կը բաղկանայ մէկ առենապետէ, մէկ առենադպրէ և երկու քննիչներէ։

Ընտրողական ժողովը Թաղական խորհուրդին հետ միանալով կը նախագահէ ընտրական գործողութեանց։

96. Ընտրողական ժողովը ընթերցայ ցանկ մը կը պատրաստէ ուղված երեսփոխաններու Թիւէն եռապատիկ աւելի՝ ընտրողաց որոշումը դիւրացնելու համար։

Այն ցանկին ալ բացադրեալ կը մնայ Թաղական խորհրդարանին մէջ, իսկ ընտրողք ոչ մէկ կերպով բասխ պեալ են այս ցանկին հետեւելու։

97. Ընտրողական ժողովները ամեն մէկը իր Թաղին մէջ՝ ընտրողութեան պայմանները բաստագելով՝ ընթերցայ ցանկ մը պիտի պատրաստեն այբուբենի կարգով. այս ցանկը ութ օր բաց պիտի մնայ Թաղական խորհրդարանին մէջ, որպէս զի Թաղին ընտրողները կարենան իրենց անուանը վրայ դիտողութիւն ունին նէ՝ ընել։

98. Ընտրողական ժողովը ամեն մէկ ընտրողի մէյմէկ ընթերցգիր պէտք է տայ այն օրինակ.

Ա. . . ընտրող
Ա. . . (անուն Ցոփ)
և ընտրողական ժողովին կողմէն ըստորագրեալ։

Ի՛նչպէս այս ընտրողագիրը ներկայացնելու ոչ ոք պիտի կարենայ քըէտուփին մերձենալ։

99. Ի՛րեք ընտրութեան հրաւէրը՝ որ և է պատճառով՝ Պասիլիքին կողմէն չ'ըլլայ (տե՛ս Յօդ. 94), ազգային Վարչութեան կողմէն պէտք է որ ըլլայ Քաղաքական ժողովին առենապետին ձեռօք։

Ի՛րեք ազգային Վարչութիւնն ալ զանցառութիւն ընէ իր այս պարտականութիւնը կատարելու, և ընտրութեան համար Սահմանադրութեան որոշած ժամանակը հասած ըլլայ, այն ատեն ընտրողները իրաւունքնին վարելով՝ լիակատար իշխանութեամբ կը ժողովին իրենց Թաղին կամ Թեմին եկեղեցւոյն խորհրդարանը և ընտրողական ժողով կազմելով կ'ընտրեն իրենց ներկայացուցիչները ըստ ընտրական կանոնաց։

Ի՛րրոր այս կերպով ներկայացուց մեծագոյն մասին ընտրութիւնը լմննայ, անմիջապէս լսածով ըստ օրինի հին ընդհանուր ժողովը և զուրկ ամենայն իշխանութենէ, ուսոի և ինչ որ գործէ կամ գործած է նոյն կէտէն ապրին, ապօրինաւոր է և ապաղօր ներբեւ չ'ներեալ։

Գլուխ Ժ

100. Ընտրողաց ցանկին բացվելէն շաբաթ մը առաջ՝ կիրակի առաւօտ ժամերգութեան աւարտումէն ետև՝ Թաղական խորհրդարանին մէջ քուէարկութեան կ'ըսկըսվի սակայն։

Ընտրողական ժողովին նախագահը ընտրողաց ցանկը ձեռքը առած կարգով կը կոչէ ընտրողները որոնք ընտրողագրին կը դնեն սեղանին վրայ և ընտրողաց ցանկին մէջ իրենց անունները առջեւ ըստորագրելէն ետքը՝

նոն Թուղթի մը վրայ քանի երեսփոխան ուզած է նէ՝ այնքան անձի անուն կը գրեն իրենց ձեռքով վերջն ի վար կարգով և ամեն մէկ անուան առջեւ մականուն, բնակութիւն, արհեստ նշանակելով՝ Թուղթը կը ծալեն քուէտուփին մէջ կը ձգեն։

101. Քուէարկութիւնը գաղտնի է, ուստի պէտք է որ քուէարկուք առանձին կերպով մը գրեն իրենց քուէթուղթը, որպէսզի ուրիշ մը չը կարենայ տեսնել գրված անուններըը։

102. Քուէարկութիւնը լսկսած օրը պէտք է լմննայ։

Ընտրողաց մէ որ այն օրը քուէարկութեան չը ներկայանայ՝ իրաւունք չ'ունի ետքը քուէարկելու։

103. Ինչպէս պիտի կարենայ միանգամայն երկու Թաղի կամ գաւառի մէջ քուէ տալ։

104. Միացեալ Թաղերն ու Թեմերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, մէկ տեղ գալով կ'ընեն քուէարկութիւնը, իսկ եթէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւրը զատ զատ քուէարկութիւն կ'ընեն ու ետքը քուէարկութեանց արդիւնքը կը միացնեն։

Քուէհամար

105. Քուէարկութիւնը լմննալէն ետքը՝ նոյն օրը միևնոյն նիստի մէջ ընտրողական ժողովին հակօղութեանը ներքեւ տուփը կը բացվի. քննիչները քուէները կը համրեն և քուէարկուաց թիւին հետ կը բաղդատեն. եթէ տարբերութիւն գտնվի կամ եղած տարբերութիւնը աննշան ըլլայ, այսինքն՝ մէկ կամ երկու թիւ (վասնզի կրնայ պատահիլ որ քուէարկուացմէ մէկ կամ երկուքը մոռցած ըլլան ընտրողաց ցանկին մէջ ստորագրելու), քուէարկութիւնը վաւերական կը համարվի. իսկ եթէ երկուքէն աւելի ըլլայ տարբերութիւնը և

ընտրօրական ժողովը խարդախութեան կասկած ունե-
նայ, դարձեալ քուէարկութիւն ընել կ՚որոշէ միւս օր
մը մինչեւ առաջնոյ կիրակին։

Նմանապէս եթէ ուղված երեսփոխանաց թիւը չը
լցվի առաջին անգամին՝ մնացածին համար երկրորդ
անգամ ընտրութիւն կ՚ըլլայ ուրիշ օր մը։

106. Նթէ պատահի որ մէկը պէտք եղածէն ա
ւելի թըւով անուն գրած ըլլայ իր քուէթուղթին
մէջ, նոյն թիւէն եաքը եկած անուննները անընդու-
նելի են։

Նմանապէս վերէն ի վար կարդով չը գրված անուն-
ներուն քուէթուղթը անհամարելի է։

107. Քուէարկուաց թիւին կէսէն աւելի քուէ
ստացողներուն մէջ կ՚ն շատ ըստացօղ անձինքը երես-
փոխան ընտրված են։

108. Նթէ մէկ կամ երկու անգամով առաւելու-
թիւն չ՚ըստացվի, ընտրօղական ժողովը կը ծանուցնէ
կ՚ն շատ առաւելութիւն ըստացող երկու անուննները,
և երրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն եր-
կու անուանց վրայ կ՚ըլլայ։

109. Նթէ հաւասար քուէ պատահի երկու ան-
ձանց վրայ, երիցագոյնը ընտրեալ է։

Վ֊երջոմ ընդունելոյն

110. Ամէն ընտրօղական ժողով՝ իր թաղէն կամ
գաւառէն ընտրված երեսփոխանաց անուննները Քա-
ղաքական ժողովին կը ներկայացնէ Պատրիարքին ուղ-
ղեալ տեղեկագրով մը, որոյ մէջ պէտք է ճըշդիւ նշա-
նակված ըլլայ քուէթուղթին օրինակը, այսինքն՝ ընտ-
րեալին անունը, մականունը, բնակութիւնն ու ար-
հեստը և քուէարկութեան բոլոր պարագաները։

Քաղաքական ժողովը՝ քուէարկութեանց տեղեկա-

գիրները քննելով, կ՚ըստուգէ երեսփոխանաց իշխա-
նութիւնը։

Այս ըստուգութենէն եաքը Պատրիարքը պաշտօ-
նական կերպով իմաց կու տայ նորընտիր երեսփոխանաց
և կը հրաւիրէ զանոնք ընդհանուր ժողով գումարել
որոշեալ օր մը։

111. Ընդհանուր ժողովը իր առաջին նիստին մէջ Քա-
ղաքական ժողովին քննած տեղեկագիրները մտիկ ընե-
լով ընտրութեանց ըստուգութիւնը կը վաւերացնէ և
երեսփոխանաց իշխանութիւնը հաստատելով իր կազ-
մութիւնը կը լրացնէ։

112. Ընդհանուր ժողով կրնայ գումարվիլ երբ
երեսփոխանաց մեծագոյն մասը՝ որ Պօլսի մէջ է՝ ընտրը-
ված ըլլայ, առանց սպասելու ընտրութեանց վերջը
կամ գաւառական երեսփոխանաց որոնց ընտրութեան
լուրը մէկ կալվէն Պօլիս հասնելու վրայ կ՚ըլլայ։

113. Նթէ մէկը քանի մը թաղերու կամ քանի մը
գաւառներու կողմէն ընտրըված ըլլայ, ինքը կ՚որոշէ
թէ թաղին կամ թէ գաւառին երեսփոխանութիւնն ըն-
դունելը։ Նթէ ինքը չ՚ուզէ որոշել, Ընդհանուր ժո-
ղովը վիճակով կ՚որոշէ։

Սոյն պարագային մէջ ընտրօղ թաղին կամ գաւա-
ռին իմաց կը տրվի ուրիշ երեսփոխան մ՚ ընտրել։

Այնպէս կ՚ըլլայ երբ վախճանման կամ հրաժարման
պատճառով երեսփոխանաց մէջէն պակսօղ ըլլայ։

114. Ժողովարանին մէջ բաղդատութեամբ պէտք է մնայ
երեսփոխանաց ցանկը այնուբեթին կարգով շինված, որոյ
մէջ թիւ առ թիւ կը նշանակվի անուան առջեւ՝ հրա-
ժարում, վախճանում, և այլն։ Նմանապէս երեսփո-
խանաց հետ առաջին և երկրորդ կարգէ անդամակից
(Յօդ. 9) եղող անձանց ցանկը։ Այս ցանկերը հինգ
տարին անգամ մը կը նորոգվին Ընդհանուր ժողովին
նորոգմանը հետ։

Բաո հարկին գործածելու համար՝ երեսփոխանապ
ժէյմէկ ուղեալ ապօճաքիր երեսփոխանութեան պէտք է
տրվի այն օրինակ։

Ա. . . . Անգային երեսփոխան
(Ի վրէժոխ)
. . . .
(Ըսթոշտրոնիւն երեսփոխանին)
և Հակառակ պատրիարքական կնքով կնքեալ։

Կ. Ընտրութիւն Պատրիարքի

115. Պատրիարքը պէտք է որ Իջմիածնայ Կաթուղիկոսէն ձեռնադրեալ կամ անկէ իբր Իջմիածնայ եպիսկոպոս ընդունեալ անձ մ՚ըլլայ և Օսմանեան Տէրութեան հպատակ։

116. Կաթոլիկ ու Բողոքական ժողովուրդը իւրաքանչիւր ժողով կազմելով ընտրելութեան պայմաններուն ենթացող եպիսկոպոսաց և վարդապետաց սրժանիքը կը քննեն իրենց կրօնական և իրենց բաղաքական մասին և կ՚որոշեն երեք ընտրելի որոնց անուններըը Ընդհանուր ժողովին կը ներկայացնեն։

Ընդհանուր ժողովին մէջ այն երեք ընտրելի անձանց վրայ գաղտնի քուէարկութիւն ըլլալով՝ ով որ մեծագոյն մասին հաւանութիւնը ըստանայ, անի կ՚ըլլայ օրինաւոր Պատրիարք Ազգին։

Իրեք առաջին անգամին մեծագոյն մաս չը վաստկելու վրայ, երկրորդ անգամ քուէարկութիւն կ՚ըլլայ. եթէ երկրորդին ալ չը յաջողի, երկու առաւելագոյն քուէ ստացողաց անուններըը կը ծանուցվին դիւանին կողմէն և երրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կ՚ըլլայ։

Իրեք պատահի որ քուէները երկու անձի վրայ հաւասարապէս բաժնվին, այն ատեն երկուքին մէկը վիճակով կ՚ընտրվի։

Իրեք ընտրեալը վարդապետ ըլլայ, անմիջապէս Իջմիածին կը ղրկվի եպիսկոպոս ձեռնադրվելու համար։

117. Ընտրութիւնը լմընալէն ետքը տեղեկագիր մը կը շինվի զոր բոլոր բաղմականք կ՚ստորագրեն, և որոյ օրինակը՝ Ընդհանուր ժողովին կնքովը կնքեալ՝ յառն ժողովին միջնորդութեամբը Ս. Աթոռ կը մատուցվի որ կ՚անուանէ ըզՊատրիարքը։

118. Նորընտիր Պատրիարքը՝ դէմ Ս. Աթոռ չը ներկայացած՝ Իրկրէյշ մէջ և Ընդհանուր ժողովին առջեւ հանդիսաւոր ուխտ կ՚ընէ սոյն օրինակ. «Ես՝ Ես Աստուծոյ և առաքելոյ Աղբիս Հայոց ներկայացեալ Ընդհանուր ժողով՝ ուխտիմ Հաւատարիմ մնալ Աքսայեն Սահմանադրութեան և հակել բոլոր սրտով նորին անթերի գործադրութեան»։

119. Իրեք Պատրիարքը Սահմանադրութեան դէմ պակասութեան մը մէջ գտվի, ամբաստանութեան առակ կ՚ընկնի։

120. Պատրիարքին վրայ ամբաստանութիւն մը՝ կամ ազգային երեսփոխանապ կոզմէն, կամ Կաթոլիկ ժողովին և կամ Բողոքական ժողովին կոզմէն կրնայ ըլլալ։

Իրբ այսպիսի ամբաստանութիւն մը պատահի, Ընդհանուր ժողովը կը գումարվի և իր մէջէն քննիչ յանձնաժողով մը կը կարգէ 21 հոգիէ բաղկացեալ (7 եկեղեցական, 7 Թաղական երեսփոխան, 7 գաւառական երեսփոխան) որոնք ամբաստանօղաց մէջէն պէտք չէ որ ըլլան։

Քննիչ յանձնաժողովը՝ ամբաստանութիւնը քննելով, տեղեկագիր կազմ ապ Ընդհանուր ժողովին որ գաղտնի քուէարկութեամբ կ՚որոշէ խնդիրը։ Իրեք այս որոշումը՝ որ բաւարարեալ պէտք է ըլլայ որոշման կոզմը քուէ տուօղ ժողովականներէն, Պատրիարքի հրաժարումը վճռած ըլլայ, երկու ժողովոց առեն-

պետները Պատրիարքին կը ներկայացնեն որ յայնժամ Ազգին որոշ կամքը տեսնելով հրաժարականը տալու պարտաւորեալ է։

121. Հրաժարեալ Պատրիարքը վճռակատար եպիսկոպոսաց կարգը կ'անցնի և ըստ այն կը տնօրինվի Ասաւն Ժողովին կազմէն։

Ը. Ընտրութիւն Ընդհանրապետ

122. Ընդհանրապետի ընտրութիւնը գաւառական Ընդհանուր Ժողովին մէջ կ'ընէայ նոյն և նման Պատրիարքի ընտրութեան։

Սոյն ընտրութիւնը գաւառական Ասաւն Ժողովին միջնորդութեամբ վաւերական տեղեկագրով կը ծանուցվի Պատրիարքին որ կեդրոնական Ասաւն Ժողովին հաւանութեամբը կ'անուանէ զԸնդհանրապետը։

123. Յետ Ընդհանրապետը Սահմանադրութեան դէմ պակասութեան մը մէջ գտնվի, ամբաստանութեան տակ կ'ընկնի Գաւառական Ժողովոց կողմէն. և քննութիւնը ըստ 120 յօդուածին ըլլալով գատը կեդրոնական Ասաւն Ժողովին մէջ կը տեսնվի որ ըստ պատշաճին կը տնօրինէ։

Թ. Ընտրութիւն Հոգեւորականաց եւ Խորհրդականաց

124. Ընդհանուր Ժողովը կ'ընտրէ Աշխարհական ու Հաղաքական Ժողովոց անդամները։

Հաղաքական Ժողովը կ'ընտրէ Տեսուչ Խորհրդոց անդամները բաց ի Գատաստանական Խորհրդէն որոյ եկեղեցական անդամները Աշխարհական Ժողովը կ'ընտրէ։

Գատաստանական Խորհրդին անդամները 40 տարին լրացուցած և ամուսնացեալ անձինք պէտք է որ ըլլան։

Թաղին ընտրողները կ'ընտրեն Թաղական Խորհրդ-

դին անդամները Թաղին Ընտրողական Ժողովին ներկայութեանը, ըստ ընտրական օրինաց։

Այնպէս կ'ընէայ և գաւառներու մէջ Ժողովականաց և Խորհրդականաց ընտրութիւնը։

125. Ընդհանուր Ժողովը հինգ տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվի և ապրիլի սկիզբը կը նորոգվի։

Աշխարհական ու Հաղաքական Ժողովներն ու Տեսուչ Խորհուրդները ամէն տարի մարտի վերջը կիսով չափ միայն կը լուծվին և ապրիլի սկիզբը կը նորոգվին (1)։

Թաղական ու Թեմական Խորհուրդները չորս տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվին և ապրիլի սկիզբը կը նորոգվին։

Այնպէս կ'ընէայ և գաւառներու մէջ Ժողովոց և Խորհրդոց նորոգումը։

126. Ազգային երեսփոխանները ու Թաղական և Թեմական Խորհրդականները անմիջապէս վերընտրելի են նոյն պաշտօնին համար։ Իսկ Աշխարհական ու Հաղաքական Ժողովոց և Տեսուչ Խորհրդոց անդամները՝ որ անմիջապէս վերընտրելի չեն նոյն պաշտօնին համար, ուրիշ որ և է պաշտօնի համար վերընտրելի են։

Այնպէս է նաև գաւառներու մէջ գաւառական պաշտօնեաներուց վերընտրութիւնը։

127. Մինչև անգամ որ Ազգային ժողովները ու Խորհուրդները նորոգվին, նորընտիր անդամոց ցանկը օրագրի միջոցով պէտք է հրատարակվի։

---

(1) Առաջին անգամին միայն՝ Ժողովականաց և Խորհրդականաց կէսին լուծումը վիճակով կ'որոշվի։

ԳԼՈՒԽ Դ.

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

1. Պատշաճական յանձն

128. Ամէն ժողով և խորհուրդ պէտք է ունենայ առեղական դիւան մը, որ կը բաղկանայ առեղապետէ մը, առեղադպրէ մը և պէտք եղածին չափ փոխառնորդներէ ղորունք ժողովին իր մէջէն կ'ընտրէ։

Ընդհանուր ժողովին գումարելուն առեղապետութեամբը և կրտսերագունին առեղադպրութեամբը նիստ կ'ընէ և իր դիւանը կը կազմէ։

129. Առեղապետին պաշտօնն է՝ առեանը բանալ և գոցել, առեանին ներքին վարչութիւնը անօրինել, վիճաբանութիւններն ուղղել, կանոնագրութեանց պահպանութեանը հսկել և առենաբաններուն կարգով խօսք տալ։

130. Առեղադպրին պաշտօնն է՝ առեանին մէջ խօսվածները գրի առնել, եղած որոշումներն ու տրված պատճառաբանութիւնները ճշդիւ նշանակել, և առենագրութիւնը հեռաբեալ առեանին ներկայացնել, և ամէն առեանին խնդիրներու ցանկը պատրաստել առաջնութեան կարգով։

131. Առեղապետին ու առեղադպրի փոխանորդներուն պաշտօնը պիտի ըլլայ անոնց ներկայ չգտուած առեաններուն մէջ զանոնք փոխանակել։

132. Առեղական դիւանը տարին անգամ մը կը նոգվի և անդամներն անմիջապէս վերընտրելի են։

Ընդհանուր ժողովին դիւանը 5 տարին անգամ մը Ընդհանուր ժողովին հետ կը նորոգվի։

133. Կրօնական ու Վարչական ժողովներն ու Տեսչ խորհուրդները շաբաթն անգամ մը կը գումարվին ի Պատրիարքարան որոշեալ օր մը։

Առեղապետները կրնան ուրիշ օր մը կամ ուրիշ տեղ մը արտաքոյ կարգի ժողով կամ խորհուրդ գումարել ըստիպողական պարագայի մէջ։

Ընդհանուր ժողովին գումարվելու օրը լրագրի միջոցով պէտք է ծանուցվի գոնե երեք օր առաջ։

134. Յանձ մեծագոյն մասն ներկայութեան նիստը անբաւական կը համարվի և խնդրի մը վրայ վերջնին որոշում չը կրնար տրվիլ։

135. Յանձ առեղապետի և առեղադպրի առեան չը կրնար բացվիլ։

Երբ մեծագոյն մասը ներկայ ըլլալով՝ առեղապետը կամ առեղադպիրը և անոնց փոխանորդները ներկայ չ'ըլլան, երիցագունին առեղապետութեամբն ու կրտսերագունին առեղադպրութեամբը կը բացվի առեան։

136. Առեղապետէն խօսք չը խնդրած և չ'առած ներելի չ'է խօսիլ առեանի մէջ։

137. Խնդիր մը առաջարկելու ատեն՝ նախ խնդիրներուն ցանկին մէջ պէտք է գրել այդ խնդիրն ու իր անունը, և երբ կարգը գայ, այն առեն իրաւունք ունի խօսելու նոյն խնդրին վրայ և ժողովը ղանի մտիկ ընելու պարտաւոր է։ Այս կարգը այն առեն միայն կրնայ փոխվիլ՝ երբ ուրիշ խնդիր մը պատահի որոյ ըստիպողական ըլլալը ժողովն որոշէ։

138. Խնդիր մը լաւ մը քննվելէն, վիճաբանելէն և անոր վրայ ամենուն կարծիքը առնվելէն ետքը պէտք է որ քուէի դրվի, և որոշումը ներկայ գտնվող անդամներուն մեծագոյն մասին հաւանութեամբը կը տրվի։

139. Այրը ձայները հաւասար գան՝ եթէ նախագահը ներկայ է՝ նախագահին կողմը կը հակի որոշումը. եթէ ոչ՝ առեւնապետին կողմը։

140. Խառն ժողովին մէջ խնդրի մը որոշում տալու համար պէտք է որ երկու ժողովները զատ զատ քուէարկութիւն ընեն. երբ երկուքին ալ մեծագոյն մասը մի և նոյն որոշումին ըրած ըլլայ՝ խնդիրը կը լուծվի. իսկ հակառակ դիպուածի մէջ անհամաձայնութիւն կը սեպվի երկու ժողովոց մէջ, և անօրէնութիւնը Ընդհանուր ժողովին կը մնայ (Ցօդ. 1, 12)։

141. Ժողովներուն մէջ մր և է ընարութիւն, դատաստան, ազգային տուրքի հաստատութիւն, Սահմանադրութեան վերաքննութիւն, գաղտնի քուէարկութեամբ կ'որոշվի. նոյնպէս կ'ըլլայ նաև ուրիշ մր և է խնդրի մէջ երբ գաղտնի քուէարկութիւն պահանջվ ըլլայ։

142. Խորհրդոց առեւնապետները կրնան միևնակ կամ ըստ հարկին խորհրդական մ'ալ հետ առնելով ուղած առեւնին Քաղաքական ժողովին մէջ ներկայանալ և իրենց խորհրդին վերաբերեալ գործերուն վրայ խօսիլ, բայց քուէ չ'ունենին։

143. Ժողովներու և խորհուրդներու մէջ ամեն նիստ իր առեւնագրութիւնները պէտք է ունենայ, զոր ներկայ գտվող անդամները կ'ըստորագրեն։

Ընդհանուր ժողովին առեւնագրութիւնները Պատրիարքն ու դիւանին անդամները միայն կ'ըստորագրեն։

Ընդհանուր ժողովին անդամները ներկայութեան լուծքի մը վրայ կ'ըստորագրեն ժողովարանը մտած առեւնին։

144. Ամեն ժողով և խորհուրդ իր տեսչութեան կամ մատակարարութեան վրայ տարեկան ընդհանուր տեղեկագիր պէտք է որ տայ իր համարառու ժողովին կամ խորհրդին։

Այն տեղեկագիրը բոլոր անդամոց կողմէն ըստորագրեալ պէտք է ըլլայ։

145. Այրեք անգամ իրարու վրայ առանց բանաւոր պատճառ մը գրավ իմացնելու ներկայ չը գտվող ժողովականին կամ խորհրդականին անունը առեւնագրութեան մէջ կը յիշվի, և ժողովին կամ խորհրդին կողմէն առեւնապետը անոր կը գրէ չը գալուն պատճառը հարցնելու համար. եթէ պատասխան չ'ընդունի ժողովը, կամ ընդունած պատասխանը զինքը գոհ չ'ընէ, երկրորդ գրութեամբ ժողովին դատաստը կ'իմացնէ անոր և կը յորդորէ որ յաջորդ առեւանին ներկայ գտվի. եթէ նորէն չը ներկայանայ, այնպիսին իր ազգասիրական պարտաւորութիւն ըրած ըլլալով՝ իր զանցառութիւնը հրաժարական կը սեպվի. եթէ այսպիսեաց թիւը մինչև 3 հասնի, ժողովին նախագահը կամ առեւնապետը անոնց տեղ զանոնք ընտրող ժողովէն ուրիշ անդամներ կը խնդրէ (1)։

Նոյնը պէտք է ընէ երբ նոյն թղթակ ժողովականք կամ խորհրդականք պակսին թէ՛ վախճանման և թէ՛ հրաժարման պատճառով։

ԳԼՈՒԽ Ե.

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

146. Սահմանադրական ժողովով որոշեալ Ազգային Սահմանադրութիւնը առաջին անգամ առժամանակեայ ընդհանուր ժողովով կ'ընդունվի ու կ'ըստորագրվի, և յետոյ սահմանադրականապէս կազմեալ Ընդհանուր ժողովը դարձեալ ըստորագրելով Ազգին կողմէն կը վաւերացնէ զանի և վճռաբար կը հաստատէ։

1 Այս որոշումը Ընդհանուր ժողովին վերաբերեալ չէ։

Սահմանադրութեան ըստորագրեալ բնագիրը ազգային Ժողովին մէջ կը պահվի և օրինակը ազգային Թեմերուն կը հրատարակվի։

147. Ազգային Սահմանադրութիւնը ազգովին ընդունվելէն ետքը՝ Ազգին որոշ ատեայներ կամքը կը տեսվի, և անոր պարտականած ուղղադրութիւնքը անխոտորելի են ազգային Պարլամենտին կողմէն։

Իսկ՝ երբ ազգային Պարլամենտը Սահմանադրութեան գործադրութեանը մէջ երկար փորձով ինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ, ինքը միշտ համեմատ վարվելով անոնց, իր ընթացքին երբորդ տարուան վերջերը միայն քննութեան առաջարկութիւն կրնայ ընել Ընդհանուր Ժողովին։

148. Երբ Ընդհանուր Ժողովը վերաքննութեան առաջարկութիւնը ընդունի, Պերաքննութեան Ժողովմը կը կազմե սա կերպով.

Կրօնական և Քաղաքական Ժողովներէն չորսական հոգի, Տեսուչ խորհուրդներէն երեքական հոգի, և ատոնցմէ դուրս 10 հոգի ղոր Ընդհանուր Ժողովը իր ժէջէն կամ դուրսէն կ'ընտրե, ընդ ամէնը 30 հոգի։

149. Պերաքննութեան Ժողովը ազգային Պարլամենտին կողմէն եղած դիտողութիւնները միայն քննութեան տակ առնելով, պէտք եղած փոփոխութիւններըը կ'որոշէ և Պատրիարքին միջնորդութեամբը Ընդհանուր Ժողովին կը ներկայացնէ։

150. Սահմանադրութեան վերաքննութիւնը Ազգին համար անընդունելի է, երբ հիմնական ըսկզբանց տրամադրութեանցը համաձայն չ'ըլլայ, այն ըսկզբանց՝ որով ապահովեալ են Ազգին իրաւունքները, իրաւունք՝ որոնց վրայ Ազգն անգամ չ'ունի իշխանութիւն անօրէնութեան դէմ միանգամայն պատրաստ են։

ՎԵՐՋ

ՑՕԼԻՍ

Թ.	Տեղ	Եկեղեցի	Երեսփոխանաց Թիւ
1	Գումքափու	Մայր Եկեղեցի	24
2	”	Ս. Յարութիւն	2
3	Կէտիկփաշա	Ս. Յովհաննէս	6
4	Չէնկեաքեու	Ս. Թադէոս և Բարթողոմէ	4
5	Յամանթիա	Ս. Գէորգ	15
6	”	Ս. Յակոբ	1
7	Նարլըքաքու Պաքրի գեղ Ն. Սահֆան Ն. Նօրկի	Ս. Յովհաննէս Ս. Ստեփան Ս. Աստուածածին Ս. Աստուածածին	2
8	Թօփքաքու	Ս. Նիկողայոս	2
9	Քարակէօմրիւկ	Ս. Ո. Ոսկեբերան	1
10	Պալատա	Ս. Հրեշտակապետ	15
11	Նիշիպ	Ս. Աստուածածին	1
12	”	Ս. Եղիա	1
13	Խասգիւղ	Ս. Սահֆան	15
14	Քասըմփաշա	Ս. Յակոբ	1
15	Ներսա Պալաթիա	Ս. Երրորդութիւն Ս. Լուսաւորիչ	17
16	Պէշիկթաշ	Ս. Աստուածածին	10
17	Օրթագիւղ	Ս. Աստուածածին	14
18	Քոռուչէշմէ Խասը Պիրգիւն Նորգիւղ Պէշիքտաերէ	Ս. Խաչ Ս. Սանդուխտ Ս. Երեք մանկունք Ս. Աստուածածին Ս. Հռիփսիմէ	5
19	Պէյքօզ Քանափըլը	Ս. Նիկողայոս Ս. Ս. Աբաքեղոց	1
20	Քուզկունճուք և Իճատիէ	Ս. Լուսաւորիչ	2
21	Ոսկիսար	Ս. Կարապետ	8
22	” Ալեմտաղ	Ս. Խաչ Ս. Նշան	11
23	Քադըկեղն	Ս. Թադէոս	1
24	Քարթալ	Ս. Նշան	1
			160

Ա-ն ընդհ. թիվ		Երեսփոխանաց թիւ
1	Երուսաղէմ	1
2	Նիկոպոլս	1
3	Ներիա	1
4	Սիսդոս, Տարսոն, Սիս	1
5	Սարաշ	1
6	Հաճին	1
7	Օֆիճան	1
8	Սահանա	1
9	Նիկոսիա	1
10	Տիգրանակերտ	1
11	Փիւրտիատան	1
12	Պալատսա	1
13	Խաղէշ	1
14	Վան	3
15	Ղզլճամուր	1
16	Կարս	1
17	Մուշ	2
18	Երզընկա	1
19	Խաբերդ	1
20	Կարին	2
21	Բայբերդ	3
22	Ըրզրում	1
23	Խալտ	1
24	Գեմլի	1
25	Կին	1
26	Տիվրիկ	1
27	Մալաթիա	1
28	Կիւրին	1
29	Ընթէպ	1
30	Փիլիս	1
31	Շապին քարահիսար	1
32	Աբեստոխա	2
33	Նէոգեսարիա	1
34	Սարսըման	1
35	Ամասիա	1
36	Տրապիզան	1
37	Ճանիկ	1
38	Նօվզատ	1
39	Կեռասիա	2
40	Պալատսիա	1
41	Կոտիոնա	1
42	Օմիւռնիա	1
43	Պուրսա	1
44	Պանդըրմա	1
45	Կիւկամիդիա	3
46	Իսմսմիթ	1
47	Ղրիանուպոլիս	1
48	Վալտրիա	1
49	Անդրիանուպոլիս	1
50	Վառնա	1

Ընդ ամէնը 60

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՆԴԱՄՔ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՍԵՐԱՍՏԻՈՑ

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ
ԴԱՒԱԹԻՈՑ

Տ. ԵՐՆՏԻՒ ՓԱՀԱՆԱՑ
ԽԱՍՏԻՈՒԼ

Տ. ՑՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՀԱՆԱՑ
ՓԱՓԱԶԵԱՆ

Տ. ՑՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՀԱՆԱՑ
ՀԻՒՆԲԵԱՐՊԵՏԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐՐԻ	ՂԱԼԱԹՕՆ Մ.
ՈՀՆԱՆՆԱՆ Գ.	ՆԱՂՈՒՊԵԱՆ Ե.
ԻԹԹԻՃԵԱՆ Կ. Ս.	ՄԻՆԱՍ Մ.
ՄԻՍԱՔԵԱՆ Վ.	ՌՈՒՍԻՆԵԱՆ
ՍԻՒՐՆԵԱՆ Ց.	ՏԻՄՈՐՃԻՊԱՀԵԱՆ Ե.
ՓԻՇՏԸՄԱՃԵԱՆ Ս.	ՓԱՑՍԿՐԵԱՆ Թ.
ՓԹԻԿԵԱՆ Բ.	ՕՏԵԱՆ Գ. Ս.

Գալաթիա, 20 մայիս 1860.

Ազգային Ընդհանուր ժողովին միաձայն հաւանութեան ընդունված և ըստորագրված՝
Կ. Պոլիս, ի Պատրիարքարան Հայոց.
24 Մայիս 1860.

Գին 5 ղրուշ

Սեփականատէրն ազգային մասուխիւն։



ԱԶԳԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

ՆԻԶԱՄՆԱՄԱԿԻ

ՕՐԱԼԱԿԹԻ ԲԱՐԲԱՌՈՎ

Կ· ՊՕԼԻՍ—ԱԹԱՆՊՕԼ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ· ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

1863—١٢٧٩

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵՒՆ

Տ· Տ· ՄԱՏԹԷՈՍԻ Ա·

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՏԵԳԱՊԱՀՈՒԹԵՒՆ

ԳԱՆՁՐԱԳՐԱԿԱՆ ԸԹՈՒՈՅ ԿՈՄՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ· ՍՏԵՓԱՆՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՆԻԿՈՄԻԴԻՈՅ

ՅԱՆԿ

Ա բաժին գործոց Տեառն Թեան աւ Պատրիարքական Տեղապահ գրված նամակին օրինակը · 1

Խորհրդոյն Դրան և Ազգային Յանձնաժողովից աւ կայսերական կառավարութեան ուղ-
ղած Յայտագրին օրինակը · · · · · 2

Խորհրդոյն Դրան Հրամանագրին օրինակը · · · · · 8

Յառաջաբանութիւն · · · · · 9

Հիմնական սկզբունք · · · · · 11

ԳԼՈՒԽ ԲԱԺԻՆ· Ազգային կեդրոնական վարչութիւն · · · · · 15

Ա· Պատրիարք կաթուղիկոսական · · · · · 15

Ընտրութիւն և հրաժարում · · · · · 15

Պաշտօն և պարտաւորութիւնք · · · · · 18

Բ· Պատրիարքական Դիւանատուն · · · · · 20

Գ· Պատրիարք որպէս նրբատոհմի · · · · · 21

Դ· Ազգային Կրօնական ժողով · · · · · 24

Ե· Ազգային Քաղաքական ժողով · · · · · 27

Զ· Քաղաքական ժողովս կազմին կապուած Ազգային խորհուրդք և Հոգաբարձութիւնք · 29

1· Ուսուցչական խորհուրդ · · · · · 29

2· Տնտեսական խորհուրդ · · · · · 30

3· Դատաստանական խորհուրդ · · · · · 32

4· Վանօրէից խորհուրդ · · · · · 32

5· Նրանց հոգաբարձութիւն · · · · · 34

6· Կանոց հոգաբարձութիւն · · · · · 35

7· Հիւանդանոցի հոգաբարձութիւն · · · · · 36

Է· Թաղական խորհուրդք · · · · · 37

Ը· Ազգային Ընդհանուր ժողով · · · · · 39

Կազմութիւն և պարտաւորութիւնք · · · · · 39

Ընտրութիւն Եկեղեցական Նրբափախանաց · · · · · 41

Ընտրութիւն Աշխարհական Նրբափախանաց · · · · · 42

Ա· Ընտրելի լինան և ընտրելու լինան պայմանք · · · · · 42

Բ· Ընտրութեան · · · · · 43

Գ· Քուէարկութիւն · · · · · 46

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ· Ընդհանուր կանոնք ժողովից և խորհրդոց · · · · · 49

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ· Ազգային տուրք · · · · · 51

ԳԼՈՒԽ ՀՈՐՐՈՐԴ· Ազգային Պատուական վարչութիւն · · · · · 52

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ· Վերջաբանութիւն Սահմանադրութեան · · · · · 54

Պատրիարքական տեղապահի կնքով չէ վաւերացեալ
օրինակաց ճշդութեամբը երաշխաւորեալ չէ։

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ԴՈՒԹԻՆ
ՏԵՂԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԴՈՒՐՏԱՑՈՑ
ԹՈՒՐՀԱԲԱՐ 191

ԱՌ ԽՈՀԵՄԱՆՔՈՒՐԴ ՏԵՂԱՊԱՀԱ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Խոհեմութիւնդ և սիրելի Քրիստոս։

Ուրախութեամբ մեծով մը ընդունեցանք Կայսերական Հրամանագիրը որ պահանջ, որ ամէն Հաստատութիւն իր վերջացած առաքելութեան հետևանքին ու պատճառին համեմատ ինքզինքը պարզել պայմանաւոր մէջ ի քննութիւն առնուի. ժամանակին բնութիւնը և քաղաքական հանգամանքները պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ որոշէ, ու Ներքին Գործոց Վեհ. Նախարարութեան ներկայացնի. ու Հոգևորական Վեհ. Ընդհանուր Ժողովս հաստատութիւնը իբրև Հաստատութեան ապահոված վիճակին ու նոր դիրքին հետ համաձայնութեան մէջ գտնի։ Ուստի Հայոց Ազգին համար պատասխանատու անձնիկ բազկացած Հանձնաժողովի մը ձևով Պատմութեան մը պատրաստութեան ցաւ։ Ինչպ միանգամայն պատշաճ համարեցաք որ Սորգ Պատրիարքի օրով կազմուած Կանոնագրի մասին Հիմնական անդամներէն մին ալ Հայոց Ազգային Ընդհանուր Ժողովին ներկայացնենք, քանի որ առաւելութեամբ նպատակ ունի նոյն բանը կատարել Հանձնաժողովի մը ընտրելու, և վերոյիշեալ ուրուագիծը անոնց մէջ ալ անոր ցոյց տալու։ Վստահ ենք նկատելիք որ ակազ Հրամանագրի ամանիներէն երկու երեք օրուան մէջ ղրկելով, յիշեալ Հանձնաժողովին ընտրութիւնը ընել ասց, և անոր Ներքին Գործոց Նախարարութեան հետ կապակցութեամբ Պաշտօնական հետ միասին գործը Հասնի յաջողութեամբ հարկ եղած ուղղութեամբ կատարուելուն շնորհ ընկալ, կը հնդրենք նաև որ վերոյիշեալ կէտերուն ընտրած եօթն անձանց անուններն ալ յառաջագոյն մեզ ուղարկէք։

(Աթոռագրեալ)

1862 Փետրվար 14 ԱՍԻ

ԳԱԶԱՐ ԸՆԴ
ՆՈՒՅՐԵՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱՐԱՆԻՑ
ԵՐԵՒԱՆ 1971

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԻՄԱՑՈՒՄԸ ԱՄԲ ՏԻՐԱՑՅԱԹԱԼՈՒԱ ԽՓԻՆՏԻՑԻ

Տիրայր եպս. Սիմեոնեան Հ. Փիհեռան

Խոյահամ փիլոնը Աթոռ հնարմունէ՝ հետ ձեռնամերձ պիտի մնայուն Հրնեռ իրենեռ իսիհլասած վիճակները հաղորդելու մասնիկներ ենեռով իսիհլասը իրէ, վասի վատարի միաւորելեմ վերջացած մասը վերջացնելու համար իսիհլասը պիտի միացաբար Հայաստանը պիտի միացաբար պատրաստ ենեռ, պատրաստ ենեռ Հայրապետական Վեհարանի Հայրապետական Վեհարանի Հայրապետական Վեհարանի

Կայսերական Ցերեմիանը, ի վառ-
ղուց անտի իր արդարատեր հովանա-
ւորութեան ներքեւ դանուող զանա-
զան Ազգաց՝ կրծքէն սղոսուելուն և
առանձին գործոց համառար վերլուծութեան
համար առանձնաշնորհութիւններ ու
արտօնութիւններ շնորհած է։

Այս արտօնութիւնները թէպէտ
և ըստ ակղբանց ամէն ազգաց համար
միօրինակ, բայց միանգամայն ամէն
մէկուն կրօնական սեպհական կանո-
նաց և սովորութեանց համեմատ տնօ-
րինուած ըլլալով, իւրաքանչիւր Ազգ
դանդաղ իր բնիկ սովորութեանց և ըն-
թացիկ համեմատ ի գործ դնելով վա-
յելած է։

Հայոց ազգը միւս ազգաց պէս
մինչեւ յայսօր Պատրիարք մը ունեցած
է, որ Ցերեմեան կոչմէն իբր Նա-
խագահ Պատրիարքական վարչու-
թեան ճանչցուած է, և ներկայացու-
ցիչ Ազգին ու Մինչորդ գործադրու-
թեան կայսերական հրամանաց. և որ
ի վաղուց անտի հասարակօրէն եկե-
ղեցական դասէն ընտրուած է, Ազգին
զանազան կարգի անհատներէն բաղ-
կացեալ Ընդհանուր ժողովի մը ձեռնօք

Պատրիարքը իր պաշտօնին մէջ որ
է Ազգին նախագահել և անոր օգտի-
ցը հսկել, Ազգին Ընդհանուր ժողո-
վոյ միջնորդութեամբ ունեցած ազ-
դեցութենէն ու վերաստեղծութենէն
բնաւ մէկ ժամանակ ազատ եղած չէ.
և ասոր ապացոյցն է, Պատրիարքին ա-
մեն ժամանակ Ընդհանուր ժողով հը-
րաւիրելն ու գումարելը, և կամ՝ ըստ
պահանջման գործոց կամ բարձրագոյն
Դրան բացորոշ մէկ հրամանին վրայ
կարեւոր խնդրոյ մը ծագած առենը՝

Պատրիարքին Դրան և Ազգային ցանկութեանց
բաւարար կատարութեան համար
ոտ կոչուելուն հարա-
տած ցաւագին ոչինչն է։

Պատրիարքին Դրան և Ազգային ցանկութեանց
բաւարար կատարութեան համար
ոտ կոչուելուն հարա-
տած ցաւագին ոչինչն է։

Պատրիարքը ինքն ալ Ընդհանուր ժողովի
իւր Մէկնչեր Խորհրդոց ընտիրոց գլխոյն
պատրիարքին Դրան հրովարտակաւ
հաստատուած ոչինչն է։

Ընդհանուր ժողովոյ դիմելն ու անոր
որոշումը ինդրելը։

Հայոց Ազգը՝ ասկէ քանի տարուց
ի վեր կայսերական Ցերեմեան ե-
նէն ինդրելով որ Պատրիարքարանի մէջ
Պատրիարքին նախագահ ատենին երես
երկու ժողով հաստատուի. մէկը
կրօնական, մին ալ քաղաքական և որ-
ոշ հասնոր, որպէս զի Պատրիարքին
պաշտօնատարութեան օրօրանից և
օգնական ըլլան, և Ազգ ին՝ թէ՛ քան
քաղաքականի և թէ՛ քան կրօնականի
մասին կանոններէն և սովորութիւն-
ներէն ո՛ր և է խոտորմանց առաջքը
առնուի։

Երբ այս ժողովներու հաստատուե-
ցան, ապա պէտք մնար ատենատան գործոց
անտեսուած կանոն հաստատ ու՝ քանի մը
խորհրդներ հաստատուել տարկ եղաւ։

Բայց պատմական. Ազգ պէտք պաշտօ-
նատարաց ամեն մէկուն իշխանու-
թիւնը և պարտաւորութիւնները ո-
րոշապար սահմանուած չէին, յայտնի
էր որ Ազգին միաձակը բարեկարգե-
լու մասին եղած այս չանքերը, Ազ-
գային վարչութեան գանազան մա-
սանց մէջ, նաեւ յիշեալ վարչու-
թեան և Ազգին մէջ անպակաս պա-
ռակտումներ ծագելուն առիթ պիտի
տային. և ատ ալ ամեն կողման վե-
րաբերեալ իրաւանց գործադրութեան
մասին շատ մը անկարգութիւններ, և
Ազգային վարչութեան մէջ ալ շփո-
թութիւն և խառնաթափութիւն պիտի
պատճառէր։

Ահա՝ այս չկարգութեանց և երկ-
պառակութեանց պատճառները վեր-
դնելու, և ամեն կողման պահանջ-
մանց միաւորակարգութիւնը առնելու
նպատակաւ, կայսերական Ցերեմեան
նը իր բոլոր հպատակաց վրայ ու-

հասնելու ձգտելով՝ նախ ամեն կող-
մէ ինդրեց որ Ազգային ժողովոյ ան-
դամներ ընտրուին, որոնք Պատրիարքին
հետ միասին Ազգին գործոց վերլուծու-
թեան ձեռնարկեն։

Ազգային ժողովոյ անդամներ ընտրուե-
ցան, և Պատրիարքին հետ միասին
Ազգին գործոց վերլուծութեան ձեռնարկեցին։

Ազգային ժողովոյ անդամներ ընտրուե-
ցան, և Պատրիարքին հետ միասին
Ազգին գործոց վերլուծութեան ձեռնարկեցին։

նեցած հայրական խնամքը՝ Ազգիս մէջէն խառն ցանձնաժողով մը կազմել հարկաւոր դատեց, որպէս զի Հայոց Ազգին կրօնական և բազմադարեան բնիկ սովորութեանց, նաեւ ի վարդս անոնք ընդունուած ընթացքին համաձայն Սահմանադրութիւն մը պատրաստուի։

Այդ՝ խառն ցանձնաժողովը պատշաճ կը դատէ որ վանդակեայն հաստատ բաթթրագոյն Դպրեվանքս ալ ներառուած Սահմանադրութեան տրուածոյ ծիրն հասնի՝

Ա. Պատրիարքին՝ ի մէջ ցեղակիցներուն և Ազգին միջնորդ ըլլալու պաշտօնը բոլոր առաջին դիրքին նման։

Բ. Ընդհանուր ժողովը կազմելու համար պէտք է որ ամէն կանոնաւոր հիմնարկութիւն նորոգուի։ Իր Ազգային երեսփոխանները ընտրելու համար (բայց որովհետեւ ընտրողներուն ցուցակներ չկան՝ ինչ որ առաջ էր), ըստ Ազգին մէջ գոյութիւն ունեցող կանոնակէն գործադրելի եղածին՝ ամէն ոք իր ընտրելիքը կրնայ ընտրել։

Եւ որովհետեւ դուրսերը բնակող Հայ ժողովուրդները իրաւունք կը դանդատին թէ պատրիարքարանի ոյշադիմելուն խորհրդակցութեան և մասնակցութեան կարօտ կենալն և մնալնակցութեան կարօտ կենալն և մնալնակցութեան կարօտ կենալն և մնալ

չու թեան խորհուրդներուն ամեն մէկը՝ ո՛ր ժողովոյ վերաբերի նոյն ժողովոյն . և Ազգային ժողովները՝ ընդհանուր ժողովոյն . և պատրիարքը մէկ կողմէն կայսերական Ցէրատեան , և միւս կողմէն (ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ) Ազգին պատասխանատու ըլլան :

Ը. Եւ օրովհետեւ կայսերական Ցէրատիւնը Հայոց Ազգին հանուր տալու հրամաններուն դարձադրութեան բնական միջնորդ և Ազգային վարչութեան գլուխ պատրիարքը կը ճանչնայ և անոր կը դիմէ իր հարցում ները . ևթէ Ցէրատիւնը պատրիարքին հրամայէ որ հարցում յանգոյն վտոյ իր (այսինքն պատրիարքին) կոտքը յայտնէ,պատրիարքը՝ իր նախագահութեամբ գործով ժողովներուն որոշման համեմատ չարժի . իսկ ևթէ Ազգին կարծիքն առնելով Ցէրատեան հարցուրդել հրամայէ , այն ժամանակ պատրիարքը ընդհանուր ժողով հրաւիրէ , և այն ժողովոյն վերջնական որոշումնքը յայտնէ Ցէրատեան :

Թ. Ազգային վարչութիւնը երկու տեսակ պարտաւորութիւն ունի , որոց առաջինն է առ կայսերական Ցէրատեան . այս է՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել , և Ազգին թէ՛ ընդհանրապէս և թէ՛ իւրաքանչիւր ամեն մէկ անհատներուն իրաւանց և արտօնութեանց՝ Ցէրատեան կողմէն պահպանութիւնը ապահովցնել : Երկրորդն է առ Ազգն . որ է ճշմարտապէս գիտութեամբ և հայրաբար վարուիլ : Երբորդն է առ Աթոռն Էջմիածնի . այն է՝ հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ :

Ահա՛ սոսկք են Սահմանագրութեան այն կէտերը զոր խառն ցանձնաժողովը պատրաստ կը գտաւ , և զոր կը հաստատէ միւս ցանձնաժողովը , որ Ձեր վսեմութեան հրամանին համեմաստ՝ ի դիտաց Ազգին Սահմանադրութեան վրայ իւր դիտողութիւնները բարձրագոյն Դրան ներկայացնելու համար կազմեցաւ :

իշ պատ նիզամնամէ հագգընտա միւս թ պատասխանը Գազը տալի թագահի իմէ ք իւրե թ էչքիլ վէ ինթ իհապ օրենան Գօմիսիոն թ արաքընտան թ ասդ դ ըլընմիշ օրնագրէ , օ պատաէ վէ հէր հատէ էմու ֆէրման հագրէթի մէնկէհուլ էմրին տիր :

Ի Կ. Գոլիս 16 փետրվար 1862. Ցի ՀՅ Շաբան ՈՀՀՈ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ (ԻՀՂՐԵ)

ԱՆԴԱՄԱԿ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ (ԳԱՊՈ ԱԼԻ ԳՕՄԻՍԻՕՆԸ ԱԶԱՍԸ)

ՍՏԵՓԱՆՆՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ , ՏԵՂԱԿԱԼ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱՔՈՌՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ՑՕՀԱՆՆԷՍ Վ.ԱՐԴԱՊԵՏ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ՑՕՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ ԻՒՍԿԻՒՏԱՐ Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՑՕՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԻՒՆՔԻԼԱՐՊԷՅԻՆԵԱՆ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱԼԱՏ

ԳԻՒՐԳ ԵՐԱՄԵԱՆ
ՍԵՊՈՒՀԼ Վ.ԻՋԻՆԵԱՆ
ՑԱԿՈԲ ՄՈՒՊԱՀԱՆԱՃԵԱՆ
ՑՕՀԱՆՆԷՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

ՑՕՀԱՆՆԷՍ ՏԱՏԵՈՍԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՕՆ
ՑԱԿՈԲԻԿ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԳԱԲՈՒԱՐ ԿԻՒՄԻՒՇՃԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ (ՄԻԼԼԷԹ ԹԱՐԱՔԸՆՏԱՆ ՄԻՒՆԹԷՒԱՊ ԳՕՄԻՍԻՕՆԸ ԱԶԱՍԸ)

ԱՂԱԹՕՆԵԱՆ ՄԿՐՏԻՉ
ԱՍԼԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ
ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԱՆՈՒԿ
ՄԻՆԱՍԵԱՆ ՄԻՆԱՍ
ՌՈՒՍԻՆԵԱՆ
ՍԻՒՐԻՆԵԱՆ ՑՕՀԱՆՆԷՍ
ՕՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՐԻՆԱԿ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ
ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ԴՐԱՆ

Աւս խոհեմաբարդ Տէրպատրոն
Պատրիարքին՝ Հայոց

Հայոց Պատրիարքարանի վիճակին և վարչութեան բարեկարգութեանը վրայօք, ասկէ առաջ Բարձրագոյն Դուռը կարմուած Ծանձնաժողովին դրի առած Սահմանադրութիւնը՝ լուկ աշխարհական գործոց վերաբերեալ քանի մը կէտերը սրբագրուելէն ետքը, վերահաս Աւրքային մասնագրութեան, և Նորին կայսերական վեհափառութեան կողմէն ընդունուելով, պարտական նիւթերուն այսուհետեւ կանոն բռնելու Զեր Սրբազնութեան յանձնելու Աւրքանի հրամանը չնորհուեցաւ։

Ուստի յիշեալ Սահմանադրութիւնը նորոգակերպ առ Ձեզ ուղարկելով՝ կը պատուիրեմ որ պարտնական նիւթերուն այսուհետեւ անկէ դարձադրութեանը հակելով, լուսաբարձրագոյն կամաց Օգոստոսին կայսերի՝ ինչ որ պարտ ու պատշաճ է ի գործ դնելու հոգ տանիք։

17 Մարտ 1863։

ՍՈՒՐԻՑԻ ՊՈՒՏՐԼԹՐԻ ԱԼԻ

Էրմէնի Պատրիգ Գահմմազամը
Տէրսէեթ լու Էֆէնտի.

Էրմէնի Պատրիգխանէսինին իսլահը տեվլ վէ խատրէսինէ տաիր օլաբադ, մուդաասիա Պուպը ալիտե թէչքիլ օլունան գոմիսիոնըն գալէմէ ալուդար նիզամնամէնին սըրի ումուրը տէունէվվէլկի օյան պաղը մնհալլէրի թաահիւտ օլընադուտան ասնբա, հուզուրը մնադի մէվիսը հազրէթի փադիշահիյէ լէեէլ արզ, նէզտի ալիի ճէնապը փադիշահիտե բէհրնի դաւալ օլմասը յիչ՝ մէվսուսը մունագրութեան էֆէնտիին պաաէպին նիզամ՝ իրի իսլահ օլընմասը խուսուսընդն թ ադաքի Ցօսթանդնիյէ հավալէսինէ կիր ու ֆէրմանը Էվս մսլահը հազրէթի Մի լիքանէ մի՛ տալլիգ վէ չէրէֆատ տուր պադրմա չ, վէ մէգքիր նիզամնամէյէ էֆֆէնտին կէօձաէրիվլիչ օլմուգատ. պէր մանիթոդը իրատէի աէնիյէի ճէնապը փադիշահի նիզամնամէյի մէգքիրըն հավի օլասդը մէվսուսըն պատէմա տէսդիգ ու իլվասդըն, ամէ իթմամըդադ, մուդթազիյէմէն իքդաընա հիմմէթի էլչէյէլէը տէյու։

Ֆի ՝ Շեվվալ ՝՝՝՝

ՔԱՂԱՔԱՑԻԱՆՈՒԹԻՒՆ

Օսմանեան Տէբսէեթեան իր Մահմէտական չնդպ հպատակներուն չընդունած պատճառ իթիւնները՝ հատուածար են ըստ ակզպանց ամինոն հատուածը. բայց անոնց դործադրութեանը էզտնակը՝ իւրաքանչիւր Ազգի մէջ ըստ պահանջման սեպհական ստուգութեանց իրնայց, մնացածը կերպով մը օրթնուած է։

Հայոց Պատրիարքը դլխս է իր Ազգին, և մնացած պատրպ անէրու մէջ՝ Տէբսէեթեան հրամանաց դործադրութեան մէջնորդ։ Սակայն Պատրիարքարանի մէջ կրօնական դործոց հատուածը՝ կրօնական ժողով մը, և քաղաքական դործոց համար՝ քաղաքական ժողով մը կան հաստատուած։ Այս երկու ժողովները՝ ի պահանջել հարկին միանալով՝ խառն ժողով կը կազմեն, թէ պատրիարքը և թէ այս երկու ժողովոց անդամները՝ Ազդին պատասխանատու անձնաւորէ թարգման մէկ էնդհանուր ժողովոյ մէջ կ՝ընտրուին։

